

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2(48)

2010 թ.

Գլխավոր խմբագիր՝

Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

1.05.2010

Հանձնված է տպագրության

27.08.2010

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 2 (48)
2010 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92

7 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 1.05.2010
Подписано к печати 27.08.2010

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկ Մարտիրոսյան
ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ԽՍՀՄ 1977Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ 4

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Արթուր Ղամբարյան
ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ9

Գաբրիել Բալայան
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ21

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Մեղրյան
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՂԱՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....29

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ ԵՎ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Варе Енгибарян
ТЕОРЕТИЧЕСКИЕ ПОДХОДЫ ОБСТОЯТЕЛЬСТВ РАССЛЕДОВАНИЯ МАССОВЫХ
БЕСПОРЯДКОВ.....39

Վազգեն Շահնազարյան
ՍԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....44

Կարեն Բիշարյան
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՉԵՑՎԱԾ ՁԵՎ, Թ՞Ե ՍԿԶԲԱՓՈՒԼ.....50

Արթուր Չախոյան
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ55

Սերգեյ Մարաբյան
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԱՆՁԻՆ ՀԱՅՑԿՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՂԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....64

Գուրգեն Քոթանջյան
ՍԱՐԴՈՒՆ ԱՌԵՎԱՆԳԵԼԸ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՍԲ ՈՐԱԿԵԼՈՒ
ՀԱՐՑԸ.....76

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Վարդան Բեժանյան
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔՈՒՄ.....82

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Հրաչիկ Ջիլավյան
ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ
ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.....88

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

Գոռ Մովսիսյան
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ.....98

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԽՍՀՄ 1977Թ.
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

Հայկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

ԽՍՀՄ 1977թ. և Հայկական ԽՍՀ 1978թ. սահմանադրությունների ընդունմամբ պայմանավորված՝ Հայկական ԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության 1984թ. հուլիսի 25-ի հրամանագրով 1961թ. օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ¹: Դրան նախորդել էին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1981թ. օգոստոսի 13-ի հրամանագրով 1958թ. քրեական դատավարության հիմունքներում կատարված փոփոխություններն ու լրացումները²:

«խորհրդային շրջանում քրեական դատավարությանը հատուկ էր ոչ թե մարդասիրության աճի միտումը, այլ սոցիալական արժեքների պատմականորեն խեղաթյուրված սանդղակի ազդեցության տակ ձևավորված հակամարդասիրությունը: Մարդու իրավունքները չդարձան սոցիալիստական իրավական համակարգի միջուկը, համակարգ, որը կողմնորոշված էր ամենից առաջ պետական և հասարակական սեփականության պահպանությանը»³:

Ի դեպ, 80-ական թվականների սկզբին տարբեր աղբյուրներում քրեական գործերի քննության որակի առունով առաջընթաց էր նկատվում: Այսպես, ՀԽՍՀ դատախազության հսկողական բաժնի դատախազ Ակոպովան նշում է. «Հանցավորության վիճակի ուսումնասիրությունը պարզել է, որ 1980 թվականին քրեական գործերի քննության որակը բարձրացել է: Նախորդ տարվա համեմատությամբ դատարանի

կողմից լրացուցիչ քննության վերադարձված գործերի քանակը նվազել է: Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 5751 գործից լրացուցիչ քննության է ուղարկվել 116 գործ կամ 2%-ը՝ նախորդ տարվա 2,4%-ի փոխարեն: Ընդ որում, 116 գործից 68-ը կամ 58,6%-ը ՆԳՆ-ի քննիչների գործերից էր, իսկ 47 գործ կամ 57,4%-ը՝ դատախազության քննիչների գործերից»⁴:

1985 թ. սկսած՝ խորհրդային երկրում սկիզբ դրվեց սոցիալիստական բարեփոխումների քաղաքականությանը, որն անցավ «իրապարակայնություն, արագացում, վերակառուցում» կարգախոսների ներքո: Այն ազդարարեց վճռական շրջադարձ սոցիալիստական իրավունքի և իրավագիտության զարգացման մեջ⁵: Ձեռնարկված քաղաքականությունը հնարավորություն ընձեռեց կասեցնել այնպիսի թերությունների շարունակական զարգացումը, ինչպիսիք էին դոգմատիզմը, բացասական երևույթները թաքցնելը, գիտականության պահանջներից հրաժարվելը, իրականությունից կտրվածությունը այլն: Այսպիսով, 80-ական թթ. կեսերին հիմնավորվեց ողջ քրեադատավարական համակարգի արմատական բարեփոխման անհրաժեշտությունը, որի իրականացման ընթացքում պետք է լուծվեին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք էին արդարադատության ապագադափարականացումը, քրեական արդարադատության համակարգային թերությունները և դատավարական գործառնությունների ոչ ճիշտ հարաբերակցությունը և այլն⁶: Այդ բարեփոխումների անհրաժեշտությունն ընդունեց նաև կոմունիստական կուսակ-

ցության ղեկավարությունը⁷: Պրոֆեսոր Վ.Մ. Սավիցկու գլխավորությամբ մշակվել էին նաև ԽՍՀ միութենական և միութենական հանրապետությունների քրեադատավարական օրենսդրության հիմունքների, ինչպես նաև ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի տեսական մոդելները⁸:

1988 թ. կոմկուսի համամիութենական համագումարում նախանշվեց քննչական ապարատի վերակազմակերպման ուղիները: Մասնավորապես, նախատեսվում էր քրեական գործերի հիմնական մասի նախաքննությունը կենտրոնացնել ՆԳՆ քննչական ապարատում: Հարցի վերաբերյալ տեսական գրականության մեջ արտահայտվող տեսակետներն ու կարծիքները խիստ հակասական էին և բազմաբնույթ: Արդարադատության գեներալ-լեյտենանտ Վ. Գ. Նովիկովը դրականորեն է արտահայտվել այդ կենտրոնացման վերաբերյալ, նշելով, որ կազմակերպական կառուցակարգի այդ մոդելը կբարձրացնի դատախազական հսկողության արդյունավետությունը: Նա միաժամանակ նշում է, որ ՆԳ մարմիններին նախաքննության կատարման իրավունք ընձեռելու պահից քննիչները հայտնվեցին նյութական կախվածության մեջ միլիցիայի պետից, որը միաժամանակ պատասխանատվություն չէր կրում նախաքննության արդյունքների համար: Վերջինիս հետ էին համաձայնեցվում քննիչ նշանակելու, տեղափոխելու, պատժելու և այլ հարցեր⁹:

Քննչական ապարատի կենտրոնացման հարցի վերաբերյալ շատ հեղինակներ առաջարկում են ձևավորել անկախ քննչական ապարատ՝ քննիչի դատավարական ինքնուրույնությունն ու նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այդպիսի հեղինակներից էին Ա. Պ. Գուլյակը, Յու. Ս. Ստեցովսկին, Վ. Ի. Իլյուխինը¹⁰:

1988թ. փետրվարին սկսված Ղարաբաղյան շարժումը կասեցրեց վերակառուցման քաղաքականությունը և ենթադրվող դատաիրավական բարեփոխումները

Հայաստանում, այդ պատճառով էլ օրենսդրական նորությունները չհասան Հայկական ԽՍՀ:

1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, իսկ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվեի արդյունքներով հայ ժողովուրդն ընտրեց անկախ պետականության ճանապարհը: Անկախ հանրապետությունում իրավական, ժողովրդավարական պետության կառուցումը պետք է հիմնվեր իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Քաղաքական նոր իրադրությամբ պայմանավորված՝ փոփոխություններ և լրացումներ կատարվեցին նաև 1961թ. քրեական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես՝ խմբագրական, ոճական և տերմինաբանական մշակումներից և փոփոխություններից հետո այն համապատասխանեցվեց հասարակական-տնտեսական նոր պահանջներին: Օրենսգրքում կատարված փոփոխություններն ու լրացումներն անդրադարձան նաև նախաքննության մարմիններին վերաբերող հատվածին: Մասնավորապես, 1994 թ. հունիսի 15-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք քրեական դատավարության օրենսգրքի 37 և 116 հոդվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին¹¹:

Համաձայն նոր խմբագրությամբ շարադրված նորմերի՝ քրեական գործերով նախաքննությունը կատարում էին դատախազության քննիչները, ինչպես նաև ներքին գործերի մարմինների քննիչները, պետական անվտանգության և զինվորական (ռազմական) ոստիկանության քննիչները:

ՀՀ 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքում նախաքննության մարմինների շարքում նշված չեն ռազմական ոստիկանության քննիչները: Ներկայումս այս մարմինն ընդգրկված է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում վարչության կարգավիճակով և իրականացնում է հետաքննություն զինվորական հանցա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ**

գործությունների վերաբերյալ գործերով: Հարկ է նշել, որ զինվորական ոստիկանության համակարգում մինչև 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը, գործում էր քննչական բաժին: Ձինվորական ոստիկանության կազմավորումից¹² սկսած՝ այդ կառույցին իրավունք է վերապահվել իրականացնել նախաքննություն՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով: Մասնավորապես, զինվորական ոստիկանության համակարգում 1992 թ. ստեղծվել է հետաքննության և նախաքննության բաժանմունք՝ ինը հաստիքով¹³: Նույն թվականին հաստիքացուցակում կատարվել է փոփոխություն, և ռազմական ոստիկանության համակարգում ստեղծվել են նաև հետևյալ բաժինները.

1. քննչական բաժին՝ 33 հոգի,
2. օպերատիվ հետախուզական բաժին՝ 36 հոգի,
3. օպերատիվ տեխնիկայի և փորձագիտության բաժին՝ 31 հոգի¹⁴:

Հարկ է նշել, որ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննության իրավունքը, ռազմական ոստիկանությունից բացի, իրականացնում էր նաև զինվորական դատախազությունը: Նշված մարմինների միջև ենթակայության հարցը օրենսդրորեն կարգավորված չէր: Սակայն, ռազմական ոստիկանության աշխատակիցների շրջանում մեր կողմից անցկացված հարցումները վկայում են, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գործերով նախաքննությունն իրականացնում էին զինվորական դատախազության քննիչները: Ռազմական ոստիկանության կողմից նախաքննությունն ի-

րականացնելու դեպքերում քննիչների կազմած մեղադրական եզրակացությունները հաստատում էր զինվորական դատախազը:

Ինչպես նկատեցինք, ռազմական ոստիկանությունն իր համակարգում ձևավորել է հետաքննություն իրականացնող օպերատիվ հետախուզության ու օպերատիվ տեխնիկայի և փորձագիտության հատուկ մասնագիտացված բաժիններ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ լճացման ժամանակաշրջանում ընդունված քրեական դատավարության օրենսգիրքը նաև նախաքննության փուլին վերաբերող հատվածով չէր համապատասխանում անկախ պետականություն հռչակած և ժամանակակից ժողովրդավարական չափանիշներին ինտեգրվող պետության պահանջներին: Չնայած այն հանգամանքին, որ 1991-98 թվականներին 1961թ. քրեական դատավարության օրենսգրքում բազմաթիվ լրացումներ և փոփոխություններ էին կատարվել, դատավարությունն առավելապես պահպանում էր մեղադրական թեքումը՝ առաջին պլան մղելով հանրային շահերը:

Մրցակցությունը, կողմերի հավասարությունը, անմեղության կանխավարկածը և շատ այլ ժողավրդավարական սկզբունքներ բովանդակային մասով արտացոլված չէին սոցիալիզմի զարգացման բովով անցած օրենսգրքում: 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունը հռչակեց որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն: Սա ենթադրում էր նաև դատաիրավական բարեփոխումների անցկացում, որի արտահայտություններից էր 1998թ. հունիսի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը:

¹ Տե՛ս «Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկագիր», 1984, թիվ 14, հոդվ. 141:

² Տե՛ս «Ведомости ВС СССР», 1981, թիվ 33, հոդվ. 966:

-
- ³ Бойков А.Д. Третья власть в России. Очерки о правосудии законности и судебной реформе 1990-1996. М., 1997, էջ 49:
- ⁴ Տե՛ս ՀՀ ՆԴԿՊԱ, ֆ.571, ց.12, գ.527:
- ⁵ Տե՛ս Ղազինյան Գ.Ս.,Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում,Երևան 2001,էջ 140:
- ⁶ Տե՛ս Концепция судебной реформы в РФ,М.,1992,էջ16-31:
- ⁷ Տե՛ս Резолюция 19-ой Всесоюзной конференции КПСС. Комунист, 1988, քիվ 10, էջ 87:
- ⁸ Տե՛ս Уголовно-процессуальное законодательство Союза ССР и РСФСР. Теоретическая модель. Под ред. В.М. Савицкого. М., 1990:
- ⁹ Տե՛ս Истина и только истина: Пять бесед о судебно-правовой реформе. Отв. ред. Ю.И.Стецовский, М., 1990, 246-247 էջեր:
- ¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 251:
- ¹¹ Տե՛ս «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր»,1994թ.:
- ¹² Ձինվորական ոստիկանությունը կազմավորվել է 1992թ.մայիսի 5-ին ՀՀ պաշտպանության նախարարի քիվ 0040 հրամանով:
- ¹³ ՀՀ պաշտպանության նախարարի հրաման «ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հաստիքացուցակը հայտարարելու մասին», 01.08.92թ., քիվ 0085:
- ¹⁴ ՀՀ պաշտպանության նախարարի հրաման «Ռազմական ոստիկանության հաստիքացուցակի վերաբերյալ», 01.10.92թ., քիվ 2287:
-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Гайк Мартиросян

Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Реформы системы органов предварительного следствия после принятия Конституции СССР 1977г.

Статья посвящена правовому статусу органов предварительного следствия после принятия Конституции СССР 1977г. В частности, некоторые процессуалисты предлагали поменять системную структуру органов предварительного следствия и мобилизовать последних в систему министерства внутренних дел. Были также и другие предложения, которые содержали мысль о создании независимой следственной комиссии.

Распад Советского Союза помешал реализованию вышеуказанных планов. В 1991 году Армения провозгласила свою независимость, после чего судебно-правовые реформы и изменения системы правоохранительных органов приняли другой характер.

Haik Martirosyan

*Assistant of the Chair
History and theory of state and law, YSU
Candidate of Legal science*

Changes in the system of preinvestigation bodies after adoption of the constitution of the Soviet Union in 1977

The article is devoted to the changes in the system of preinvestigation bodies after adoption of the Constitution of the Soviet Union in 1977.

Specifically the important question that needs to be discussed concerning this period is the question of investigation bodies. The important point is that investigation bodies must be located in the system of Ministry of Internal Affairs.

But the collapse of the Soviet Union mixed those plans. In Armenia the plans for investigation bodies are different.

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արթուր ԴԱՄԲԱՐՅԱՆ

**ՀՀ գլխավոր դատախազության մարդու ղեմ
ուղղված հանցագործությունների գործերով
վարչության դատախազ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ**

Ներածություն: Դատական իշխանության տեսության մեջ դատարանը ավանդաբար դիտարկվել է որպես զուտ իրավական ինստիտուտ՝ պետական մարմին, որը կոչված է իրականացնելու բացառապես արդարադատություն: Աքսենմատիկ նշանակություն է ունեցել այն դրույթը, ըստ որի դատարանը դուրս է քաղաքականությունից և չպետք է որևէ առնչություն ունենա քաղաքականության հետ: Դվորկինը գտնում է, որ թեև դատական ակտերն ունեն սոցիալական և քաղաքական կարևոր նշանակություն, սակայն դատարանը չպետք է լուծի քաղաքական հարցեր և իր որոշումները պետք է հիմնավորի սկզբունքներով: Մեկ այլ դեպքում նշվում է, որ դատարանը գործը լուծելիս պետք է հիմք ընդունի իրավական սկզբունքները և չպետք է զբաղվի քաղաքական լայն քննարկումներով: Կարծում ենք, դատարանը՝ որպես պետական մարմին, հասարակության քաղաքական համակարգի տարր, չի կարող դուրս գտնվել քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացից: Այս առումով անհրաժեշտ է վերլուծել քաղաքական համակարգում դատարանի զբաղեցրած դերն ու նշանակությանը, քաղաքական համակարգի այլ սուբյեկտների հետ դատարանի փոխհարաբերության առանձին խնդիրներ:

Հասարակության քաղաքական համակարգում դատարանի տեղի և դերի վերաբերյալ առկա են բազմաթիվ խնդրահարույց հարցադրումներ, սակայն սույն հոդվածում կքննարկենք, թե իրավագիտու-

յան մեջ ինչքանով են հետազոտված դատարանը՝ որպես քաղաքական ինստիտուտ (1), դատարանի քաղաքական գործառույթների ընդհանուր բնութագիրը (2), դատարանի տարբերությունները պետական քաղաքական այլ ինստիտուտներից (3), ՀՀ դատական իշխանության մարմինների քաղաքական դերակատարության ինքնագիտակցումը և ինքնասահմանափակումը (4):

Դատարանի՝ որպես քաղաքական ինստիտուտի հետազոտման աստիճանը: Իրավագիտության և քաղաքագիտության հետազոտության առարկայից, ընդհանուր առմամբ, դուրս են մնացել դատարանի՝ որպես քաղաքական ինստիտուտի դիտարկումը, դատարանի կողմից քաղաքական իշխանության իրականացման հնարավորությունը: Եթե նույնիսկ քաղաքական ինստիտուտների հետազոտմանը նվիրված քաղաքագիտական գրականության մեջ պետությունը, մասնավորապես դատական իշխանության մարմինները դիտարկվում են որպես քաղաքական ինստիտուտներ, ապա դատական իշխանության որպես քաղաքական ինստիտուտի վերլուծությունն ընդհանուր առմամբ սահմանափակվում է իշխանության տարանջատման ոլորտում դատական իշխանության տեղի և դերի մասին ընդհանուր դատողություններով: Ասվածը վերաբերում է նաև պետության որպես հասարակության քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտի վերլուծությանը, որը սահմանափակվում է քաղաքական համակարգի պետական և ոչ պետական ինստիտուտների տարբերությունների վկայակոչմամբ և օրենսդիր ու գործադիր իշխանության մարմինների՝ նեղ իմաստով քաղաքական գործընթացների վրա ունեցած ներգործության ձևերի և եղանակների վերլուծությամբ:

Եթե արտասահմանյան իրավագիտու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յան մեջ դատարանի՝ որպես քաղաքական ինստիտուտի, նրանց քաղաքական գործառույթների ուսումնասիրությունը օրինաչափություն է՝, ապա խորհրդային և հետխորհրդային իրավագիտությունում դատարանի՝ քաղաքագիտական խորապատկերի ներքո լուսաբանելու դեպքերը բացառություններ են՝:

ԱՄՆ-ում 60-80-ական թվականներին սահմանադրական իրավունքի և քաղաքագիտության հիման վրա ձևավորվել է «դատական վարքագծի դպրոցը», որի շրջանակներում մշակվել է քաղաքական իրավագիտությունը: Այս ուղղությունը ուսումնասիրում է իրավունքի քաղաքական գործառույթները, դատական որոշումների ընդունման վրա ազդող սոցիալ-քաղաքական գործոնները, այդ որոշումների կատարման քաղաքական հետևանքները և այլն: Քաղաքական իրավագիտության մեջ դատարանները դիտարկվում են որպես քաղաքական ինստիտուտներ, իսկ դատավորները՝ քաղաքական գործիչներ, որոնք որոշումներ են ընդունում իրենց քաղաքական հայացքների ազդեցության տակ: Քաղաքական իրավագիտությունում հատուկ ուսումնասիրվում են ԱՄՆ գերագույն դատարանի դատավորների մասնագիտական վարքագիծը, դրա շարժառիթները, սահմանադրական գործերով դատավորների կարծիքները՝:

4. Մարֆին արդարացիորեն նշում է, որ դատարանը, կիրառելով և մեկնաբանելով այնպիսի ակտեր, որոնք հաճախ շոշափում են հասարակության կենսագործունեության համար հիմնարար նշանակության տնտեսական և սոցիալական հարցեր, ինչպես նաև քաղաքական նշանակության խնդիրներ՝ դրանով իսկ անմիջական ներգործություն ունենալով տվյալ պետությունում հանրային քաղաքականության ձևավորման և իրականացման վրա՝: Դատական իշխանության ուսումնասիրությունը

ոչ միայն որպես մասնավոր-իրավական, այլ նաև հանրային-իրավական ֆենոմեն, որը գործ ունի ոչ միայն իրավական երևույթների հետ, այլ նաև հանդես է գալիս որպես իրավաքաղաքական հարաբերությունների սուբյեկտ, հնարավորություն է տալիս խուսափելու դատական իշխանության ճանաչման միակողմանիությունից և առավել հստակ որոշելու նրա իրական բնույթը՝:

Ասվածը իհարկե չի նշանակում, որ գրականության մեջ առհասարակ չի քննարկվել դատական իշխանության մարմինների քաղաքական գործառույթների հարցը: Դատարանի որպես քաղաքական ինստիտուտի դիտարկման վերաբերյալ խորհրդային ժամանակաշրջանի բացառիկ աշխատանքներից է Օ. Ժիդկովի՝ «ԱՄՆ Գերագույն դատարանը. իրավունք և քաղաքականություն» գիրքը, որտեղ հեղինակը խնդիր էր դրել բացահայտելու դատարանի կողմից քաղաքական որոշումներ ընդունելու ներքին գործընթացը, դատական իրավաստեղծ գործունեության վրա ազդող գործոնները և այլն՝:

Դատական իշխանության քաղաքագիտական վերլուծություններն առավելապես հանդիպում են սահմանադրական արդարադատության տեսության շրջանակներում: Այսպես, Ն. Վիտրուկը նշում է, որ դատավորների ապաքաղաքականացվածության մասին դրույթը չի նշանակում, որ սահմանադրական դատարանը դուրս է քաղաքականությունից, իսկ նրանց որոշումները քաղաքական բնույթ չեն կրում, չեն հանգեցնում որոշակի քաղաքական հետևանքների: Սահմանադրական դատարանը զբաղվում է քաղաքականությամբ, սակայն միայն այն իմաստով, որ իրենց որոշումներով նրանք իրականացնում են Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում արտացոլված քաղաքականությունը: Նորանկախ պետությունների սահմանադրական դատարանները, Սահմանադրության հիման վրա լուծելով իրավունքի հարցեր, մշակելով իրավա-

կան սկզբունքների, իրավական պետության վերաբերյալ իրավական դիրքորոշումներ, դրանով իսկ մասնակցում են ոչ միայն իրավական քաղաքականության իրականացմանը, այլ նոր իրավական քաղաքականության ձևավորմանը¹⁰: Մեկ այլ դեպքում հանրային իրավունքի ոլորտում դատական վարույթը դիտվում է որպես քաղաքական գործընթացի դրսևորում և որպես օրինակ նշվում են ընտրական-իրավական վեճերի վերաբերյալ գործերով դատական վարույթները, որտեղ լուծվում են զուտ իրավաբանական խնդիրներ, սակայն այդ վարույթները կարող են հանգեցնել քաղաքական իրավիճակի փոփոխության¹¹:

Ս. Գրիգորյանը նշում է, որ քաղաքական ինստիտուտները իրենցից ներկայացնում են համալիր ամբողջություն, որը կարելի է դիտել ինչպես արտաքին, ձևական կառուցվածքի, այնպես էլ ներքին բովանդակային տեսանկյունից: Արտաքինապես նրանք հանդես են գալիս որպես որոշակի նյութական միջոցներով օժտված անձանց և հիմնարկների համակցություն, որոնք իրականացնում են որոշակի գործառույթներ: Բովանդակային տեսանկյունից դա որոշակի անձանց և որոշակի իրադրությունում նպատակաուղղված կողմնորոշում ունեցող վարքագծի ստանդարտների համակցություն է¹²: Հեղինակը որպես քաղաքական ինստիտուտի օրինակ է նշում նաև արդարադատությունը, որն արտաքին կողմից իրենից ներկայացնում է արդարադատության իրականացմանը մասնակցող անձանց՝ դատավորների, փաստաբանների, մեղադրյալների, դատախազության, նյութական միջոցների համակցություն: Ներքին (բովանդակային) կողմից այն իրենից ներկայացնում է տվյալ սոցիալական գործառույթների իրականացումն ապահովող լիազորված անձանց ստանդարտացված վարքագծի նմուշների համակցություն¹³:

Դատարանի որպես քաղաքական մարմնի դիտարկումը հաճախ կապվում է դատարանների ապաքաղաքականացվա-

ծության օրենսդրական դրույթի հետ: Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածում նշված է, որ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին դատավորը կարող է մասնակցել միայն որպես ընտրող: Դատավորը չի կարող մասնակցել նախընտրական քարոզչությանը:

Դատական իշխանության մարմինները անկասկած չպետք է զբաղվեն կուսակցական գործունեությամբ, մասնակցեն քաղաքական իրավունքների իրականացման ակտիվ և հանրային միջոցառումներին, որոնք անհամատեղելի են դատավորի անկախության սկզբունքի հետ: Սակայն դատավորների ապաքաղականացվածության մասին դրույթի բացարձակացման հետևանքով ստեղծվել է մի ընկալում, որ դատարանները պետք է առհասարակ դուրս գտնվեն քաղաքականությունից: Ա. Բարակը նշում է, որ «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն» տերմինների անորոշությունը պահպանվում են նաև ներկայումս: Քաղաքական գործունեությունը անորոշ, առավել մութ, քան պարզ հասկացություն է, այդ իսկ պատճառով դատարանները ճիշտ կվարվեն, եթե հեռու մնան նրանից¹⁴: Դատարանի՝ քաղաքական գործունեությունից հեռու մնալու Ա. Բարակի առաջակը, կարծում ենք, նույնպես պայմանավորված է այն հանգամանքով, որ, ըստ էության, «քաղաքական գործունեություն» հասկացությունը հեղինակի կողմից ընկալվում է նեղ իմաստով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Այսպիսով, իրավագիտության մեջ և գործնականում դատարանի՝ որպես քաղաքական մարմնի ոչ պատշաճ դիտարկումը պայմանավորված է նրանով, որ «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն» հասկացություններն առավելապես ընկալվում են որպես զուտ կուսակցական գործունեության կամ հանրային քաղաքական ակտիվ միջոցառումների (երթեր, ցույցեր, հանրահավաքներ, նախընտրական քարոզչություն և այլն) իրականացման տեսանկյունից: Այս հիմքով դատարանի՝ որպես քաղաքական իշխանության կրողների բացառման իրավաչափության գնահատման համար մեթոդաբանական նշանակություն ունի «քաղաքականություն», «քաղաքական վարքագիծ», «քաղաքական գործունեություն» եզրույթների ընկալումը: Գրականության մեջ առկա են «քաղաքականություն» հասկացության տարբեր մեկնաբանություններ¹⁶: Մի դեպքում «քաղաքականություն» հասկացությունը օգտագործվում է որոշակի նպատակներին հասնելուն ուղղված գործունեության մոդել, այլ կերպ ասած՝ որոշումների ընդունման մեթոդիկա, մեկ այլ դեպքում որպես որոշակի ժամանակահատվածի համար անհրաժեշտ և նպատակահարմար, գիտակցված կազմակերպված գործունեություն: Որպես կանոն, այն պետական իշխանության և պետական կառավարման մարմինների, հասարակական միավորումների գործունեությունն է, որը որոշվում է իրենց շահերով և նպատակներով: Այս իմաստով քաղաքականությունը նշանակում է այս կամ այն ոլորտի կատարելագործման, փոփոխության հեռանկար: Քաղաքական կուսակցություններում, շարժումներում, քաղաքական ժողովներում քաղաքական գործունեությանը զուգահեռ, որպես քաղաքական վարքագծի տեսակ, առանձնացվում է պետական մարմինների շրջանակներում քաղաքական գործա-

ռույթների իրականացումը (ծառայությունը բանակում, պետական կառավարման և իրավակարգի ապահովման մարմիններում, այդ գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացմանը ներգրավելը)¹⁶:

Ասվածից հստակ երևում է, որ քաղաքականությունը և վերը նշված մյուս եզրույթները չեն նույնացվում միայն կուսակցական քաղաքականության կամ հանրային քաղաքական ակտիվ միջոցառումների իրականացման հետ: Մինչդեռ քաղաքականության, քաղաքական գործունեության սահմանափակ, նեղ և աղքատիկ մեկնաբանման հետևանքով իրավագիտության և քաղաքագիտության ուսումնասիրության շրջանակներից ընդհանուր առմամբ դուրս է մնացել դատական իշխանության մարմինների՝ որպես քաղաքական ինստիտուտի դիտարկումը:

Դատարանների՝ որպես քաղաքական մարմինների բացասման պատճառը ոչ միայն «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն» հասկացությունների նեղ որպես կուսակցական գործունեության կամ կոլեկտիվ - ակտիվ քաղաքական իրավունքների իրականացման ընկալումն է, այլև դատարանի՝ որպես իշխանություն կրող և այն իրականացնող մարմնի հերքումն էր: Երկար տարիներ իշխանության տարանջատման սկզբունքը հերքող խորհրդային գաղափարախոսությամբ դատարանները փաստացի դիտարկվում էին որպես կուսակցական քաղաքական կամքի իրականացման կամ պաշտպանության գործիք, բայց ոչ իշխանության կրողներ: Թերևս խորհրդային դատարանների՝ որպես կուսակցական քաղաքական կամքն իրականացնող մարմնի ընկալումն է ստեղծել այն մտայնությունը, որ դատարանին պետք է ամեն կերպ հեռու պահել քաղաքականությունից:

Սահմանադրականության ներկայիս աքսեոմատիկ դրույթների սահմանադրական ամրագրման, պետական իշխանության կազմակերպման սահմանադրական

սկզբունքների իրացման պայմաններում էապես փոխվել է պետական իշխանության համակարգում դատարանի գործառնական դերն ու նշանակությունը: Դատարանը այլևս դիտարկվում է ոչ թե որպես այս կամ այն քաղաքական ուժի կամքն իրականացնող գործիք, այլ պետական իշխանության կրող: Դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի ուժով արդեն իսկ հիմնավորվում է նրանց քաղաքական բնույթը: չ՞է որ պետական իշխանությունը քաղաքական իշխանության տարատեսակ է, իսկ քաղաքական այդ իշխանության կրողները՝ քաղաքական ինստիտուտներ: Բացի այդ, դատարանի՝ որպես պետաիշխանական մարմնի կարգավիճակից ուղղակիորեն բխում է դատարանի կողմից ընդունվող ակտերի իրավաբանական բնույթը: Ինչպես պետական (քաղաքական) իշխանության մյուս քները, այնպես էլ դատական իշխանության մարմիններն ընդունում են իրավաբանական այնպիսի ակտեր, որոնք հանդիսանում են դատարանների՝ քաղաքական իշխանության իրականացման հիմնական գործունակ իրավական գործիքները: Այդ ակտերի սոցիալ-իրավական հետևանքները հաճախ դուրս են գալիս կոնկրետ գործի շրջանակներից և իրավաքաղաքական արժեք են ձեռք բերում ողջ հասարակական համակարգի համար:

Դատարանի քաղաքական գործառույթների ընդհանուր բնութագիրը: Դատական իշխանության մարմինները՝ որպես քաղաքական ինստիտուտներ, իրականացնում են քաղաքական ինստիտուտներին հատուկ գործառույթներ: Ընդհանուր առմամբ քաղաքական ինստիտուտներին, ի թիվս այլոց, ներկայացնում են ընդհանրությունների շահերին համապատասխանող հասարակական հարաբերությունների և արժեքների համակարգի պաշտպանության և զարգացման, սոցիալական կառավարման և վերահսկողության իրականացման գործառույթները:

Դատարանի առաջնային խնդիրներից են տվյալ ժամանակի և տարածության մեջ

ձևավորված և ճանաչված արժեքների ներդաշնակեցումը և պաշտպանությունը: Իրավապաշտպան գործառույթը ներհատուկ է դատական իշխանության մարմիններին և արդարադատությանը: Հասարակության անդամները հիմնականում դատարան են դիմում իրենց խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության, միևնչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգման խնդրանքով: Բացի այդ, արդարադատության առաքելությունն է սոցիալ-իրավական վեճերի լուծումը, հասարակական կյանքի տարբեր սուբյեկտների հակադիր շահերի ներդաշնակեցումը: Դատարանը, լուծելով այս կամ այն վեճը և պաշտպանելով դատավարության կողմի օրինական շահերը, քաղաքական այլ ինստիտուտների նման հասարակական համակարգ ներմուծում, զարգացնում է որոշակի արժեքային համակարգ, որը հետագայում կարող է ուղղության տալ իրավաստեղծ և իրավակիրառ քաղաքականությանը:

Դատարանը՝ որպես քաղաքական ինստիտուտ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացնում է վերահսկողություն: Դատական վերահսկողության օբյեկտները և իրականացման կարգը, ի տարբերություն սոցիալական վերահսկողության այլ տեսակների, մանրամասն սահմանված են դատավարական օրենսդրությամբ: Դատական վերահսկողության դատավարական ձևի սոցիալական արժեքը դրսևորվում է նրանում, որ այն սահմանափակում է պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների կողմից հնարավոր կամայականություն դրսևորելու պոտենցիալը, հնարավորություն է տալիս ապահովելու այն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, որոնք կարող են շոշափվել վերահսկողության դատական ակտով:

Դատարանի վերահսկողական գործառույթի քաղաքական պոտենցիալն առավել ցայտուն է դրսևորվում սահմանադրական և վարչական դատավարություններում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բանն այն է, որ արդարադատության նշված ձևերով լուծվում են առավելապես հանրային իրավական նշանակության հարցեր, օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների միջև առաջացած քաղաքական կոնֆլիկտներ: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ վեճեր կարող են ծագել նաև պետական իշխանության մարմինների միջև, ինչը լուծվում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից: Օրինակ՝ այս կամ այն օրենքի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի միջև վեճը լուծելու համար ՀՀ կառավարությունը իրավասու է դիմելու ՀՀ սահմանադրական դատարան:

Այս իմաստով, դատական իշխանության մարմինները՝ որպես իրավաքաղաքական ինստիտուտ, իշխանության տարանջատման համակարգում կատարում են օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների օպտիմալ հավասարակշռման երաշխիքի միջնորդական դերակատարություն¹⁷: Դատական իշխանության մարմինները ոչ միայն հանդես են գալիս իշխանության մյուս թևերի նկատմամբ սոցիալ-իրավական վերահսկողության սուբյեկտ, այլ նաև որպես սոցիալական վերահսկողության օբյեկտ: Վ. Լեոնտևը նշում է, որ իրավական և քաղաքական գործընթացների արդյունավետ փոխգործունեությունը ապահովում է դատական իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողության համակարգի զարգացմամբ¹⁸:

Դատարանի տարբերությունները պետական քաղաքական այլ ինստիտուտներից: Դատարանը՝ որպես քաղաքական ինստիտուտ, տարբերվում է պետական այլ

քաղաքական ինստիտուտներից հետևյալ հատկանիշներով.

1. Օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները օժտված են պրոակտիվ քաղաքականություն ձևավորելու և իրականացնելու լայն հնարավորությամբ: Այդպիսի նախաձեռնությունը կարող է բխել այս կամ այն քաղաքական ուժի ծրագրային-գաղափարախոսական դրույթներից, որի համար չի պահանջվում քաղաքական համակարգի այլ սուբյեկտների ակտիվ գործողությունները: Մինչդեռ դատական իշխանության մարմինների՝ քաղաքականության ձևավորման և իրականացման նախաձեռնություն դրսևորելու հնարավորությունը էականորեն սահմանափակված է: Եթե դատական իշխանության մարմինները համոզված լինեն, որ ունակ են դատական քաղաքականության միջոցով հասարակական այս կամ այն ոլորտում իրականացնել փոփոխություններ, ապա այդպիսի քաղաքականության նախաձեռնման հնարավորություն նրանք չունեն, քանի դեռ չկա քաղաքական համակարգի այլ սուբյեկտների նախաձեռնությունը (դատարանին հասցեագրված դիմում, հայց, քրեական մեղադրանք, բողոք) դատական վարույթ սկսելու վերաբերյալ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված է, որ սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ դատարանը չի կարող դուրս գալ ինքն իրենից և նախաձեռնել սոցիալական փոփոխություններ:

2. Պետական քաղաքական ինստիտուտների քաղաքական գործունեությունը թեև կարգավորված է իրավական ակտերով (Ազգային ժողովի կանոնակարգ օրենք, ՀՀ կառավարության կանոնադրություն և այլն), սակայն այդ կարգավորումը առավել ընդհանրական է և չի բացառում նշված սուբյեկտների կողմից քաղաքական գործողությունների որոշակի ազատությունից: Մինչդեռ դատարանի գործողություն-

ներն առավել քան ֆորմալացված են դատավարական ձևի շրջանակներում: Դատավարական օրենսդրությամբ ամենայն մանրամասնությամբ սահմանվում են դատարանի գործողությունների ցանկը, այդ թվում՝ այդ գործողությունների որոշակի հերթականությունը: Դատարանը իրավասու չէ կատարելու այնպիսի դատական գործողություններ, որոնք դատավարական օրենսդրությամբ նախատեսված չեն:

3. Էսպես տարբերվում են դատարանի և պետական քաղաքական այլ ինստիտուտների կողմից քաղաքականության ձևավորման և իրականացման գործիքները: Օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները իրենց գործունեության իրականացման ընթացքում օգտագործում են ոչ միայն զուտ իրավական (որոշումներ, հրամաններ, այլ իրավական ակտեր, ուղերձներ, հարցապնդումներ և այլն), այլ նաև քաղաքական գործիքներ (հանդիպումներ, հրապարակային ելույթներ, քաղաքական քննարկումներ և այլն): Ավելին, եթե օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները իրավասու են ազատորեն արտահայտելու իրենց քաղաքական դիրքորոշումները, ընտրված քաղաքականության տվյալ ուղղության արդյունավետության հիմնավորումները, ապա դատարանը իրավասու չէ մինչև դատական ակտը կայացնելը արտահայտելու իր դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ: Եթե դատարանը խախտում է նշված արգելքը, ապա կասկածի տակ է դրվում նրա անաչառությունը, որն էլ կարող է դատավարության կողմերի համար հիմք հանդիսանալ ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել նրան նշանակող մարմնի կողմից, եթե նա նախապես կարծիք է հայտնել սահմանադրական դատարանում քննվելիք գործի

վերաբերյալ կամ այլ կերպ կասկածի տակ է դրել իր անաչառությունը:

ՀՀ դատական իշխանության մարմինների քաղաքական դերակատարության ինքնագիտակցումը և քաղաքական ինքնասահմանափակումը: Անհրաժեշտ է պարզել նաև ՀՀ դատավորների՝ որպես քաղաքական իշխանության կրողների, քաղաքական համակարգում սեփական դերակատարությունը, հասարակության տարբեր ոլորտներում փոփոխություններ իրականացնելու ունակության ինքնագիտակցման հարցը:

Բարձրացված հարցադրման օբյեկտիվ պատկերը ստանալու չափանիշներից է դատական ակտերի վերլուծությունը, քանի որ քաղաքականության, քաղաքական իշխանության իրականացման ոլորտում և հանրային կյանքում դատարանի հնարավորությունների և դերակատարության ինքնագիտակցումը պետք է արտացոլվի դատարանի քաղաքական գործունեության արդյունքում, այն է՝ դատական ակտերում¹⁹:

2007թ. դատաիրավական բարեփոխումների ընթացքում ընդունված մի շարք օրենսդրական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնցով ոչ միայն պարզապես հակասահմանադրական է ճանչվել այս կամ այն իրավական նորմը, այլև այդ որոշումներում ՀՀ սահմանադրական դատարանը ձևավորել է ՀՀ օրենսդիր իշխանությանը հասցեագրված այն սահմանադրական դրկտրինը, որը պետք է ուղղորդի այդ ոլորտի հետագա բարեփոխումների հայեցակարգային հիմքերը: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2008թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ ձևավորել է մասնագիտացված վարչական արդարադատության արդյունավետության կատարելագործման վերաբերյալ սահմանադրական դրկտրին, իսկ դրա իրականացման օրենսդրական ապահովման նպատակով՝ հրավիրել է Ազգային

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ժողովի ուշադրությունը:

Սահմանադրական դատարանի ակտերի դիտարկման մեթոդաբանության կիրառմամբ ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, գիտակցելով հասարակության քաղաքական համակարգում սեփական տեղը և դերը, մասնակցում է հանրային կյանքի կառավարմանը և բարեփոխումների իրականացմանը:

Քրեական դատավարության ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքականության ձևավորման հարցում ինքնադրսևորվում է առավելապես այն դեպքերում, երբ սեփական դիրքորոշումը կարող է պայմանավորել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով: Եվրոպական դատարանի որոշումներով սեփական դիրքորոշումը հիմնավորելու հնարավորության առկայության դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը պատրաստ է կոնֆլիկտի մեջ մտնելու նաև օրենսդիր իշխանության հետ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի համաձայն՝ գրավ կարող է կիրառվել միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ: Ստացվում է, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի նկատմամբ գրավ չի կարող կիրառվել: ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, գտել է, որ օրենսդրի դիրքորոշումը հակասում է Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին: ՀՀ վճռաբեկ դատարանը, 2007թ. հուլիսի 13-ի որոշմամբ վկայակոչելով Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության և Էս Բի Սին ընդդեմ Միացյալ Թագավորության գործերը, մշել է. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատու-

յունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանդումից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկելու դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը: Ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը²⁰: Այսպիսով, ձևավորված դատական քաղաքականության հիման վրա գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կարող է կիրառվել նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գործերով:

ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին որոշումներ նույնպես կարող է առաջացնել օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություն: «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը սահմանում էր, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստացվել դատարանի որոշմամբ, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ում նման պահանջ նախատեսված չէր: ՀՀ վճռաբեկ դատարանը 22.10.2004թ. որոշմամբ գտել էր, որ ՀՀ քր. դատ. օր-ի և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի միջև առկա է հակասություն և եզրակացրել, որ այս դեպքում պետք է գործի ՀՀ քր. դատ. օր-ը, իսկ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարելի է ստանալ առանց դատարանի որոշման²¹: ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշումից հետո օրենսդիր մարմնի կողմից ՀՀ քր. դատ. օր-ում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, որով բանկային գաղտնիք ստանալու նկատմամբ ուղղակիորեն սահման-

վեց նախնական դատական վերահսկողություն:

Դատական իշխանության մարմինները քաղաքականություն ձևավորելիս և իրականացնելիս հատուկ նշանակություն պետք է տան այս ոլորտում ինքնասահմանափակման գիտակացմանը: Ինչպես նշվեց, դատավարական ձևի առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը, ի տարբերություն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների, չի կարող իր վրա վերցնել երկրի հեռանկարային քաղաքականության ձևավորման առաջատարի դերը: Նույնիսկ այն գիտնականները, ովքեր հակված են ուռճացնելու դատարանի իրական քաղաքական նշանակությունը, ընդունում են, որ դատական իշխանության մարմինները ի վիճակի չեն գերակայել օրենսդիր և գործադիր իշխանության նկատմամբ միայն այն պարզ պատճառով, որ դատարանը չի կարող ինքնուրույն նախաձեռնել հասարակական կյանքի էական փոփոխություններ: Դատավորը պետք է փորձի խուսափել վտանգավոր և սուր քաղաքական հարցերից, փնտրի քաղաքական հարցերի փոխգիջումային որոշումներ:

Դատարանի քաղաքական ինքնասահմանափակումը պայմանավորված է նաև իշխանության տարանջատման սկզբունքով: Դատարանը դատական քաղաքականություն ձևավորելիս չպետք է մտնի իշխանության մյուս թևերի ոլորտը: ՀՀ դատական պրակտիկայում պահպանվում է դատական քաղաքականության ինքնասահմանափակման հայեցակարգը: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ նախադասությունում ամրագրված դրույթի սահմանադրականությունը գործով (16 հունվարի 2007թ. որոշում) նշել է, որ հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հան-

րային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով կամ անկախ գործելու իրավասությանը օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա՝ այդ մարմնի որոշումների, այդ թվում՝ նաև սակագների սահմանման վերաբերյալ օրինականությունը վերահսկելը: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ որևէ դատարան չի կարող սահմանել հանրային ծառայության սակագին կամ փոփոխել հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը, այլ վերոհիշյալ ընդհանուր խնդրի շրջանակներում կարող է պարզել հանձնաժողովի կողմից կարգավորման օրենսդրական կարգի ու սկզբունքների պահպանումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արթուր Խաչատրյանի վերաբերյալ թիվ 3-295/47 գործով անդրադարձել է այն հարցին, թե արդյոք դատարանը իրավունք ունի պարտադրելու վարչական մարմնին իրականացնել իր հայեցողական լիազորությունը դատական ակտով սահմանված կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով իշխանությունների տարանջատման սկզբունքը, հանգել է այն եզրակացության, որ դատական իշխանությունը չի կարող իր որոշմամբ պարտադրել վարչական մարմնին որևէ կոնկրետ ձևով իրականացնելու իր հայեցողական լիազորությունները²²:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել.

1. Հայ իրավագիտությունում պատշաճ ուշադրություն չի դարձվել դատական իշխանության մարմինների՝ որպես քաղաքական համակարգի սուբյեկտների գործառ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նությանը, ինչն առավելապես պայմանավորված է «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն» հասկացությունների նեղ՝ որպես կուսակցական գործունեության կամ կոլեկտիվ - ակտիվ քաղաքական իրավունքների իրականացման ընկալումով և խորհրդային ժամանակաշրջանում դատարանի՝ որպես ինքնուրույն պետական իշխանություն կրողի մերժումով:

2. Իրավական պետությունում դատական իշխանության մարմինները, հանդիսանալով քաղաքական իշխանության լիիրավ կրողներ, հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտներ, ձևավորում և իրականացնում են քաղաքակա-

նություն: Դատարանը կենդանի քաղաքական գործընթացների մասնակից է, և պրագմատիկ տեսանկյունից այն համարվում է ոչ թե գործընթացների կողմնակի դիտորդ, այլ քաղաքականություն ձևավորող մարմին:

3. ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության արդյունքների դիտարկումը ցույց է տալիս, որ նա ընդհանուր առմամբ գիտակցում է քաղաքական համակարգում սեփական դերակատարությունը և դրա սահմանները, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքականության ձևավորման հարցում ինքնադրսևորվում է առավելապես այն դեպքերում, երբ սեփական դիրքորոշումը կարող է հիմնավորվել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմամբ:

¹ Տե՛ս Dworkin Seven Critics. 11 GA. L. Rev. 1201, 1237, (1977).

² Տե՛ս Rebell M. & Blok A. Educational policymaking and The Courts: Empirical Study of Judicial Activism. Chicago, Illinois, The University of Chicago Press. 1982, P. 319.

³ Տե՛ս Գրիգորյան Ա. Քաղաքական ինստիտուտների փոխակերպումը ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում: -Եր. 2008, էջ159-183.

⁴ Տե՛ս G. Alan Tarr Judicial Process and Judicial Policymaking. Rutgers University-Camden Thomson. 2003, Alexis de Tocqueville, Democracy in America, J. P. Mayer, ed. (Garden City, NY: Doubleday, 1969).

⁵ Տե՛ս Марченко М.Н. Судебное правотворчество и судебское право Велби, Проспект 2007. С.55.

⁶ Տե՛ս Сергеевнин С. Л. О соотношении политической науки, науки о государстве и правоведения. Правоведение. 1991. N 6. С. 40-50, Егоров С. А. Современная наука конституционного права США. М., 1987. С 21. Саммерс Р. Господствующая правовая теория в США. Советское государство и право. 1989. N 7. С. 109 -116.

⁷ Տե՛ս Murphy W. Elements of Judicial Strategy. Chicago. 1984. P. 59. Մեջբերումն ըստ Марченко М.Н. Судебное правотворчество и судебское право, Велби, Проспект, 2007. С. 59.

⁸ Տե՛ս Марченко М.Н. Судебное правотворчество и судебское право, Велби, Проспект. —М., 2007. С. 56.

⁹ Տե՛ս Жидков О. А. Верховный суд в США: право и политика. — М., 1973.

¹⁰ Տե՛ս Витрук Н.В. Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: Учеб. Пособие. 2-е изд., перераб. и доп. М., Юристь, 2005, С. 143.

¹¹ Տե՛ս Конституционное государственное право зарубежных стран. Общая часть. 3-е изд. Учебник. Отв. Ред. Б. А. Страшун М., Изд. БЕК, 1999, С. 227.

¹² Տե՛ս Գրիգորյան Ա. նշվ. աշխ., էջ 26:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ26:

¹⁴ Տե՛ս Барак А. Судейское усмотрение. - М. 1999. С. 302.

¹⁵ «Քաղաքականություն» հասկացության բնորոշման մասին տես В. С. Туманян К Вопросу об определении политики. Вестник РАУ. Серия: гуманитарные и общественные науки. Издательство РАУ. N 1/2009.

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ

Артур Гамбарян

Прокурор Управления по делам преступлений против человека Генеральной прокуратуры РА, кандидат юридических наук, доцент

Органы судебной власти в политической системе общества

В данной статье автор рассматривает органы судебной власти как субъектов политической системы общества. Автор утверждает, что в армянском правоведении органы судебной власти не рассматривались как функциональные субъекты политической системы, что в основном обусловлено пониманием значения “политический”, “политическая деятельность” в узком смысле, а именно в значении партийной деятельности или коллективной, т.е. активной реализацией политических прав, а также отрицанием в советское время самостоятельной роли суда, как носителя государственной власти. Тем не менее, в правовом государстве органы судебной власти, являясь полноправными носителями политической власти, субъектами политической структуры общества, формируют и осуществляют политический процесс. Суд является участником действующих политических процессов и, с практической точки зрения, рассматривается не как посторонний наблюдатель политических процессов, а как орган формирующий политику.

На основе анализа судебных актов автор пришел к выводу о том, что рассмотрение результатов деятельности Конституционного Суда РА свидетельствует о том, что, в общем, данный институт осознает свою роль и границы в политических процессах, а Кассационный Суд РА самореализуется в формировании политики в основном в тех случаях, когда в своей позиции основывается на правовой позиции Европейского Суда по Правам Человека.

Artur Ghambaryan

Prosecutor, Department of Crimes against a Person of the Prosecutor General's Office of the Republic of Armenia; PhD in Law; Associate Professor

The Role of the Judiciary in the Political System of the Society

In this article the author discusses the role of the Judiciary in the political system of the society. The author states that Armenian legal science has not paid proper attention to the functional role of the Judiciary as the subject of the political system, what mainly is conditioned by the narrow understanding of the meanings “political”, “political activity” or implementation of the collective, i.e. active political rights and refusal during Soviet times to view courts as an independent carrier of political power. However, in a rule of law country the Judiciary being rightful carrier of political power, is subject of the political system of the society, and it develops and implements the policy. The Court is a participant of vivid political processes and from pragmatic point of view it is considered as a policy making institution and not an outside observer of the processes.

Based on the analysis of judicial acts, the author concludes that the review of the Constitutional Court of the RA activities shows that, in general, the later realizes its role and boundaries in the political system, while the Cassation Court of the RA manifests itself in the policy making process through grounding its position on the legal position of the European Court of Human Rights.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՅԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գաբրիել ԲԱԼԱՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում պետական բուհերի ֆինանսավորման աղբյուրները, ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու օրենսդրական հիմքերը, նման գործունեություն իրականացնելու լիազորություններով օժտված մարմինների իրավասության շրջանակները, վերհանել առկա հիմնախնդիրները և ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

ՀՀ-ում պետական բուհերի գործունեությունը կարգավորում է ՀՀ Սահմանդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով, ոլորտին վերաբերվող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ԿԳՆ հրամաններով, բուհերի ներքին իրավական ակտերով և այլն:

ՀՀ-ում պետական բուհերի հիմնական իրավակազմակերպական տեսակը պետական ոչ առևտրային կազմակերպությունն է՝ ՊՈԱԿ-ը (բացառությամբ միջպետական համաձայնագրով ստեղծված բուհերի), որոնք, «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ են, սույն հանգամանքը, սակայն, չպետք է ընկալել որպես

շահույթ ստանալու արգելք, քանի որ դա անհրաժեշտ նախապայման է բուհի բնականոն գործունեությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով հիմնադրի սուղ միջոցները տվյալ ոլորտում: ՊՈԱԿ-ի հիմնադիր (ըստ գործող օրենսդրության) կարող է լինել միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանում է հիմնադիրը: Այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանում է ՀՀ կառավարությունը կանոնադրության հաստատման ժամանակ, ընդ որում՝ լիցենզավորման ենթակա գործունեությունը, որից և ստացվում է բուհերի եկամուտների ամենամեծ մասը, բուհը կարող է իրականացնել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Ի դեպ, բուհերի հենց ձեռնարկատիրական գործունեությամբ են ստացվում այն միջոցները, որոնց շնորհիվ բուհը կարողանում է գործունեություն ծավալել և զարգանալ: Օրենսդրության համաձայն՝ հիմնադիրը հիմնադրման ժամանակ բուհին հանձնում է գույք՝ ինչպես սեփականության, այնպես էլ անհատույց ու անժամկետ օգտագործման իրավունքով: ՊՈԱԿ-ի սեփականությունը ձևավորվում է նրա գործունեության ընթացքում ձեռք բերված և արտադրված գույքից: Բուհերը իրավունք ունեն օրենսդրության շրջանակներում իրենց հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը²: «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րենքը սահմանում է, որ «բուհը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուհին նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունքը համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ»³։ Այս օրենսդրական ամրագրումը կարելի է որակել ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի պահանջի կատարում՝ բուհերի ինքնավարության երաշխավորման առումով։

Բացի այն, որ պետական կազմակերպությունը ինքն է հոգում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի պահպանման հոգսը, պետական բուհը պարտավոր է պատշաճ ձևով պահպանել հիմնադրի գույքը⁴։ Ընդ որում, հիմնադիրը ոչ մի իրավունք չունի բուհին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ՝ բացառությամբ բուհի լուծարումից հետո մնացած գույքի⁵։ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածը բավական մանրամասն սահմանում է պետական բուհերի՝ օրենքով թույլատրված ֆինանսավորման աղբյուրները։ Վերոնշյալ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պետական ֆինանսական աջակցությունը բուհերին իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նախօրոք հաստատված ձևերով և նպատակներով, ընդ որում՝ ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման կրճատման։

Հսկողությունը և վերահսկողությունը բուհերի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացնում են մի

շարք պետական մարմիններ՝ համաձայն «Պետական ոչ առևտրամյին կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթների։

Նախ փորձենք տարանջատել հսկողություն և վերահսկողություն եզրույթները։ Հարկ է նշել, որ ՀՀ գործող օրենսդրությամբ կարգավորված չեն նշված եզրույթների իմաստը և նշանակությունը։ Հսկողական և վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինների վերաբերյալ օրենսդրությունը յուրովի է մեկնաբանում այդ եզրույթները. մասնավորապես բացակայում է հստակ տարանջատում, թե այդ եզրույթներից որն է ենթադրում ներքին հսկողություն, և որը՝ արտաքին. շատ դեպքերում այդ երկու եզրույթները նույնացվում են։ Բացատրական բառարանում «**վերահսկել**» բառը բացատրվում է «բարձր հսկողություն ունենալ», այսինքն՝ օժտված լինել ավելի բարձր իրավասությամբ, քան հսկողություն իրականացնողին է⁶, իսկ «**հսկել**» բառը բացատրվում է «հետևել, հետամուտ լինել, հսկողություն իրականացնել»⁷։ Այդ առումով տեղին է նշել, որ վարչական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը թերի է, և անհրաժեշտ է գործող օրենսդրությունը բարեփոխել՝ հստակեցնելու համար նշված եզրույթները և տարանջատելով նշված գործառույթներով օժտված մարմիններին։

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է բուհերի ինքնավարությունը, իսկ դրա շրջանակները որոշելը թողնված է օրենքին։ Ի կատարումն Սահմանադրության այդ պահանջի՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում են բուհերի ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները, դրանք մասնավորապես ամրագրում են, որ բուհը ինքնուրույն է իրականացնում ֆինանսների կառավարումը։

Պետք է հստակ տարանջատել պետական կազմակերպությունները և պետական

հիմնարկները, քանի որ դրանք հաճախ նույնացվում են, այնինչ դրանց գործունեությունը կանոնակարգվում է տարբեր օրենքներով, և եթե հիմնարկները համարվում են պետական, տարածքային կամ տեղական իշխանության մաս, ապա բուհերը առաջադեմ երկրներում համարվում են այդ իշխանությունների գործընկեր⁸: Տվյալ դեպքում տեղին է հիշատակել «Բյուջետային համակարգի» և «ՀՀ 2010թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքները, ըստ որոնց՝ ՊՈԱԿ-ների սեփական միջոցները չեն կարող համարվել պետական բյուջեի միջոցներ⁹:

Անցնելով հսկողական գործառույթների քննարկմանը՝ անհրաժեշտ է մեջբերել Սահմանադրության հետևյալ դրույթը. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»¹⁰: Սահմանադրության 83.5 հոդվածի 3-րդ կետը բացառապես ՀՀ օրենքների կարգավորմանն է թողնում իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը: Սա նշանակում է, որ որևէ ենթաօրենսդրական ակտով որևիցե պետական մարմնի չի կարող վերապահվել հսկողություն կամ վերահսկողություն կատարելու լիազորություն: Բացի դրանից՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համապատասխան իրավական ակտի պարզաբանում իրավասու է տալ գործադիր իշխանության միայն մեկ մարմին: Այս տրամաբանությունը, սակայն, ներկայումս չի գործում, քանի որ նույն ժամանակաշրջանում միևնույն գործառույթների իրականացման վերահսկողությունը դրվում է պետական իշխանության տարբեր մարմինների վրա՝ տարբեր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջոցով¹¹:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է պետական այն մարմինների ցանկը, որոնք իրավասու են իրականացնելու տարբեր տիպի և թեմաների վերաբերյալ ստուգումներ, սակայն այդ ցանկում չեն նշվում այդպիսի իրավասությամբ օժտված բոլոր մարմինները, քանի որ նույն հոդվածը ենթադրում է օրենքով ստուգման գործառույթ ունեցող այլ մարմիններ:

Բուհի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունքով օժտված է նաև բուհի կառավարման խորհուրդը¹², որը ձևավորվում է հիմնադրի, պետական լիազոր մարմնի, բուհի աշխատակիցների և ուսանողության ներկայացուցիչներից: Հենց բուհի կառավարման խորհուրդն է հաստատում տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշիվը և դրա կատարողականը ու փաստորեն իրավասու է պահանջելու ցանկացած տեսակի տեղեկություն ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականի քննարկման ընթացքում:

Ստորև փորձենք նշել պետական այն մարմինները, որոնք Սահմանադրության և օրենքներով լիազորված են իրականացնելու հսկողություն բուհերի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ.

1. Հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը,
2. ՀՀ վերահսկիչ պալատը,
3. Լիազոր պետական մարմինը՝ կրթության և գիտության նախարարությունը,
4. Հարկային մարմինները,
5. ՀՀ ֆինանսների նախարարությունը:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքից հստակ երևում է, որ այդ օրենքը չի կարգավորում վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների ընթացքում ծագող իրավահարաբերությունները, ինչպես նաև «ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով»¹³ նախատեսված դեպքերում անցկացվող ստուգումների կարգն ու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պայմանները: Հաշվի առնելով այդ առանձնահատկությունները՝ այստեղ չեն քննարկվում «ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով» նախատեսված ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն և վերստուգումն դեպքերը: «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև վերստուգումների (կրկնակի ստուգումների) անցկացման իրավական հիմքերը, կարգը և պայմանները¹⁴:

Գործող օրենսդրությամբ բուհերի սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ օժտվում է պետական լիազոր մարմինը: Հաշվի առնելով այն հագամանքը, որ բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր պետական մարմինն է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը¹⁵, որին բուհերի կանոնադրություններով (որոնք հաստատվում են կառավարության որոշումներով) և մի շարք օրենքներով վերապահված է բուհերի նկատմամբ վերահսկողությունը¹⁶, այսինքն նախարարությունը (բացառությամբ Երևանի պետական համալսարանի¹⁷) իրավասու է կատարելու նաև ֆինանսատնտեսական գործունեության ստուգում իր համապատասխան մասնագետների միջոցով կամ պատվիրելու այդ ստուգումը մասնագիտացված կազմակերպության (աուդիտորական կազմակերպության): Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ «Հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքում 2009 թ. կատարված փոփոխությունից հետո պետական բուհերի մեծ մասը պարտավոր են իրենք ևս պատվիրել անկախ աուդիտ և տարեկան հաշվետվության հետ միասին իրապարակել այդ աուդիտի եզրակացությունը¹⁸:

Բուհերի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ օժտ-

ված է կառավարության ևս մեկ լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, քանի որ համաձայն իր կանոնադրության՝ նրա գործառույթների մեջ է մտնում պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումների (աուդիտի) իրականացումը, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման գործունեության կենտրոնացված մոնիտորինգի իրականացումը¹⁹: Տվյալ դեպքում հարկավոր է արձանագրել, որ այդ լիազորությունը ֆինանսների նախարարությանը ուղղակիորեն վերապահված է ենթօրենսդրական ակտով և կարիք ունի օրենքով ամրագրվելու համապատասխան ՀՀ Սահմանադրության 5 –րդ և 83.5-րդ հոդվածների:

Հարկային մարմինները բուհերի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու իրավունքով օժտված են մի քանի օրենքներով, դրանից հիմնականը «Հարկերի մասին» ՀՀ օրենքն է, որի 6-րդ հոդվածի ուժով բուհերը ևս հարկ վճարողներ են: Իսկ հարկային հաշվետվությունների և վճարված հարկերի ճշտությունը ենթակա է ստուգման կամ ուսումնասիրության հենց հարկային մարմինների կողմից, ընդ որում՝ վերը նշված բոլոր մարմինների հսկողության վերահսկողությունն իրականացնում են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համատասխան, թերևս միակ բացառությունը՝ կապված ստուգման եղանակների, կազմակերպման, անցկացման ընթացակարգերի և ժամանակահատվածի հետ, վերաբերում է ՀՀ վերահսկիչ պալատին, որի լիազորությունները սահմանվում են «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով, և նրա կողմից իրականացվող վերահսկողությունը առանձնահատուկ է իր վերահսկողության օբյեկտների սահմանման ձևով, ստուգման թեմայի սահմանման ձևով, ստուգման եղանակներով և փուլերով:

Տեղին է հիշատակել այն հանգամանքը, որ նախ վերը նշված պետական մարմիններից որևիցե մեկը, ի տարբերություն վերահսկիչ պալատի, Սահմանդրությամբ ուղղակիորեն վերահսկողական գործառույթ ունեցող մարմին չէ: Մասնավորապես, ՀՀ Սահմանդրության 83.4 հոդվածը ուղղակիորեն վերահսկիչ պալատին իրավասություն է վերապահում վերահսկողություն իրականացնել բյուջետային միջոցների և պետական սեփականության նկատմամբ: Մի կողմից Սահմանադրությունը, վերահսկիչ պալատին լիազորելով իրականացնելու նման վերահսկողություն, սահմանափակում է նրա իրավասությունները կատարելու պետական բուհերի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ համալիր վերահսկողություն. այսինքն՝ բուհերին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ վերահսկիչ պալատը օժտված չէ: Ի կատարումն ՀՀ Սահմանդրության այդ պահանջի՝ «Վերահսկիչ պալատի» մասին ՀՀ օրենքը հստակ ամրագրում է բոլոր այն իրավասությունները, որոնք կիրառելի են պետական բուհերի պարագայում: Բուհերը՝ որպես ոչ առևտրային կազմակերպություններ, կարող են վերահսկողության օբյեկտ հանդիսանալ միայն պետական սեփականության օգտագործման և պետական բյուջեից ստացված միջոցների ծախսման մասով, քանի որ օրենքն արգելում է ստուգում իրականացնել բյուջեի մուտքերի մասով, եթե ստուգվող օբյեկտը բյուջեի մուտք ապահովող լիազոր մարմին չէ²⁰: Բացի դրանից, ինչպես արդեն նշվել է, բուհերի սեփականությունը պետական բյուջեի մաս չէ, և գործող օրենսդրությամբ հիմնադիրը որևիցե իրավունք չունի պետական կազմակերպության սեփականության նկատմամբ, բացառությամբ լուծարումից հետո²¹:

Ամփոփելով ասվածը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ վերահսկողության և հսկողության կազմակերպման գործընթացը

կանոնակարգող գրեթե ոչ մի օրենսդրական ակտում ամրագրված չէ ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝ թողնելով նշված հարցի լուծումը ստուգման մասին որոշում ընդունող մարմնի հայեցողությանը: Այս առումով նշված դրույթի բացակայությունը հակասում է ՀՀ Սահմանդրության 83.5 հոդվածին, ըստ որի՝ բացառապես օրենքով պետք է սահմանվեն իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը: Ստուգումամբ ընդգրկված ժամանակաշրջանը դիտարկվում է որպես վերահսկողության կամ հսկողության պայմաններից մեկը: Տվյալ դեպքում բացառություն է կազմում «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, որն ամրագրում է, որ «*Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո*»²²: Նշված հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ տեսչական գործառույթներով օժտված բոլոր մարմինները, կախված վերահսկողությունն իրականացնող մարմնից և տնտեսավարող սուբյեկտի համախառն շրջանառության ծավալից, սահմանափակված են ստուգումն իրականացնելու ժամկետներով, և ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը օրենսդրորեն ամրագրելուց պետք է հաշվի առնել ստուգումն իրականացնող մարմնի գործունեությունը կանոնակարգող օրենքով սահմանված ստուգումն անցկացնելու ժամկետները (օրերը):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ¹ Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը:
- ² Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:
- ³ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս:
- ⁴ Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը:
- ⁵ Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը:
- ⁶ Տե՛ս «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» հ. 4, էջ 394, Ե., 1980:
- ⁷ Տե՛ս «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, էջ 386, Ե., 1974:
- ⁸ Տե՛ս http://www.see-educoop.net/education_in/pdf/bologna-institut-autonom-oth-enl-t02.pdf
- ⁹ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի տրամաբանությամբ պետական արտաբյուջետային միջոցներ են համարվում պետական **հիմնարկների** արտաբյուջետային միջոցները, այլ ոչ թե պետական **կազմակերպությունների**: «2010թ, պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետը նույն տրամաբանությամբ արտացոլում և ներկայացնում է պետական արտաբյուջետային միջոցների գոյացման աղբյուրները:
- ¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը:
- ¹¹ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի 17.11.2009թ. թիվ 175-Ն ՀՀ Վերահսկիչ պալատի 2010թ. գործունեության ծրագիրը հաստատելու մասին որոշումը և ՀՀ Վարչապետի 2.02.2010թ. թիվ 45-Ս պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2010թ. ծրագիրը հաստատելու մասին որոշումը, ըստ որոնց մինչև նույն պետական բուհերը 2010թ. ընթացքում ընդգրկված են պետական բյուջեից գումարները ստանալու և ծախսելու ճշտության ստուգման համար:
- ¹² Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասը:
- ¹³ Տե՛ս «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը:
- ¹⁴ Տե՛ս «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:
- ¹⁵ Տե՛ս ՀՀ կառավարության **2.09. 2002 թ. N 1579-Ն** ՀՀ ԿԳ նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը, <http://www.edu.am/index.php?id=697&topMenu=-1&menu1=217&menu2=225&arch=0>:
- ¹⁶ Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասը:
- ¹⁷ Չնայած օրենքներում նման լիազորության ամրագրմանը՝ ՀՀ կառավարության 13.10.2005թ. թիվ 1894-Ն ԵՊՀ կանոնադրությունը հաստատելու մասին որոշմամբ պետական լիազոր մարմնին նման լիազորություն վերապահված չէ, http://www.ysu.am/user-files/legislation/157_YSU%20Charter.pdf :
- ¹⁸ Տե՛ս «Հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը:
- ¹⁹ Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 8-րդ կետի 11 և 12-րդ ենթակետերը, <http://www.minfin.am/main.php?lang=1&mode=charter&id=37&iseng=1&isarm=1> :
- ²⁰ Տե՛ս «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:
- ²¹ Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս;
- ²² «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածը:

Габриел Балаян

Кандидат юридических наук

Особенности надзора и контроля над финансово-экономической деятельностью государственных вузов в Республики Армения

В статье представлены и обсуждены правовые основы проведения проверок за финансово-экономической деятельностью гос. вузов, те гос. органы которые Конституцией и законами уполномочены проводить контроль и надзор, а также границы их полномочий. В статье также обсуждены основные принципы различных видов проверок которые проводятся этими органами.

Законодательство Армении, которое регулирует проверки над финансовой деятельностью, иногда противоречит основным принципам законодательства, так как иногда один и тот же вид проверки уполномоченный осуществлять разные органы гос. власти.

По законодательству у гос. вузов есть два вида имущества, первый это гос. имущество которое было отдано вузу учредителем и вуз вправе пользоваться им без платы и без ограничения времени (в частности недвижимость), и вид это то имущество которое вуз создал или приобрел за свои собственные средства, то есть за те средства которые вуз получил от своей коммерческой деятельности. В зависимости от происхождения ресурсов на которые были имплементированы финансовые операции вуза некоторые гос. органы не в праве проводить всестороннюю проверку финансово деятельности вуза. Основным препятствием на для проведения всесторонней проверки является статья 5 Конституции Армении, которая гласит

«Государственные органы и должностные лица правомочны совершать только такие действия, на которые они уполномочены Конституцией или законами».

В законодательстве регулирующем контроль и надзор также есть некоторая недоработка в связи с со сроками давности проверки. Ни один закон не устанавливает ограничения на срок давности проверки, если в уголовном законодательстве такая норма присутствует то в административных правоотношениях касающихся проверкам она отсутствует. Поэтому в статье анализированный и сделаны выводы по возможным решениям и регулированию законодательства в данной сфере.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Gabriel Balayan
Candidate of Legal science

**Peculiarities of the Control and
Supervision of the financial activities
of State Higher Education Institutions**

In the presented article are discussed issues on legal basics of the implementation of control and inspection of HEI, those state authorities which are authorized by the Constitution and Law to conduct such inspections, the frame of their authorization. In the article are also given the key concepts of the different bodies on certain types of financial control and inspection. The Armenian legislation which sets the frames of control and inspection sometimes contradicts with legislation on HEI. Because by permanent legislation the same type of inspection is allowed to be carried out by different state bodies.

By the legislation there are two types of belongings of state HEI's. First is the state property which HEI could use free of charge (mainly real estate) and for unlimited time, and the second are the items which HEI created or purchased by its own sources, so it depends on the origin of the sources by which the HEI held its certain financial activity and the certain governmental authorities are limited to conduct comprehensive financial inspection or control on the sources which were earned from HEI's entrepreneurial activities. The main reason for limitation is the article 5 of the Constitution which prescribes State bodies and public officials are competent to perform only such acts for which they are authorized by Constitution or laws.

There is also a gap in the legislation on

conducting inspection and control, no one law limits the chronology of the supervising even there are some limitations in criminal law in the administrative legislation there is no limitation on how many years can Inspecting body go back in its activity of financial inspection or control. Thus in the article are analyzed and concluded the possible solutions and regulations for the gaps of thematic legislation.

ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԵՆԹԱԿՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՍԵՐՁԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. թեկն., դոցենտ

XX դարի 90-ական թվականներից Հայաստանում իրականացվող քաղաքական և դատաիրավական բարեփոխումների արդյունքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան ոչ միայն տնտեսության, այլ նաև հասարակական կյանքի այլ ոլորտներում: Մեծապես ավելացավ իրավական վեճերի և այնպիսի իրավաբանական գործերի քանակը, որոնց լուծումը պահանջում է իրավասու և յուրիսդիկցիոն կոմպետենտ մարմինների միջամտություն: Չնայած տեղի ունեցած բարեփոխումների արդյունքում վերացվեցին իրավական վեճերի դատական ենթակայության գոյություն ունեցող բոլոր սահմանափակումները, սակայն դա չլուծեց պետական և ոչ պետական մարմինների իրավասության սահմանազատման պրոբլեմը: Վիճելի իրավահարաբերությունների բարդությունն ու տարբեր բնույթն այն օբյեկտիվ պատճառներն են, որոնցով պայմանավորված է քաղաքացիական յուրիսդիկցիայի մարմինների ճյուղավորված համակարգի գոյությունը: Այդ իսկ պատճառով ժամանակակից պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում յուրիսդիկցիոն մարմինների գործունեության իրավական կարգավորումը, այդ թվում՝ նրանց ենթակա գործերի սահմանազատումը: Առավել քան արդիական է դատական մարմիններին ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշների մշակումը, որոնք ուղղորդող նշանակություն պետք է ունենան այս կամ այն գործը դատարանին ենթակա լինելու հարցը լուծելիս: Ցավոք, նման չափանիշներ ներկայումս ոչ ՀՀ դատական օրենսգրքերը և ոչ էլ դատավարական օրենսգրքերը չեն պարունակում, ինչի

հետևանքով այս կամ այն գործի դատական ենթակայության հարցի լուծումը շատ դեպքերում լուրջ դժվարությունների առջև է կանգնում:

Միևնույն ժամանակ դատական մարմինների բազմաթվությամբ էլ պայմանավորված է դատարաններին ենթակա իրավաբանական գործերը հանրապետությունում գործող կոնկրետ դատարանների միջև առավել օպտիմալ կանոններով բաշխելու անհրաժեշտությունը: Օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ, ի տարբերություն ենթակայության մասին կանոնների, ընդդատության հարցերը դատավարական օրենսգրքերում համակարգված ձևով իրավական կարգավորման են ենթարկվել: ՀՀ-ում վարչական արդարադատության համակարգի ձևավորման և վարչական դատարանի ստեղծման կապակցությամբ առավել արդիական են դարձել ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանների և վարչական դատարանի առարկայական ընդդատության սահմանազատման հիմնախնդիրը:

Իրավունքի մասին վեճերը և իրավաբանական այլ գործերը տարբեր յուրիսդիկցիոն մարմիններում կամ տարբեր իրավասության դատարաններում լուծելու հնարավորությունը մի շարք դեպքերում չափազրգիռ անձին փաստացի գրկում է դատարան դիմելու իր սահմանադրական իրավունքը իրականացնելու հնարավորությունից: Ենթակայության և առարկայական ընդդատության մասին նորմերի անկատարությունը նպաստում է կոլիզիաների, գործի ենթակայության կամ ընդդատության վերաբերյալ վեճերի առաջացմանը, ինչը խոչընդոտում է արդարադատության մատչելիության սահմանադրական սկզբունքի իրագործմանը, վնասում է պետության դատական իշխանության հեղինակությանը: Իրավաբանական գործերը լուծելու

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ժանրաբեռնվածության համաչափ և գիտականորեն հիմնավորված բաշխումը մի կողմից՝ յուրիսդիկցիոն տարբեր մարմինների և մյուս կողմից՝ տարբեր իրավասության կոնկրետ դատարանների միջև արդարադատության մատչելիության սկզբունքի իրացման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Հակառակ պարագայում արդարադատության հարցում շահագրգռված անձինք կարող են գործ ունենալ իրենց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը շոշափող գործերի ձգձգվող և շատ հաճախ ոչ որակյալ լուծումների հետ: Հետևաբար ենթակայության և առարկայական ընդդատության ինստիտուտների պատշաճ իրավական կարգավորումը անհրաժեշտ նախապայման է արդարադատության մատչելիությունն ապահովելու հարցում:

Օրենքով գործերի դատական ենթակայության պայմաններ նախատեսելը իշխանության տարբեր ճյուղերի մեջ մտնող մարմինների գործառույթների բաշխման նպատակ է հետապնդում: Նշված օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացնում՝ վեր հանելու այն ընդհանուր և օբյեկտիվ չափանիշները, որոնք պայմանավորում են այս կամ այն գործի դատական ենթակայությունը:

Դատավարագիտության մեջ ավանդաբար քննարկումների առարկա են հանդիսանում դատական ենթակայության որոշման հիմքում դրվող չափանիշները¹: Դրանք այն կողմնորոշիչ սկզբունքներն են, որոնց հաշվառմամբ օրենսդիրը լուծում է պետության յուրիսդիկցիոն համակարգը կազմող մարմինների, ինչպես նաև տարբեր իրավասության դատարանների միջև գործերի բաշխման հարցը: Այդ սկզբունքները հաշվի առնելով էլ պետք է լուծվեն ենթակայության հնարավոր բախումները (կոլիզիանակերը): Գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս վեր հանելու

գործերի ենթակայությունը որոշելու մի շարք սկզբունքներ:

Դատական ենթակայության խնդիրը լուծելիս առաջին հերթին հիմք պետք է ընդունել ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Նման սահմանադրական նորմի առկայության պայմաններում կարելի է ասել, որ անձի խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքը ձեռք է բերել անսահմանափակ բնույթ: Այս առումով պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք նշված հանգամանքը դիտարկում են որպես իրավունքի կամ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի մասին բոլոր վեճերը դատական ենթակայության վերապահելու հիմք²:

ՀՀ սահմանադրության 18, 19, 91, 92 և մի շարք այլ հոդվածների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ դատական համակարգի մեջ ընդգրկված ՀՀ սահմանադրական դատարանը, ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված վարչական դատարանն ընդհանուր առմամբ օժտված են իրավաբանական ցանկացած բնույթի գործեր լուծելու և արդարադատություն իրականացնելու լիազորություններով: Բոլոր մյուս պետական և ոչ պետական մարմինները, որոնք օրենքով լիազորված են լուծելու իրավունքի և փաստի մասին վեճեր, հանդիսանում են այդ գործերի նախնական, նախադատական լուծման մարմիններ, քանի որ նրանց որոշումները, իրենց հերթին, դատական վերահսկողության առարկա են³:

Այդ մասին է վկայում մի շարք իրավական ակտերի վերլուծությունը: Այսպես, Քաղ. օր. 13 հոդվածի համաձայն՝ վարչական կարգով քաղաքացիական իրավունք-

ների պաշտպանությունն իրականացվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում, ընդ որում՝ վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի⁴ 34-րդ հոդվածի համաձայն արբիտրաժի վճիռը օրենքով նախատեսված հիմքերով կարող է շահագրգիռ անձի պահանջով չեղյալ ճանաչվել արբիտրաժին աջակցող և վերահսկող դատարանի կողմից⁵: Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն հիմքերով կարող է մերժել արբիտրաժի վճիռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը: Բացի դրանից, ինչպես արդեն նշվել է, թեև մի շարք իրավական հարցեր լուծում են տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների, կոոպերատիվների, բաժնետիրական ընկերությունների և առևտրային այլ կազմակերպությունների ընդհանուր ժողովները կամ այլ մարմինները, հաշտեցման հանձնաժողովները, նշված բոլոր մարմինների որոշումները, իրենց հերթին, դատական քննության առարկա կարող են դառնալ, եթե շահագրգիռ անձը գտնում է, որ տվյալ որոշումը խախտում է իր՝ ՀՀ սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով կամ այլ իրավական ակտերով սահմանված իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը:

Նշված հանգամանքները մի շարք հեղինակների հիմք են տվել խոսելու իրավունքների պաշտպանության դատական ձևի գերակայության մասին⁶:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ենթակայության ինստիտուտի հիմքում նախևառաջ դրվում է դատական իշխանության մարմիններին իրավաբանական գործերի ընդհանուր ենթակայության սկզբունքը: Այլ կերպ ասած՝ դատական իշխանության մարմիններին է ենթակա իրավունքի մասին վեճերի և ցանկացած այլ իրավաբանական գործի քննությունն ու լուծումը: Օրենքով, իհարկե, այս կամ այն կատեգորիայի գործերի լուծումը կարող է վե-

րապահվել պետական կամ ոչ պետական այլ մարմիններին, սակայն դա չի կարող բացառել այդ մարմինների կայացրած ակտերի հետագա ստուգումը համապատասխան դատական մարմինների կողմից:

Ենթակայությունը որոշելու կարևորագույն չափանիշներից մեկն այն իրավահարաբերության (գործի) բնույթն է, որից բխում է վեճը: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ ենթակայությանն են վերապահված սահմանադրական արդարադատության իրականացան հետ կապված գործերը (ՀՀ սահմանադրության 93 և 100 հոդվ.): Վարչական մարմինների ենթակայությանն օրենքով վերապահվում են բացառապես հանրային իրավահարաբերություններից (մաքսային, հարկային, լիցենզավորման, իրավունքների գրանցման և այլն) բխող գործերը, քանի որ վարչական մարմինները չեն կարող դուրս գալ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակից և իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք դուրս են իրենց իրավասության շրջանակներից⁷: Նոտարական մարմինների իրավասության են վերապահված անվիճելի իրավունքների և փաստերի հաստատման հետ կապված գործերը⁸: Առևտրային արբիտրաժների քննությանն էլ կարող են հանձնվել բացառապես առևտրային բնույթի վեճեր⁹: Ինչպես տեսնում ենք, իրավահարաբերության բնույթն էական նշանակություն ունի այս կամ այն մարմինն ենթակա գործերի շրջանակը որոշելիս:

Վիճելի իրավահարաբերության բնույթը կողմնորոշիչ նշանակություն ունի նաև հենց դատական համակարգի ներսում տարբեր իրավասության դատարանների՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների և վարչական դատարանին ենթակա գործերի շրջանակը որոշելու համար:

Նշված սահմանազատումն իրականացնելու համար օրենսդիրն օգտագործել է առարկայական ընդդատության ինստիտուտը: Վերջինիս հիմքում օրենսդրի կողմից

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

դրվում է միասնական դատական համակարգի մեջ մտնող միասեռ դատարանների առարկայական իրավասության գաղափարը: Որպես դատարաններին ենթակա գործերն ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների միջև բաշխելու չափանիշ դիտարկվում է դատական քննության առարկա դարձած վիճելի իրավահարաբերության (դատական քննության առարկայի) իրավական բնույթը, այդ քվում սուբյեկտային կազմը:

Առարկայական ընդդատության կանոններով, որոնք ամրագրված են ՔԴՕ 15 և ՎԴՕ 8 հոդվածներում, որոշվում է դատարանին ենթակա բոլոր քաղաքացիական և վարչական գործերի բաշխումը մի կողմից ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների և մյուս կողմից մասնագիտացված վարչական դատարանի միջև:

ՔԴՕ 15 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր քաղաքացիական իրավական գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին: «Քաղաքացիական գործ» հասկացությունը դատավարական օրենսդրությունը չի բացահայտում: Սակայն, նկատի ունենալով ՎԴՕ 8-րդ հոդվածի բովանդակությունը, ըստ որի վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը՝ բացառությամբ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերի, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերի, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերի, կարելի է եզրակացնել, որ բոլոր մյուս գործերը կարող են դիտարկվել որպես քաղաքացիական գործեր:

Ուշագրավ է, որ, ի տարբերություն վար-

չական մասնագիտացված դատարանի, որի առարկայական իրավասությունը հստակ սահմանված է ՎԴՕ-ի 8-րդ հոդվածում, ընդհանուր իրավասության դատարանների առարկայական իրավասությունն ունիվերսալ (համապարփակ) բնույթ ունի. ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են դատարաններին ենթակա բոլոր այն գործերը, որոնց քննությունն ու լուծումը վերապահված չեն վարչական դատարանի առարկայական ընդդատությանը:

ՀՀ յուրիսդիկցիոն մարմինների համակարգի մեջ են մտնում ՀՀ սահմանադրական դատարանը, ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, առևտրային արբիտրաժները և այլ մարմիններ, որոնց օրենքով վերապահված է առանձին իրավաբանական հարցեր լուծելու իրավասություն: Գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ այլ մարմինների իրավասությանն օրենքով ուղղակիորեն չվերապահված գործերը ենթակա են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների ենթակայությանը: Ի տարբերություն ՀՀ սահմանադրական դատարանի, վարչական դատարանի, պետական և տեղական ինքնակառավարման կամ այլ յուրիսդիկցիոն մարմինների՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները հստակ սահմանված (սպառիչ) առարկայական իրավասություն չունեն և քննում են բոլոր այն գործերը, որոնք կապված են իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հետ՝ բացառությամբ նշված մարմինների բացառիկ ենթակայությանը վերապահված գործերի: Այս տեսանկյունից դիտարկելով անձի դատական պաշտպանության իրավունքը՝ կարելի է եզրակացնել, որ նույնիսկ այն դեպքում, երբ օրենքը չի սահմանում տվյալ գործի ենթակայությունը, ոչ ոք չի կարող զրկվել իր գործն ընդհանուր իրավասության դատա-

րանում քննելու իրավունքից: Տվյալ հանգամանքը թույլ է տալիս խոսելու ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին իրավաբանական գործերի ունիվերսալ ենթակայության սկզբունքի գոյության մասին:

Առանձին դեպքերում օրենքը շահագրգիռ անձանց հնարավորություն է ընձեռում իրենց միջև ծագած վեճը լուծելու այլընտրանքային մարմիններում: Ելնելով տվյալ հանգամանքից՝ դատավարագիտության մեջ մշակվել է այլընտրանքային ենթակայության կատեգորիան: Ինչպես նշում է Ռ.Գ. Պետրոսյանը, գործերի այլընտրանքային ենթակայություն առկա է այն ժամանակ, երբ օրենսդրության համաձայն՝ շահագրգռված անձն իր կամ այլ անձի իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության նպատակով իր հայեցողությամբ կամ հակառակ կողմի հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա կարող է դիմել կամ դատարան, կամ այլ մարմնին¹⁰: Նման հնարավորությունն ուղղակիորեն բխում է իրավունքների անարգել իրականացման քաղաքացիաիրավական սկզբունքից և քաղաքացիական դատավարության տնօրինչականության սկզբունքից¹¹:

Ղեկավարվելով այլընտրանքային մարմիններում վեճը լուծելու հնարավորության ընձեռման սկզբունքով՝ կարելի է ասել, որ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ շահագրգիռ անձին վերապահված է իր խախտված կամ վիճարկվող իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության ձևի ընտրության այլընտրանք, բացառիկ դատական ենթակայության մասին խոսք լինել չի կարող:

Ասվածը հավասարապես վերաբերում է նաև այլընտրանքային ենթակայության հատուկ տարատեսակ հանդիսացող կողմերի համաձայնությամբ որոշվող (պայմանագրային) ենթակայությանը:

Այս առումով կողմնորոշիչ նշանակություն ունեն ՔԴՕ 18, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2 և 7 հոդվածները,

որոնք պարունակում են առևտրային արբիտրաժի քննությանը ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշները: Վերջիններիս միաժամանակյա առկայության դեպքում է, որ կարող է խոսք լինել գործն արբիտրաժի քննությանը ենթակա լինելու մասին:

Դրանք են

- *Իրավունքի սուբյեկտների միջև ՀՀ դատարաններին ենթակա վեճի առկայությունը:*

Արբիտրաժային քննության առարկա կարող են հանդիսանալ միայն այն գործերը, որոնց առարկան դատարաններին ենթակա՝ իրավունքի սուբյեկտների միջև ծագած իրավունքի մասին վեճն է: Նման եզրահանգումը բխում է ՔԴՕ 18-րդ հոդվածի ձևակերպումից, համաձայն որի՝ դատարանին ընդդատյա¹² վեճը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Այստեղից բխում է, որ այն դեպքերում, երբ գործ ունենք այլ մարմինների իրավասությանը օրենքով վերապահված գործի (այլ ոչ իրավունքի մասին վեճի) հետ, վերջինս արբիտրաժի քննությանը հանձնվել չի կարող:

- *Վիճելի իրավահարաբերության առևտրային բնույթը:*

Ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ գործում է դատական պաշտպանության անսահմանափակ իրավունք, արբիտրաժային կարգով կարող են քննվել և լուծվել միայն որոշակի իրավահարաբերություններից բխող վեճերը: Եթե քաղաքացիական դատավարությունում հիմնական պահանջ է համարվում վեճի դատական ենթակայությունը, ապա առևտրային արբիտրաժում վերը նշվածի դրսևորումը խիստ սահմանափակված է:

Արբիտրաժային քննության առարկա հանդիսացող գործերի շրջանակը որոշելու հարցում առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

կետին, որի համաձայն՝ «առևտրային» հասկացությունը ներառում է առևտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային: Առևտրային բնույթի հարաբերությունները մասնավորապես ներառում են հետևյալ գործարքները՝ բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման և փոխանակման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալման, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների: Այսինքն՝ առևտրային արբիտրաժային կարգով լուծվում են վերը նշված իրավահարաբերություններից բխող վեճերը:

Առևտրային արբիտրաժային կարգով կարող են լուծվել առևտրային իրավահարաբերություններից բխող վեճերը:

Ասվածից բացի՝ պետք է շեշտել այն հանգամանքը, որ արբիտրաժային քննության առարկա հանդիսացող գործերի շրջանակը «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով, մեղմ ասած, այնքան էլ հաջող չի կարգավորվել: Ի տարբերություն «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի՝ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998 թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով հստակ սահմանվում էր, որ պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև ալիմենտային իրավահարաբերություններից ծագող վեճերը և իրավաբանական ան-

ձանց ու քաղաքացիների սնանկության գործերը միջնորդ դատավարության կարգով քննվել չեն կարող: «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը, որը փոխարինելու եկավ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» 1998 թ. ՀՀ օրենքին, նման նորմ չի պարունակում, որի պատճառով կարող է սխալ պրակտիկա ձևավորվել, թե առևտրային հարաբերությունների հետ ուղղակիորեն կապված՝ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև իրավաբանական անձանց ու քաղաքացիների սնանկության գործերը ևս կարող են քննվել արբիտրաժային կարգով: Ինչպես իրավագիտորեն նշում էր Ռ. Գ. Պետրոսյանը, «նշված բացառությունները հիմնականում բացատրվում են հիշյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմերի հրամայական (իմպերատիվ) բնույթով. միջնորդ դատարանն այդ գործերով, բացի նյութաիրավական և ընդհանուր իրավասության դատարանների գործունեությունը կարգավորող ընթացակարգային նորմերը կիրառելուց, ուրիշ անելիք չունի, ուստիև այդ գործերը նրա լուծմանը չպետք է հանձնվեն»¹³: Այդ հանգամանքը հաշվի առնելով է, որ Վ. Վ. Հովհաննիսյանն առաջարկում է նշված բացառությունները նախատեսել նաև «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում՝ հստակեցնելով արբիտրաժային քննության առարկա հանդիսացող գործերի շրջանակը¹⁴:

- Վիճելի իրավահարաբերության սուբյեկտների միջև սովյալ վեճի լուծման կապակցությամբ արբիտրաժային համաձայնության առկայությունը:

Արբիտրաժային դատարանների իրավասությանն օրենքով հանձնված գործերը քննվում և լուծվում են, եթե առկա է այդ մասին կողմերի համաձայնությունը: Դատական կարգով արբիտրաժի իրավասությանը հանձնված գործերի քննությունը և լուծումը բացառվում են, եթե առկա է վավեր արբիտրաժային համաձայնություն, և արբիտրաժային դատարան դիմելու հնա-

րավորությունը չի վերացել¹⁵:

Միայն տվյալ վեճի լուծման կապակցությամբ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում է, որ վերը քվարկված չափանիշներին համապատասխանող գործը դառնում է ենթակա արբիտրաժի քննությանը: Թերևս դա է պատճառը, որ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևն ուսուցնասիրող բոլոր գիտնականները արբիտրաժային համաձայնությունը դիտարկում են որպես արբիտրաժային իրավահարաբերությունների ծագման պարտադիր նախադրյալ¹⁶: Քանի դեռ չկա վավեր ու գործող արբիտրաժային համաձայնություն, գործը ենթակա է դատարանի քննությանը:

Պայմանագրային ենթակայության այլընտրանքային բնույթն էլ այն է, որ վիճելի իրավահարաբերության կողմերն ունեն ԲԴՕ-ով և «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով սահմանված չափանիշներին բավարարող գործը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը իրենց համաձայնությամբ արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու այլընտրանք:

Ի մի բերելով վերը շարադրվածը, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել քաղաքացիական և վարչական գործերի դատական ենակայությունը որոշելու համար կողմնորոշիչ նշանակություն ունեցող հետևյալ սկզբունքները, որոնք ուղղակիորեն կամ ուղղակիորեն ամրագրված լինելու ԶԶ օրենսդրությամբ, միաժամանակ կարող են ծառայել որպես նշված գործերի ենթակայությունը որոշելու չափանիշներ:

1) Դատական իշխանության մարմիններին իրավունքի մասին վեճերի և այլ իրավաբանական գործերի ընդհանուր ենթակայությունը: Դատական իշխանության մարմիններին են ենթակա իրավունքի մասին վեճերի և ցանկացած այլ իրավաբանական գործի քննությունն ու լուծումը, եթե օրենքով այս կամ այն կատեգորիայի գործերի

լուծումը վերապահված չէ պետական կամ ոչ պետական այլ մարմինների բացառիկ իրավասությանը: Վերջին հանգամանքը չի կարող բացառել այդ մարմինների՝ կայացրած ակտերի նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը:

2) Իրավաբանական գործերի բաշխումը՝ յուրիսդիկցիոն մարմինների միջև վիճելի իրավահարաբերությունների բնույթից ելնելով: ԶԶ սահմանադրական դատարանի իրավասությանն են վերապահված սահմանադրական արդարադատության իրականացման հետ կապված գործերը, պետական ոչ դատական և տեղական ինքնկառավարման մարմինների (վարչական մարմինների) ենթակայությանը՝ բացառապես հանրային իրավահարաբերություններից բխող գործերը, արբիտրաժների ենթակայությանը՝ առևտրային հարաբերություններից բխող և արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժի քննությանը, հանձնված գործերը:

3) Ընդհանուր իրավասության դատարաններին իրավաբանական գործերի ունիվերսալ ենթակայությունը: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր այն գործերը, որոնք կապված են իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հետ՝ բացառությամբ օրենքով այլ յուրիսդիկցիոն մարմինների ենթակայությանը վերապահված գործերի:

4) Օրենքով նախատեսված դեպքերում շահագրգիռ անձանց՝ այլընտրանքային մարմիններում վեճը լուծելու հնարավորության ընձեռումը: Այն դեպքերում, երբ օրենսդրությամբ շահագրգիռ անձին վերապահված է իր խախտված կամ վիճարկվող իրավունքի կամ օրինական շահի պաշտպանության ձևի ընտրության այլընտրանք, գործը շահագրգիռ անձի հայեցողությամբ կարող է քննվել օրենքում նշված այլընտրանքային մարմիններում:

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- ¹ Տե՛ս, օրինակ, **Осипов Ю.К.** Подведомственность юридических дел. Свердловск, 1973, էջ 7-13, **Решетникова И.В., Ярков В.В.** Гражданское право и гражданский процесс в современной России. Екатеринбург-Москва, 1999, էջ 94, **Щеголов В.Н.** Основы подведомственности гражданских дел // В кн.: Основы гражданского законодательства и Основы гражданского судопроизводства СССР и союзных республик. Саратов, 1981, էջ 127-131, **Чудиновских К.А.** Подведомственность в системе гражданского и арбитражного процессуального права. Дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2002, էջ 102-132, **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ.՝ լրացումներով և ուղղումներով, Եր., ԵՊՀ հրատ., 2007, էջ 261-262 և այլն:
- ² Տե՛ս **Жуйков В.М.**, նշված աշխ., էջ 109:
- ³ Տե՛ս նույն տեղում, էջ 107:
- ⁴ Ընդունվել է 25.12.2006 թ., ուժի մեջ է մտել 10.02.2007 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007/8(532), 31/01/2007:
- ⁵ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ այդպիսին է հաղիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը:
- ⁶ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, նշված աշխ., էջ 29-30:
- ⁷ Տե՛ս **Чудиновских К.А.** Подведомственность в системе гражданского и арбитражного

процессуального права. Дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2002, էջ 113-115:

- ⁸ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, նշված աշխ., էջ 728-729, ինչպես նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածը (ՀՀՊՏ 3/ 2(177), 10/01/2002):
- ⁹ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, Իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևը, ԵՊՀ հրատ., Եր., 2008, էջ 65-67, ինչպես նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը:
- ¹⁰ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, նշված աշխ., էջ 282:
- ¹¹ Տե՛ս **Сапожников С.А.** Принцип диспозитивности в гражданском процессе. Дисс... канд. юрид. наук, М., 2006, էջ 112:
- ¹² Ինչպես իրավացիորեն նկատում է Վ. Հովհաննիսյանը, ՔԴՕ 18-րդ հոդվածում «ընդդատյա» բառը սխալ է օգտագործվել, առավել նպատակահարմար է «իրավասություն» կամ «ենթակայություն» եզրույթների օգտագործումը: Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշված աշխ., էջ 70: Նման դիրքորոշման հետ մենք ևս համամիտ ենք՝ նկատի ունենալով «ենթակայություն» և «ընդդատություն» եզրույթների տարբերությունները:
- ¹³ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 2-րդ հրատ.՝ լրացումներով և ուղղումներով, Եր., ԵՊՀ հրատ., 2003, էջ 678:
- ¹⁴ Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշված աշխ., էջ 68-69:
- ¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 51:
- ¹⁶ Տե՛ս, օրինակ, նույն տեղը, 204-206 էջերը:

Сергей Мегрян

*Заведующий кафедрой гражданского
процесса ЕРГУ, канд. юрид. наук., доцент*

КРИТЕРИИ ОРЕДЕЛЕНИЯ СУДЕБНОЙ ПОДВЕДОМСТВЕН- НОСТИ ГРАЖДАНСКИХ И АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЛ

Множественность судебных и иных юрисдикционных органов обуславливает необходимость поиска наиболее оптимального распределения полномочий по разрешению различных категорий юридических дел между этими органами. Возможность разрешения правовых споров в различных юрисдикционных органах, либо в судах различных компетенций в ряде случаев становится определенным препятствием для заинтересованных лиц в реализации конституционного права на судебную защиту нарушенных или оспариваемых прав и законных интересов. Отсутствие законодательно четко сформулированных критериев (принципов) опеределения судебной подведомственности гражданских и административных дел, в некоторых случаях несогласованность норм о подве-

домственности и предметной подсудности друг с другом, отсутствие единообразной практики применения указанных норм способствуют появлению коллизий подведомственности, споров между юрисдикционными органами о наличии или отсутствии у них правомочий на разрешение конкретных категорий дел в ряде случаев является причиной необоснованного отказа в принятии заявлений по поводу защиты нарушенных или оспариваемых прав и законных интересов, либо прекращения производства по делу, либо «отсылки» дела из одного органа в другой. Эти негативные явления в конечном счете подрывают авторитет судебной власти, препятствуя реализации общепризнанного принципа доступности правосудия.

В предстальной статье, на основе анализа норм законодательства Республики Армения, а также с учетом достижений отечественной и зарубежной гражданско-процессуальной науки предпринята попытка выявления основных принципов института подведомственности и разработки общих и объективных критериев определения судебной подведомственности гражданских и административных дел.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**Sergey Meghryan***Head of Chair of Civil Procedure of YSU,
Candidate of legal science, associate professor***DETERMINATION CRITERIA OF
JUDICIAL JURISDICTION OF CIVIL
AND ADMINISTRATIVE CASES**

A large number of judicial and other authorized bodies conditions the requirement of seeking for the most reasonable distribution of authorities between these bodies for the settlement of legal cases of different categories. The opportunity for the settlement of legal disputes by different authorized bodies or courts of distinct competence in a range of cases turns to a certain obstacle for concerned parties to realize their constitutional right of judicial protection of infringed or voidable rights and legal interests. Both the absence of legally precise definition of criteria (principles) for the determination of judicial jurisdiction of civil and administrative cases, and partially the existence of non-corresponding norms regulat-

ing jurisdiction and subject-matter cognizance, as well as the absence of practice on unified implication of the mentioned norms, lead to collisions on jurisdictional issues, disputes between authorized bodies on the existence either lack of authority for the settlement of cases of certain categories, and as a result in some cases they cause groundless admission refusals of applications on the protection of infringed or voidable rights and legal interests, either dismissions of judicial proceedings or forwarding the case to another body. Ultimately this negative phenomenon disrupts the reputation of judicial power, hence creating barriers for the realization of universally recognized principle of access to justice.

In the presented article an attempt is made to identify the main principles of the institution of jurisdiction, as well as to elaborate the general and objective criteria of judicial jurisdiction determination of civil and administrative cases on the basis of analysis of rules of law of the Republic of Armenia, as well as with the consideration of achievements of both national and foreign science of Civil Procedural Law.

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПОДХОДЫ ОБСТОЯТЕЛЬСТВ РАССЛЕДОВАНИЯ МАССОВЫХ БЕСПОРЯДКОВ

Ваге ЕНГИБАРЯН

Доцент кафедры Уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета, кандидат юридических наук

При расследовании массовых беспорядков уже с первоначального этапа создается типичная обстановка. Эта обстановка в плане расследования обладает рядом особенностей, которые связаны с моделями механизма массовых беспорядков.

Р. С. Белкин, З. И. Кирсанов, В. Я. Колдин, Ю. Г. Корухов и другие авторы в механизм преступления в качестве самостоятельного элемента включают обстановку совершения преступления. Под обстановкой ученые-криминалисты понимают определенную совокупность людей, предметов, явлений, других факторов, создающих среду для осуществления какой-либо деятельности. В частности, обстановку составляет совокупность различного рода материальных объектов, явлений, процессов, состояний и отношений, создающих соответствующие условия для совершения конкретных действий (в том числе, преступлений) или препятствующих их совершению. Все эти действия происходят в конкретных условиях: материальная обстановка, время, освещенность, проявления природно-климатических факторов, производственная деятельность, быт, окружающие люди и т.п.¹

Указанные условия и обстоятельства, проявляющиеся в определенные моменты и влияющие на преступное событие, складывающиеся независимо от воли или по воле его участников и в основ-

ном характеризующие среду и другие факторы объективной действительности, в которой формируется и совершается преступление, в совокупности называются обстановкой события преступления. Преступник и потерпевший вынуждены учитывать эту обстановку, по возможности и необходимости вносить в нее выгодные для себя изменения.

А. Н. Васильев и Р. К. Гавло определяют ситуацию как совокупность информации, характеризующую состояние расследования по уголовному делу без учета обстановки и условий, в которых оно происходит². Г. А. Зорин определяет криминалистическую ситуацию как совокупность решаемых проблем³.

Ситуация — определенное состояние производства по уголовному делу на конкретной стадии или в определенный промежуток времени, характеризующаяся наличием комплекса проблем, сложностей объективного и субъективного характера, которые необходимо разрешить лицу, ведущему процесс.

От того, насколько правильно следователи и оперативно-розыскные работники оценивают первоначальную следственную ситуацию по делу как благоприятную для расследования по горячим следам и, соответственно, насколько умело осуществляют эту деятельность, во многом зависит не только успех расследования конкретного преступления, но и уровень раскрываемости преступлений в целом. Своевременным и умелым применением данной методики этот уровень может быть значительно повышен.

Следует отметить также, что характеризовать специфику криминальных си-

Քրեական իրավունք եւ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

туаций может только комплекс определенных устойчивых признаков⁴. Одни и те же признаки до выявления их комплекса могут указывать на совершение преступления различными способами. Применительно к преступлениям, совершаемым в условиях массовых беспорядков, даже наличие комплекса специфических признаков не дает основания для категорического суждения об индивидуальной определенности использованного способа совершения преступления.

Повторяемость способа совершения преступлений в условиях массовых беспорядков не может быть абсолютной и неизменной, а приобретает полноту специфических признаков в зависимости от ситуативно определяемой совокупности детерминирующих факторов. Вместе с тем совпадение таких факторов часто носит условный характер.

Анализ и оценка сведений, характеризующих преступление с криминалистических позиций, так или иначе, сопряжены с применением криминалистической классификации способов действий преступника, являющейся в теории и практике важным эвристическим средством⁵.

Применительно к массовым беспорядкам актуальной является проблема криминалистической классификации действий участников преступлений на различных этапах преступной деятельности. Практическая значимость такой классификации состоит в том, что уровнем осведомленности членов следственно-оперативной группы о возникшей в криминальной ситуации специфике определяются во многом направление, объем и пределы предварительного следствия по уголовным делам, содержание рекомендаций по технико-криминалистическому обеспечению.

В зависимости от мотивов и целей, поведенных актов участников массовых беспорядков на различных этапах преступной деятельности, необходимо различать комплексы действий, составляющих способ совершения преступления.

Исходя из вышеуказанного, при расследовании массовых беспорядков необходимо установить обстоятельства трех степеней общности: 1) общую обстановку, свидетельствующую о распространении массовых беспорядков в каком-то регионе или населенном пункте; 2) отдельный эпизод массовых беспорядков; 3) конкретные действия, непосредственно выполненные отдельным лицом в ходе данного эпизода массовых беспорядков.

1. Сведения об общей обстановке характеризуют массовые беспорядки, произошедшие в каком-то отдельном регионе или населенном пункте в целом. Они включают данные о начале и окончании массовых беспорядков, их поводах, направленности и основных способах совершения, последствиях, размерах причиненного материального ущерба, а так же конкретных чрезвычайных мерах по охране общественного порядка и обеспечению безопасности граждан, принятых органами власти и управления.

2. Вторая группа данных касается обстоятельств отдельного эпизода (или нескольких эпизодов), в участии котором обвиняется данное лицо. Они включают сведения о конкретном месте и времени его протекания, составе и численности толпы, ее вооруженности, объектах нападения, совокупных действиях, в которых выражались массовые беспорядки.

3. Третья группа данных касается конкретных действий, выполненных лицом в ходе расследуемого эпизода массовых беспорядков. Она содержит сведения о его призывах к толпе о совершении погромов, непосредственном разо-

рении жилых и производственных помещений, уничтожении находящегося там имущества, поджогах строений и т.д. На основе этих сведений, взятых в совокупности с данными о конкретном эпизоде и общей картине массовых беспорядков, можно сделать вывод об активном участии лица в массовых беспорядках, а также о признаках конкретных преступлений, содержащихся в его действиях.

Следует также отметить, что на формирование преступных действий в ходе массовых беспорядков могут влиять проявление предкриминальной, криминальной и посткриминальной ситуации. Провоцировать, облегчать, способствовать, препятствовать формированию и функционированию механизма рассматриваемого преступления могут и другие ситуации.

Например, массовые беспорядки, имевшие место 1-2 марта 2008 года в центре города Еревана, развивались поэтапно. Конфликтная ситуация началась, когда 1-го марта рано утром, в пределах 05.00 часов, работники правоохранительных органов и силовых структур РА на основании имеющейся оперативной информации о незаконном хранении огромного количества оружия и боеприпасов участниками несанкционированного митинга на площади Свободы у здания Театра оперы и балета в центре города Еревана, с целью выявления вышеупомянутого оружия и боеприпасов и предотвращения планирующегося масштабного вооруженного нападения на государственные учреждения, начали проводить обыск. Агрессивная настроенная толпа численностью более семи тысяч, оказав сопротивление, двинулась в направлении площади Республики и, наконец, обосновалась у памятника им. Шаумяна по соседству со зданиями Посольств Российской Федерации, Франции и Италии. Вооруженная толпа под влиянием выступлений организаторов митинга начала совершать массовые

беспорядки в центре города⁶.

В вышеупомянутом примере правомерное требование правоохранительных органов о проведении обыска встретило препятствие со стороны участников несанкционированного митинга, которые потом спровоцировали своими действиями массовые беспорядки⁷.

В ходе массовых беспорядков наибольшую общественную опасность представляют действия организаторов массовых беспорядков. Как правило, ими распространяются провокационные слухи, призывы к противоправным действиям. С этой целью организуются митинги, изготавливаются листовки и лозунги антиобщественного характера.

Наиболее характерными являются действия активных участников массовых беспорядков. На практике зафиксированы случаи, когда они, помимо вышеупомянутых действий, открывают стрельбу из имеющегося у них огнестрельного оружия, изготавливают и используют взрывные устройства. Для совершения погромов они применяют подручные средства: палки, камни, различные инструменты и т.п.

Такова, на наш взгляд, специфика криминальных ситуаций, которая, безусловно, не является исчерпывающей. При более подробном изложении способов совершения преступлений их мотивы и цели могут быть классифицированы по признакам места преступной деятельности, формы вины преступников, вида массовых беспорядков и по другим основаниям.

Следует отметить также, что типичность обстановки при расследовании массовых беспорядков связана со сформировавшейся в данном регионе сразу после совершения массовых беспорядков общей ситуацией.

В данном случае характерен тот факт, что еще существует социальное напряжение в данном регионе, многие государственные и другие учреждения,

Քրեական իրավունք եւ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

структуры пока еще не находятся в надлежащем ритме, население не довольно проводимой политикой и т.д. Данная обстановка характерна особенно для первоначального этапа расследования.

С учетом вышеуказанных факторов, во-первых, с целью обеспечения стабильности региона и безопасности населения, во-вторых, для полного и эффективного расследования массовых беспорядков в данном регионе государством объявляется чрезвычайное положение.

Как справедливо определяет В. Н. Григорьев, «чрезвычайное положение означает особый правовой режим деятельности органов государственной власти и управления, предприятий, учреждений и организаций, допускающий установленные законом ограничения

прав и свобод граждан и прав юридических лиц, а также возложение на них дополнительных обязанностей. В отличие от обычных мер, эта мера обеспечения правопорядка касается не только лиц, допустивших правонарушение, она затрагивает интересы всего населения, проживающего в данном регионе, ограничивая предоставленные ему законодательством права и свободы»⁸.

Следует отметить, что в целях предотвращения совершающихся массовых беспорядков 1-2 марта 2008 года в центре города Еревана, Указом Президента Республики Армения было введено чрезвычайное положение на срок 20 дней⁹.

Таким образом, можно сказать, что типичная обстановка при расследовании массовых беспорядков обусловлена ситуацией, сложившейся в данном регионе после совершения массовых беспорядков.

¹ Криминалистика: Учеб. для вузов / Под ред. Р. С. Белкина, 2-е издание, переработанное и дополненное. М., 2006. С. 503.

² **Васильев А. Н., Гавло Р. К.** Проблемы методики расследования отдельных видов преступлений. М.: Изд-во МГУ, 1978. С. 31; **Гавло Р. К.** Теоретические проблемы и практика применения криминалистической методики расследования отдельных видов преступлений. - Томск: Изд. Томского университета, 1985. С. 319.

³ **Зорин Г. А.** Криминалистическая методология. - Минск, 2000. С. 39.

⁴ **Куклянскис С. С.** Криминалистическое значение способа хищения. В кн.: Применение научных методов при расследовании преступлений и изучении преступности. Ч. 2. — Вильнюс, 1973. С. 53.

⁵ **Великородный П. Г.** Криминалистическая характеристика и классификация способов

совершения и способов уклонения от ответственности. В сб.: Криминалистическая характеристика преступлений. М., 1984. С. 89.

⁶ Официальный сайт Полиции РА: <http://www.police.am/sectionnews/5192/02/03/08>.

⁷ См. подробнее: Газета «Голос Армении». N 22 (19672) от 4 марта 2008г., ст. 1-2; Электронная газета Панорама: <http://www.panorama.am/am/society/meeting/2008/03/01>; и др.

⁸ Григорьев В. Н. Расследование массовых беспорядков в условиях чрезвычайного положения.- М.: Академия МВД РФ, 1992. - С. 16.

⁹ Подробнее см., Газета «Республика Армения» от 4 марта 2008г. N 41(4378) . - С. 1; Официальный сайт Президента РА: <http://www.president.am/president/arm/498/12/03/08>.

Վահե Ենգիբարյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Vahe Engibaryan

**Չանգվածային անկարգությունների
քննության պայմանների
վերաբերյալ տեսական
մոտեցումները**

**THEORETICAL APPROACHES TO
THE CIRCUMSTANCES OF THE
INVESTIGATION OF MASS DIS-
ORDERS**

Չանցագործությունների քննության մեթոդիկայի կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում հանցավոր դեպքի քննության պայմանները՝ քննչական իրադրությունը: Քրեական գործի հաջող քննության և բացահայտման համար առանցքային նշանակություն ունի այդ պայմանների գրագետ և ի շահ քննության նպատակների օգտագործումը:

Վերը նշվածն առավել կարևորվում է Չանգվածային անկարգությունների քննության պարագայում, քանի որ այս դեպքում քննության իրականացման համար առկա են լինում էականորեն տարբերվող պայմաններ. այն որպես կանոն իրականացվում է արտակարգ դրության, ասպացուցողական տեղեկատվության սակավության պայմաններում և այլն:

Այդուհանդերձ, մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա կարող ենք առանձնացնել երեք խումբ հիմնական համգամանքներ, որոնք անհրաժեշտ է պարզաբանել բոլոր քննչական իրավիճակներում: Դրանք են.

1. որոշակի վայրում իրականացված Չանգվածային անկարգությունների ընդհանուր պատկերը,

2. Չանգվածային անկարգությունների առանձին դրվագները,

3. յուրաքանչյուր մասնակցի կոնկրետ գործողությունները դրվագներից յուրաքանչյուրում:

The main constituent part of the methodology of crimes investigation is its conditions, mainly investigation situation. For successful investigation of crime and its disclosure correct usage of this conditions in benefit of the aims of investigation is basically actual. The foregoing is more important in case of investigation of mass disorders; as, in this case, there are basely different conditions for realization of investigation – investigation, as a rule, proceeds in the conditions of emergency cases, lack of evidential information and etc.

However, an analysis of professional literature gives us an opportunity to distinguish three groups of conditions, which have to be clarified in all investigational conditions. These are the following:

1. The whole view of mass disorders in particular place.

2. Separate episodes of mass disorders.

3. Concrete actions of each participator during each episode of mass disorders.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Վազգեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
քննչական վարչության 3-րդ բաժնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու**

Մաքսանենգության հանցակազմի քրեաիրավական հիմնախնդիրները գործնականում ցայտուն դրսևորվում են, երբ անձի արարքին քրեաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն է առաջանում: Մաքսանենգության հանցակազմի հիմնախնդիրներին տարբեր ժամանակներում անդրադարձել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ որոշ հայ գիտնականներ¹, մաքսանենգությունը նախատեսող նորմի դիսպոզիցիան վերլուծել են տարբեր հեղինակներ, նույնիսկ դիսպոզիցիայի առավել նպաստավոր ձևակերպման տարբերակներ են առաջարկվել, սակայն իրավակիրառ պրակտիկայում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կապված է ոչ միայն դիսպոզիցիայի ձևակերպման, այլ նաև դրա մեկնաբանման հետ: Այս առումով անհրաժեշտ վերլուծության լուրջ պակաս է զգացվում: Այդպիսի հիմնախնդիրներից մասնավորապես կարելի է առանձնացնել՝ 1. մաքսանենգության առարկայի մաքսային և շուկայական արժեքների տարբերության հարցը՝ որպես արարքի որակման ուղղորդիչ, 2. մաքսային հսկողությունից թաքցնելու հիմնահարցերը մասնավորապես թմրանյութերի մաքսանենգության դեպքերում, 3. ոչ բաժանելի գույքի մասնակի հայտարարագրման դեպքում մաքսանենգության չափի որոշման հարցը և այլն:

Մաքսանենգության դեմ արդյունավետ պայքար մղելու կարևորությունը չափազանց մեծ է առողջ տնտեսություն ունենա-

լու համար, մասնավորապես մեզանում, քանի որ ՀՀ պետական բյուջեի մոտ 1/3 մասը կազմում են մաքսային մուտքերը: Որպես քրեաիրավական պայքարի արդյունավետության երկու հիմնական չափորոշիչներ կարելի է առանձնացնել քրեական պատասխանատվության անխուսափելիությունը և միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովումը՝ նույնատիպ դեպքերում երկակի ստանդարտները բացառելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 215 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսանենգություն է համարվում՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխումն առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով՝ բացառությամբ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը /մեկ միլիոն դրամ/՝ բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ տեղափոխելու դեպքի, երբ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը /արժեքը/՝ երկու հարյուր հազար դրամ/:

Ինչպես տեսնում ենք, հոդվածի 5-րդ մասով նշվում է «ապրանքների կամ առարկաների արժեքը» զեղույթը, որը տարբեր

մեկնաբանությունների տեղիք է տալիս: Այսպիսի ձևակերպմամբ պարզ չի դառնում՝ խոսքը մաքսային արժեքի⁶, թե՞ շուկայական արժեքի մասին է: Պրակտիկայում մի շարք դեպքերում կարող է հաշվարկվել շուկայական, մյուս դեպքերում էլ՝ մաքսային արժեքը: Մասնավորապես շրջանցիկ մաքսանենգությունների դեպքերում /մաքսային հսկողությունից թաքցնելով/, փաստացի հայտնաբերված մաքսանենգ ապրանքների վերաբերյալ փորձաքննությամբ հաշվարկվում է շուկայական արժեք, քանի որ շրջանցիկ մաքսանենգ ապրանքներով հիմնականում չեն լինում բեռն ուղեկցող փաստաթղթեր: Այս պարագայում առաջ է գալիս նաև մեկ այլ խնդիր, երբ փորձաքննությամբ որոշվում են մեծածախ և մանրածախ շուկայական արժեքները: Ընդ որում, երբ մեծածախ շուկայական արժեքը չի գերազանցում մեկ միլիոն դրամի շեմը, իսկ մանրածախ շուկայական արժեքը գերազանցում է, առաջ է գալիս հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը: Նման դեպքերում, դասական առումով, մենք գործ ունենք չփարատված կասկածների հետ, որոնք օրենքի ուժով պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի, այսինքն՝ հիմք պետք է ընդունվի մեծածախ շուկայական արժեքը: Սակայն, ինչպես մաքսային հսկողությունից թաքցնելու, այնպես էլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով մաքսանենգության դեպքերում ապրանքների մաքսային արժեքը որոշելը և դրանով առաջնորդվելը ճիշտ է: Նման մոտեցումը կարևոր է միատեսակ իրավակիրառ պրակտիկա ապահովելու տեսանկյունից: Մաքսային օրենսգրքի 91 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները կամ դրանց համեմատ սույն օրենսգրքի 75 և 76 հոդվածների համաձայն նույն կամ համանման ապրանքները նույն տեսքով իրացվում են ՀՀ ներքին շուկայում, ապա դրանց մաքսային արժեքը որոշվում է համախառն ամենամեծ քանակությամբ, նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում այդ ապրանքների կամ դրանց համեմատ նույն

կամ համանման ապրանքների միավորի իրացման գնի հիման վրա՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ կետում նշված նվազեցումները և 3-րդ կետում նշված ավելացումները՝ ըստ ներմուծման և արտահանման դեպքերի:

Ինչպես տեսնում ենք, օրենսդրորեն հստակ սահմանված է մաքսային արժեքի որոշման կարգը: Մաքսանենգության դեպքերում մաքսային արժեքը հիմք ընդունելը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու ընթացքում դեռևս չեն գտնվում ապրանքային շուկայում, և դրանց օրինական մաքսագերծման դեպքում անձը մաքսային վճարները կատարում է՝ հիմք ընդունելով ապրանքների մաքսային արժեքը, և հետևաբար մաքսանենգության դեպքերում չեն վճարվում մաքսային արժեքից բխող մաքսային վճարները: Բացի այդ, շուկայական արժեքով ապրանքները բնորոշվում են, երբ դրանք արդեն գտնվում են իրացման շրջանառության մեջ: Հարցը վերջնականապես կարգավորելու համար անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի 215 հոդվածի 5-րդ մասում «արժեքը» բառից առաջ ավելացնել «մաքսային» տերմինը:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն չի նախատեսում ապրանքների չհայտարարագրման կամ անհավաստի հայտարարագրման համար, ինչը պրակտիկ լուրջ խնդիրներ է առաջացնում: Օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 188 հոդվածի համաձայն՝ մաքսանենգություն է համարվում ոչ միայն ապրանքների մաքսային հսկողությունից թաքցնելը կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելը, այլ նաև դրանց չհայտարարագրումը կամ անհավաստի հայտարարագրումը, ինչն ընդունելի մոտեցում է: Ներկայումս տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս այն հարցը, թե ինչպես կարելի է սահմանազատել ապրանքների չհայտարարագրումը և թաքցնելը: Այդ խնդիրն առավել մանրամասն անդրադարձել են ռուս հեղինակները, քանի որ, իրենց օրենսդրությամբ, ինչպես նշվեց,

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ապրանքների չհայտարարագրումը և թաքցնելը հանցանքի կատարման առանձին եղանակներ են համարվում: Որոշ դեպքերում ապրանքների մաքսային հսկողությունից թաքցնելը կարող է կատարվել նաև դրանք չհայտարարագրելով կամ անհավաստի հայտարարագրելով: Սակայն հեղինակների մեծ մասը դրանք դիտարկում է միմյանցից առանձին, ինչպես որ նշված է ՌԴ քրեական օրենսդրությամբ, որպես մաքսանենգության կատարման առանձին եղանակներ²: Պրակտիկայում և գրականության մեջ տեսակետ կա, որ ապրանքների կամ առարկաների թաքցնելը պետք է անպայման լինի հատուկ պատրաստված թաքստոցներում պահելով կամ հատուկ այնպես հարմարեցնելով, որ դրա հայտնաբերումը դժվարություններ հարուցի կամ դրանց հայտնաբերման համար անհրաժեշտ լինի հատուկ միջոցների գործադրում, ինչպես նաև ապրանքներին այլ տեսք տալով³: Խնդիրը առավել առարկայական է դառնում, երբ խոսքը ծավալով փոքր առարկաների մասին է, օրինակ՝ թմրամիջոցը, չնայած այն որոշ դեպքերում նույնպես կարող է մեծ ծավալների հասնել: Սակայն «թաքցնել» հասկացությունը այս դեպքում չափազանց նեղ է մեկնաբանվում, քանի որ կարող են լինել առանձին դեպքեր, երբ ոչ մի թաքստոց էլ պատրաստված չլինի՝ թեկուզ և ավելորդ կասկածներ չառաջացնելու նպատակով, սակայն կոնկրետ առարկան վիզուալ դաշտից թաքցված լինի: Օրինակ՝ մաքսային սահմանով անցնելիս թմրամիջոցների թաքցնելը տաբատի գրպանում, այլ ոչ թե հատուկ պատրաստված թաքստոցում կամ գուլպայի մեջ: Նման բոլոր դեպքերում մենք գործ ունենք մաքսանենգության փաստի հետ: Այս դեպքում առկա են հանցակազմի բոլոր տարրերը, և արարքն իր մեջ պարունակում է քրեաիրավական հասարակական վտանգավորություն: ՀՀ մաքսային օրենսգրքի 138 հոդվածի 2-րդ

մասի դ. կետի համաձայն՝ մաքսային հսկողության իրականացման ձև է համարվում նաև ֆիզիկական անձանց բանավոր հարցումը: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, երբ չհայտարարագրված ապրանքը դուրս է լինում մաքսային հսկողություն իրականացնող անձի տեսողական դաշտից, և համապատասխան հարցման դեպքում էլ բացասական պատասխան է ստացվում, մենք գործ ունենք մաքսային հսկողությունից ապրանքը թաքցնելու դեպքի հետ: Օրինակ՝ անձը մաքսային սահմանը հատում է՝ տաբատի գրպանում գիտակցաբար ունենալով 1 գրամ ընդհանուր քաշով ափիոն տեսակի թմրամիջոց, որը չի հայտարարագրում, և մաքսային տեսուչի բանավոր հարցմանը, թե իր մոտ հայտարարագրման ենթակա ապրանքներ, դրամ, զենք, զինամթերք, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կա՞ն, թե՞ ոչ, տվյալ անձը պատասխանում է, որ չկան: Բերված օրինակում անձը կատարում է թմրամիջոցի մաքսանենգություն: Եթե նույն օրինակը քննարկենք այն տարբերությամբ, որ թմրամիջոցը ոչ թե գրպանում է պահված լինում, այլ, օրինակ՝ վերնաշապիկի տակ՝ մեջքին անրակցված, կամ սեփական մարմնում պահված, այս դեպքերում միայն արարքի կատարման եղանակն է այլ, սակայն արարքն ամբողջովին պահպանում է իր հանրային վտանգավորությունը, և երկու դեպքում էլ առկա են մաքսանենգության հանցակազմի բոլոր տարրերը: Չհայտարարագրման դեպքում ապրանքները չեն թաքցվում մաքսային հսկողությունից, պարզապես դրանք ինչ-ինչ պատճառներով չեն նշվում մաքսային հայտարարագրում: Օրինակ՝ անձը բեռնատար ավտոմեքենայով ՀՀ մաքսային սահմանով փաստացի տեղափոխում է 10 տոննա լոլիկ, սակայն հայտարարագրում է 8 տոննա: Այսպիսի դեպքերում տեղի է ունենում վարչական իրավախախտում, որի համար մաքսային օրենսգրքով նախատեսված է տուգանք այդ ապրանքների /չհայտարարագրած ապրանքների/ ամբողջ մաքսային արժեքի չափով: Ընդ որում, նշենք, որ երբ մաքսային իրավախախտումը վարչական բնույթի է,

դրանց համար նախատեսված տուգանքները օրենքով հաշվարկվում են մաքսային արժեքով, այլ ոչ թե շուկայական:

Այն դեպքերում, երբ ապրանքը իր ամբողջ ծավալով չի թաքցվում մաքսային հսկողությունից, սակայն դրանց համար ներկայացվում են մաքսային ձևակերպման կեղծ տվյալներով փաստաթղթեր /օրինակ՝ ինվոյսներ/, որոնք խաբեությամբ օգտագործվում են, այս դեպքում առկա է մաքսանենգության հանցակազմը: Օրինակ՝ անձը բեռնատար ավտոմեքենայով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է 10 տոննա լուլիկ՝ վեց միլիոն դրամ իրական մաքսային արժեքով, հայտարարագրում է 10 տոննա, սակայն մաքսային մարմիններին ներկայացնում է փաստաթուղթ՝ համաձայն որի, նշված ապրանքի ամբողջ մաքսային արժեքը կազմում է չորս միլիոն դրամ: Բերված օրինակում առկա է երկու միլիոն դրամ արժեքով ապրանքների մաքսանենգություն: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, երբ մաքսանենգության առարկան բաժանելի գույք չէ: Վերը նշված օրինակում լուլիկը բաժանելի է ըստ քաշի և քանակի: Եթե նույն օրինակը վերցնենք ավտոմեքենայի համար, երբ դրա իրական մաքսային արժեքը կազմում է վեց միլիոն դրամ, սակայն մաքսային մարմիններին ներկայացվում են փաստաթղթեր, համաձայն որոնց՝ նշված ապրանքի ամբողջ մաքսային արժեքը կազմում է չորս միլիոն դրամ: Նման դեպքերում, եթե մաքսանենգություն համարվի ամբողջ ավտոմեքենան որպես ոչ բաժանելի գույք, կատարվի երկակի մոտեցում երկու նմանատիպ դեպքերի համար: Այ-

սինքն՝ բերված երկու օրինակներում էլ վեց միլիոն դրամ մաքսային արժեք ունեցող ապրանքները ներկայացվում են որպես չորս միլիոն դրամ, սակայն մի դեպքում անձը դատարանի առաջ է կանգնում երկու միլիոն դրամի ապրանքի մաքսանենգության համար, իսկ մյուս դեպքում՝ վեց միլիոն դրամի ապրանքի մաքսանենգության համար: Նման մոտեցումը արդարացի չէ. միայն այն հանգամանքը, որ գույքը բաժանելի չէ, չի կարող փոխել արարքի էությունը: Ամբողջական պատկերացում կազմելու համար քննարկենք նաև հետևյալ օրինակը. վեց միլիոն դրամ մաքսային արժեք ունեցող ավտոմեքենան մաքսային սահմանով անցկացվում է մաքսային հսկողությունից թաքցնելով, և առհասարակ ոչինչ չի հայտարարագրվում: Այս դեպքում ամբողջ արժեքը թաքցվում է, և անձը պատասխանատու է հենց այդ չափով: Այսինքն մաքսանենգության քրեաիրավական գնահատականը պետք է տրվի՝ հաշվի առնելով անձի դիտավորության ուղղվածությունը, թե հատկապես ինչ արժեքի սահմաններում է անձը մաքսանենգություն կատարելու դիտավորություն ունեցել:

Նշված հարցերի առավել ամբողջական լուծումը հնարավոր է տալ մաքսանենգության հանցակազմի դիսպոզիցիայի վերաձևակերպմամբ՝ հաշվի առնելով մատնանշված պրակտիկ հիմնախնդիրները: Սակայն, բացի օրենսդրական փոփոխություններից, անհրաժեշտ է արարքի որակումը տալ իրավունքի սկզբունքային նորմերի շրջանակներում, որոնք ունեն գերակա նշանակություն:

¹ Տե՛ս Գ.Դանիելյան Տնտեսական գործունեության դեմ ուղղված զանցանքների և հանցագործությունների քննության ու որակման հիմնախնդիրները: Երևան, 2003թ., Գաբուզյան Ա. Тенденции корыстной преступности в Армении. Իրավագիտության հարցեր, N3, 2005, Մաղաքյան Ն. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ: Երևան, 1999թ.:

² Տե՛ս Лебедев В. М. Комментарий к уголовному кодексу РФ, Юрайт, Москва. 2006, էջ 489, Арендаренко А.В., Афанасев Н. Н. и.т.д. Комментарий к уголовному кодексу РФ, КноРус, Москва 1997:

³ Տե՛ս Лебедев В. М., Скуратов Ю. И. Комментарий к уголовному кодексу РФ, Норма, Москва. 2002, էջ 477:

ՔՐԵՄԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ
ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Вазген Шахназарян

Начальник 3-го отдела следственного управления Комитета по государственным доходам при Правительстве РА, кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ
ПРАКТИЧЕСКИЕ ЗАДАЧИ
СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ
КОНТРАБАНДЫ**

Настоящая статья посвящена основным задачам, касающимся состава преступления контрабанды, каковыми являются: 1. вопрос различия таможенных и рыночных ценностей предмета контрабанды в качестве качественного показателя поступка, 2. основные вопросы скрытия от таможенного контроля, в частности в случаях контрабанды наркотиков, 3. вопрос определения размера контрабанды в случае частичного декларирования неделимого имущества и т.д.

В частности автор предлагает в случаях контрабанды в качестве показателя квалификации преступления определение таможенной стоимости товаров и руководство им. Такой подход важен с точки зрения обеспечения однотипной правоприменительной практики. Для окончательного урегулирования вопроса предлагаем добавить термин “таможенная” до слова “стоимость” в части 5 статьи 215 Уголовного Кодекса РА. Кроме того, предлагаем расширить диспозицию состава преступления контрабанды в уголовном кодексе РА и кроме сокрытия товаров или использования тамо-

женных и других документов, методом совершения контрабанды будет считаться также недеklarирование или неверное декларирование товаров.

Автор также коснулся вопроса, когда предмет контрабанды не является делимым имуществом и при определении размера контрабанды интерпретируется разным образом. Только то обстоятельство, что имущество неделимо, не может изменить сущность поступка. Т.е. уголовно-правовая оценка контрабанды должна быть дана, принимая во внимание направление намерения лица, особенно в пределах какой стоимости лицо имело намерение совершения контрабанды.

В заключении статьи было отмечено, что максимально полное решение отмеченных вопросов возможно при переоформлении диспозиции состава преступления, принимая во внимание отмеченные практические основные задачи. Однако кроме законодательных изменений, необходимо дать квалификацию поступка в пределах принципных норм, которые имеют преимущественное значение.

Vazgen Shahnazaryan

Head of the 3rd department of investigative administration of the State Revenue Committee at the Government of the Republic of Armenia, candidate of legal science

**SEVERAL PRACTICAL ISSUES
OF THE CONTRABAND CORPUS
DELICTI**

This article is dedicated to the main tasks, regarding the contraband corpus delicti as follows: 1. the issue of difference of customs and market values of the subject of contraband as qualitative index of an action, 2. main issues of concealment from customs control, particularly in cases of drug smuggling, 3. the issue of determining the size of contraband in case of partial declaration of inseparable property, etc.

In particular, the author offers in case of contraband determination of an index of crime qualification of customs value of the goods and guiding by it. Such approach is important from the viewpoint of securing single-type enforcement practice. For final regulation of the issue we'd like to offer to add the term "customs" before the word "value" in section 5, article 215 of the Criminal Code of the Republic of Armenia. Besides, we'd like to offer to widen disposition of the contraband corpus delicti in the Criminal Code of the Republic of Armenia and beside the concealment of goods or usage of customs and other documents, non-declaration or incorrect declaration of the goods will be considered as a methods of contraband committing.

The author touched upon the issue, when the subject of contraband isn't considered as a separable property and is interpreted in different ways at determining the size of contraband. Only the circumstance that the property is divisible can't change the essence of action. I.e. criminal-legal evaluation of contraband must be given, taking into account the direction of intentions of a person; especially in limits of what amount the person had an intention to commit contraband.

In conclusion it should be stated that maximum full solution of the pointed issues is possible in case of re-legalization of disposition of corpus delicti taking into account the pointed practical bases of the task. However, beside the legislative changes, it's necessary to classify the action within the limits of principal norms having precedence.

Քրեական իրավունք եւ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****Հետաքննութեան ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՊԱՐՁԵՑՎԱԾ ՁԵՎ, Թ՛Ե ՍԿՁԲՆԱՓՈՒԼ****Կարեն ԲԻՇԱՐՅԱՆ**

ՀՀ ոստիկանության ակադեմիայի քրեական դատավարության և քրեագիտության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (01.07.1998 թ., այսուհետ՝ ՀՀ քր.դատ.օր.) ընդունման նախօրեին քննարկման առարկա էր դարձել քրեական դատավարությունում հետաքննության ինստիտուտը պահպանելու նպատակահարմարության մասին հարցը:

Հետաքննության ինստիտուտն առաջին անգամ Հայաստանի քրեական դատավարություն ներմուծվել է 19-րդ դարի 2-րդ կեսին, երբ ռուսական կայսր Ալեքսանդր II-ի մեծ բարեփոխումները տարածվեցին Արևելյան Հայաստանի տարածքում: 1860 թվականի հունիսի 8-ին Ալեքսանդր II-ը ստորագրեց իրավական երեք փաստաթղթեր՝ «Учреждение судебных следователей», «Наказ судебным следователям» և «Наказ полиции о производстве дознания по происшествиям, могущим заключать в себе преступление или проступок»: Այդ նորմատիվ ակտերի ընդունմամբ նախաքննության կատարումը վերցվեց ոստիկանության ենթակայությունից և տրվեց դատական քննիչներին: Ոստիկանությանը թողնվեց հետաքննության գործառույթների իրականացումը, այսինքն՝ նախնական, անհետաձգելի քննչական գործողությունների կատարումը հանցագործության փաստը հայտնաբերելուց անմիջապես հետո՝ առանց անձին պաշտոնական մեղադրանք առաջադրելու:

Հետագայում վերը նշված իրավական

երեք ակտերն ընդգրկվեցին 1864 թ. Քրեական դատավարության կանոնադրության տեքստում («Устав уголовного судопроизводства»): Նշված իրավական ակտում «հետաքննությունը» ներկայացված էր որպես «ոստիկանության կողմից իրականացվող նախնական ստուգումներ՝ հանցագործության մասին իրենց հասած լուրերի և տվյալների արդարացի կամ ոչ արդարացի լինելու հանգամանքը պարզելու համար...»: Դրանով իսկ հետաքննությունը սահմանվում էր որպես ոստիկանության՝ հանցագործության մասին հաղորդման ստուգման ուղղությամբ իրականացվող գործունեություն: Քրեադատավարական այդ գործունեությունը Հայաստանի ժամանակակից քրեական դատավարության պայմաններում (ինչպես նաև ԱՊՀ մի շարք այլ երկրների) թեև իրականացվում է հետաքննության մարմինների կողմից (և ոչ միայն նրանց), սակայն կազմում է քրեական գործի հարուցման փուլի բովանդակությունը:

Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում (1918-1920 թթ.) հետաքննության կատարման կարգն էական փոփոխությունների չենթարկվեց. հետաքննությունն իրականացվում էր 1864 թ. Քրեական դատավարության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հետաքննությունն իրականացնում էին միլիցիայի մարմինները, որոնք պարտավոր էին օրերի ընթացքում դատական քննիչին և դատախազին հաղորդել հանցագործության հատկանիշներ պարունակող ցանկացած իրադարձության մասին, իսկ հաշտարար դատարանների քննությանը ենթակա հանցագործությունների և զանցանքների մասին տվյալները միլի-

ցիան պետք է փոխանցեր նրանց: Հետաքննության գլխավոր նպատակն էր՝ հավաստիանալ՝ իրականում կա՞ն հանցագործության կամ զանցանքի հատկանիշներ²:

Այսպիսով, Հայաստանի երկրորդ Հանրապետությանը նախորդող շրջանում քրեական դատավարությունում հետաքննությունն անցկացվում էր հարցումների և դիտումների միջոցով, այդ թվում՝ գաղտնի, որոնք իրականացվում էին հանցագործության կամ զանցանքի մասին տվյալների պարզման և ստուգման նպատակով մինչև քննիչի կողմից դատավարական գործունեությունն սկսելը: Հետաքննությունը չուներ դատավարական ձև, դատավարական ժամկետներով այն սահմանափակված չէր, և անգամ դրա արդյունքները դատարանները չէին օգտագործում որպես ապացույցներ:

Հայաստանի երկրորդ Հանրապետության շրջանում (1920-1990 թթ.) դրա տարածքում, ինչպես և մյուս միութենական հանրապետություններում, գործում էր խորհրդային օրենսդրությունը: Այդ շրջանում հետաքննությունը ձեռք բերեց նոր, այն է՝ դատավարան որակ, քանզի այն (հետաքննությունը) սկսեց իրականացվել հետաքննության մարմնի՝ հանցագործությունների քննության ուղղությամբ իրականացվող գործունեության ձևով: Խորհրդային առաջին 1922 թ. քրեական դատավարության օրենսգիրքը առանձնացնում էր հետաքննության մարմինների՝ հանցագործությունների քննության ուղղությամբ իրականացվող դատավարական գործունեությունը՝ կախված այն բանից, թե որ գործերով էին նրանք գործում՝ այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր էր, թե այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր չէր (98-րդ հոդված): Հետաքննության մարմինների գործունեության այդպիսի դատավարական ձևն իր արտացոլումը և հետագա զարգացումն ստացավ 07.03.1961 թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օ-

րենսգրքում (այսուհետ՝ ՀԽՍՀ քր.դատ.օր.), որը նույնպես առանձնացնում էր հետաքննության մարմինների գործունեությունը՝ 1) այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր էր (108-րդ հոդված) և 2) այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր չէր (109-րդ հոդված):

Գործունեության առաջին տեսակը դրսևորվում էր անհետաձգելի քննչական գործողությունների կատարման ձևով, որոնք կատարելուց հետո, ընդ որում՝ 10 օրից ոչ ուշ գործը պետք է հանձնվեր քննիչին: Երկրորդ տեսակն իրենից ներկայացնում էր ամբողջ ծավալով քննության իրականացում՝ հետաքննիչի կողմից գործն իր վարույթ ընդունելու պահից մինչև գործով վարույթի կարճումը կամ այն մեղադրական եզրակացությանը դատախազին հանձնելը՝ դատարան ուղարկելու համար³:

Հետաքննության վերջին ձևն իրականացվում էր նախաքննության կանոններով, սակայն երեք բացառություններով՝ 1) հետաքննության իրականացման ընթացքում պաշտպանը չէր մասնակցում, 2) տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և նրանց ներկայացուցիչներն իրազեկվում էին հետաքննության ավարտման և գործը դատախազին հանձնելու մասին, սակայն գործի նյութերը ծանոթացման համար նրանց չէին ներկայացվում, 3) հետաքննության մարմիններին վերապահված չէր քննիչի իրավունքը՝ դատախազի ցուցումների հետ համաձայն չլինելու դեպքում չկատարել դրանք և գործն իր գրավոր առարկություններով ներկայացնել վերադաս դատախազին: Համաձայն չլինելու դեպքում հետաքննության մարմինն իրավունք ուներ այդպիսի ցուցումները բողոքարկել վերադաս դատախազին, սակայն չկասեցնելով դրանց կատարումը:

Հետաքննության մարմինների գործունեության առաջին տեսակը (քրեական գործի հարուցումը և անհետաձգելի քննչական գործողությունների իրականա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ցումը) դատավարական գրականության մեջ ստացել է հատված հետաքննություն, իսկ երկրորդը (նախնական քննության կատարումն ամբողջ ծավալով)՝ լրիվ հետաքննություն անվանումը՝:

Ավելի ուշ Հայաստանի քրեական դատավարություն ներմուծվեց պարզեցված մինչդատական վարույթի այնպիսի ձև, ինչպիսին էր նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևը: Այսպես, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 26.06.1966թ. «Խուլիզանության համար պատասխանատվության ուժեղացման մասին» հրամանագրի⁶ հիման վրա ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 29.09.1966 թ. հրամանագրով ՀԽՍՀ քր.դատ.օր.-ը լրացվեց նոր՝ 8-րդ բաժնով (385-391-րդ հոդվածներ), որը սահմանեց խուլիզանության վերաբերյալ քրեական գործերով վարույթի հատուկ կարգ⁷: Խուլիզանական գործողությունների համար ձերբակալված անձանց նկատմամբ թույլատրվում էր կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը մինչև քրեական գործի հարուցումը: Այդ կարգը վերացվեց ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 28.04.1977 թ. հրամանագրով, և վերականգնվեց այդ գործերով խափանման միջոցներ կիրառելու ընդհանուր կարգը⁷:

ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 26.04.1978 թ. հրամանագրով պարզեցված կարգ մտցվեց նաև պետական կամ հանրային գույքի մանր հափշտակության վերաբերյալ գործերի համար⁸: Եվ, վերջապես, ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 27.02.1985 թ. հրամանագրով 1961 թ. քր.դատ.օր.-ի 8-րդ բաժինը վերանվանվեց «Նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձև», և քրեական դատավարության տարբերակված այդ ձևը տարածվեց ևս երեսուն հանցակազմերի վրա⁹:

Այսպիսով, հետաքննության ինստիտուտի պատմական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու հետաքննության հետևյալ հիմնական տեսակները. 1) հետաքննությունը՝ որպես հանցագործության մասին տեղեկատվության ստուգման եղանակ, 2) լրիվ հետաքննություն (այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր չէ), 3) հատված հետաքննություն (անհետաձգելի քննչական գործողությունների կատարումն այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր է):

ՀՀ գործող քր.դատ.օր.-ը նախատեսում է հատված հետաքննության ձևը, քանզի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը պարտադիր է բոլոր քրեական գործերով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում: Այլ կերպ ասած՝ ՀՀ քր.դատ.օր.-ով հետաքննության մարմինների դատավարական գործունեությունը հանգում է անհետաձգելի քննչական գործողությունների կատարմանը՝ հանցանք կատարած անձին հայտնաբերելու, հանցագործության հետքերը հայտնաբերելու և ամրագրելու նպատակով:

Ժամանակակից պատկերացումներով հետաքննության մարմինների կողմից անհետաձգելի քննչական գործողությունների կատարումն այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր է, չի համարվում հետաքննության տեսակ: Նման մոտեցում է դրված ՌԴ քր.դատ.օր.-ի հիմքում, որում հետաքննությունը բնորոշվում է որպես նախնական քննության ձև, որն իրականացնում է հետաքննիչը (քննիչը) այն քրեական գործով, որով նախաքննությունը պարտադիր չէ (ՌԴ քր.դատ.օր.-ի 5-րդ հոդվածի 8-րդ կետ): Ռուսաստանի ժամանակակից քրեական դատավարությունում հետաքննության մարմինների գործունեության այնպիսի տեսակը, ինչպիսին է անհետաձգելի քննչական գործողությունների կատարումը քննիչին ենթակա հանցագոր-

ծությունների վերաբերյալ գործերով, այլև չի ներառվում «հետաքննություն» հասկացության մեջ, չնայած այդ գործունեությունը նախկինի նման բնորոշ է հետաքննության մարմիններին:

Կարծում ենք, որ լրիվ հետաքննության ինստիտուտի վերացումը և նախնական քննության միայն այնպիսի ձևերի նախատեսումը, ինչպիսիք են նախաքննությունը և նախնական քննության միագումար իրականացումը¹⁰ (հետաքննության մարմնի կողմից անհետաձգելի քննչական գործողությունների և քննիչի կողմից նախաքննության կատարումը), նախնական քննության կազմակերպման լավագույն մոդելը չէ: Այդպիսի մոդելը, կարծում ենք, կատարյալ չէ հետևյալ նկատառումներով:

Նախ, չի ապահովվում քրեական գործերի որակյալ քննությունը քննիչների գերբեռնվածության պատճառով: Երկրորդ, անհետաձգելի քննչական գործողությունները հետաքննություն կատարող անձանց կողմից կատարվում են անբարեխղճորեն և վատորակ, քանզի քննության ընթացքի և արդյունքների համար պատասխանատուն վերջին հաշվով քննիչն է և ոչ թե հետաքննություն (անհետաձգելի քննչական գործողություններ) կատարող անձը: Երրորդ, չի ապահովվում քննության կատարման

խնայողականությունը (ռացիոնալությունը), քանզի բոլոր քրեական գործերով (անկախ հանցագործության ծանրությունից և ակնհայտությունից) նախաքննությունը կատարվում է քննիչի կողմից, այն դեպքում երբ քրեական դատավարության արժեքը բավականին մեծ է¹¹: Չորրորդ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հետաքննության մարմինները գլխավորապես կենտրոնացած են հանցագործությունների մասին հաղորդումների ստուգման ուղղությամբ իրականացվող նախնական գործողությունների վրա՝ դատավարական գործունեության, որը կազմում է քրեական գործի հարուցման փուլի բովանդակությունը:

Այսպիսով, մինչդեռ տական վարույթի տարբերակման անհրաժեշտությունը, կարծում ենք, արդիական է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության համար: Այդպիսի տարբերակման հիմնախնդրի լուծումը նշմարվում է լրիվ հետաքննության ինստիտուտի ներմուծման մեջ: Ընդ որում, քննիչների իրական բեռնաթափման համար հնարավոր է թվում հետաքննության մարմինների ենթակայությանը վերապահել ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ բոլոր քրեական գործերը:

¹ Судебные уставы 20.11.1864 г. с изложением рассуждений, на коих они основаны, изданные Государственной канцелярией. Изд. 2-е, доп. и изм. Ч. 2. СПб., 1867. էջ 112:

² Տե՛ս Казинян Г.С. История развития уголовного процесса в Армении. - Ереван, 1999, էջ 53:

³ ՀԽՍԽ քր.դատ.օր.-ի 117-րդ հոդվածը նախատեսում էր թվով 17 հանցակազմեր, որոնց վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը պարտադիր չէր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա իրականացումը (նախաքննության) անհրաժեշտ էր համարում դատախազը կամ դատարանը:

⁴ Տե՛ս Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т. 2. М., 1970, էջ 27, Даев В.Г., Шимановский В.В. Уголовный процесс: учебник. М., 1972, էջ 236:

⁵ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տեղեկագրեր, 1966 թ. N 151, հոդվ. 595:

⁶ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագրեր, 1966 թ. N 19, հոդվ. 151:

⁷ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագրեր, 1977 թ. N 3, հոդվ. 61:

⁸ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագրեր, 1978 թ. N 8, հոդվ. 91:

⁹ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագրեր, 1985 թ. N 4, հոդվ. 29:

¹⁰ Տե՛ս Михайлов В.А. Формы предварительного расследования / Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики: Сб. науч. статей. — М.: Академия управления МВД России, 2007, էջ 7:

¹¹ Տե՛ս Бажанов С.В. Стоимость уголовного процесса: дисс. ... д-ра юрид. наук. — Н. Новгород, 2002:

ՔՐԵՄԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ ԵՎ**ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ****Карен Бишарян***доцент кафедры уголовного процесса и криминалистики Академии полиции РА, кандидат юридических наук***Дознание — самостоятельная форма или первоначальный этап предварительного расследования?**

На основании исторического анализа института дознания в уголовном процессе Армении автор статьи разделяет следующие основные виды дознания: 1) дознание, как способ проверки информации о преступлении; 2) полное дознание (по делам, по которым предварительное следствие необязательно); 3) усеченное дознание (производство неотложных следственных действий по делам, по которым предварительное следствие обязательно.

Автор приходит к выводу, что упразднение института полного дознания и рассмотрение лишь таких форм предварительного расследования, как предварительное следствие и суммарное производство предварительного расследования (производство неотложных следственных действий органом дознания и предварительного следствия следователем), не самая лучшая модель построения предварительного расследования. Такая модель, на взгляд автора, не позволяет обеспечить качественное расследование уголовных дел. В заключении статьи делается вывод о том, что необходимость дифференциации досудебного производства, является актуальной для уголовного судопроизводства Республики Армения, а решение проблемы такой дифференциации видится во внедрении института полного дознания. При этом для реальной разгрузки следственной системы от вала уголовных дел автор считает возможным включить в подследственность органов дознания все уголовные дела о преступлениях небольшой тяжести.

Karen Bisharyan*Associate Professor of Criminal Procedure and Criminalistics at the Police Academy of the Republic of Armenia, Master of Laws, Police Major***Inquiry is an independent form or the initial stage of preliminary investigation?**

Having based on historical analysis of the inquiry institution in the criminal process of Armenia the author of the article divides the inquiry into the following types: 1) inquiry as a way of verifying the information about a crime; 2) full inquiry (in cases when a preliminary investigation is not necessary); 3) truncated inquiry (perform urgent investigative actions in cases when a preliminary investigation is necessary).

The author comes to the conclusion that the abolition of the full inquiry institution and availability of only such forms of investigation as preliminary investigation and the total performance of the preliminary investigation (the performance of urgent investigative actions by the investigation body and preliminary investigation by the criminal investigator) is not the best model of conducting the preliminary investigation. According to the author this model cannot provide a qualitative investigation of criminal cases.

At the end of the article it is concluded that the necessity of pretrial differentiation is actual for the criminal justice of the Republic of Armenia, and the solution of such problem is in the introduction of the full inquiry institute. However, the author considers it possible to include in the jurisdiction of investigative bodies all criminal cases on crimes of little gravity for real relieve of the investigative system from the obstruction of criminal cases.

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արթուր Չախոյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի լաբորատորիայի վարիչ

Հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման և կրիմինալիստիկայի զարգացման պատմությունը Հայաստանում սերտորեն փոխկապակցված են:

Կրիմինալիստիկայի գիտությամբ զբաղվող հայազգի գիտնականներն իրավացիորեն նշում են, որ Հայաստանում հատուկ գիտելիքների կամ կրիմինալիստիկայի սկզբնավորումն ու զարգացումը ընդհանուր առմամբ մեծապես կապված են ռուսական իրականության մեջ այդ գիտության զարգացման հետ:

«Հայաստանի Հանրապետությունում կրիմինալիստիկայի գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների ծագումն ու զարգացումը կապված է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Ուկրաինայի կրիմինալիստ գիտնականների և դատափորձագիտական հիմնարկների հետ»:

Դա ունի նաև իր օբյեկտիվ պատճառները, քանի որ կրիմինալիստիկայի գիտության ձևավորման ժամանակաշրջանում Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից մեկն էր, և ինչպես շատ հարցերում, այստեղ ևս մեր հանրապետությունը ուղղակի թե անուղղակի կապված էր Ռուսաստանի հետ:

Թեև Հայաստանում դատական փորձաքննությունների ծագման պատմությունը համարվում է քիչ լուսաբանված, սակայն հին հայկական ձեռագրերի ուսումնասիրությունը վկայում է, որ այն սկիզբ է առել դեռևս 4-րդ դարում³:

Հանցագործությունների քննության ըն-

թացքում հատուկ գիտելիքների կիրառման պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լիարժեք և բազմակողմանի պատկերացում կազմելու դրա կիրառման հրատապ խնդիրների վերլուծության համար:

Հայաստանում հատուկ գիտելիքների զարգացման վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ կան հին հայկական ձեռագրերում՝ բժշկարաններում, պատմագրության մեջ, դատաստանագրքերում:

Հարկ ենք համարում ընդհանուր անդրադարձ կատարել «հատուկ գիտելիքների» ձևավորման պատմությանը, քանի որ այս ոլորտի վերաբերյալ գիտական հետազոտություններ մեր հանրապետությունում քիչ են կատարվել:

Հայ մատենագիրների աշխատություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ միջնադարյան Հայաստանում դիակի արտաքին զննմամբ որոշվել է ոչ միայն մահվան պատճառը, այլև այն, թե ինչպիսի գործիքի հարվածից է առաջացել մահը: Դա է վկայում Անիի Սմբատ թագավորի դիակի արտաշիրիմումը և ուսումնասիրությունը, որը տեղի է ունեցել 989թ.:

«Իրավունքի այնպիսի ծանրակշիռ աղբյուրներում, ինչպիսիք են Դավիթ Ալավկա Որդու (12-րդ դար), Մխիթար Գոշի (12-րդ դար) և Սմբատ Սպարապետի (Գունդատաբլի) (13-րդ դարի Կիլիկյան դատաստանագիրքը) դատաստանագրքերը, խոսում են դատական ապացույցների մասին, մասնավորապես՝ խոստովանության, վկաների ցուցմունքների, երդման, գրավոր փաստաթղթերի, իրավասու անձանց եզրակացության (փորձաքննության): Վերջինս, որն առաջին հայացքից հուսադրում է գիտության տարբեր բնագավառների օգտագործմամբ մասնագիտական եզրակացություն-

ՔՐԵՎԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ներ (ապացույցներ) ստանալուն, վերաբերվում է միայն գիտության մեկ որոշակի բնագավառի՝ բժշկությանը: Նույնիսկ 989թ. առանց օրենքը խախտելու արտաշիրմում է կատարվել՝ Սմբատ թագավորի մարմինը զննելու և մահվան բնական բնույթի փաստը հաստատելու նպատակով: Այս մասին նկարագրված է Ասողիկի «Պատմություն երկրորդում» (էջ 183), Ե. Մակարյանի «Экспериментальная медицина» աշխատության մեջ և այլն: Այս և նման հարցերի լուծումը հանձնարարում էին ժամանակի գիտության նվաճումներին տիրապետող անձանց»⁴:

Գագիկ Ա թագավորի հրամանով կատարվել է արտաշիրմում, և դիագնոստիկայի արդյունքները հրապարակային քննարկվել են: Ապացուցվել է, որ Սմբատ Բ թագավորը մահացել է բնական մահով:

«Ավելի ուշ շրջանում /սկսած 13-րդ դարից/ Հայաստանում մարդակազմության և մահվան պատճառներն ուսումնասիրելու նպատակով թույլատրվում է կատարել դիախերմումներ»⁵:

Դժվար է ասել, թե Հայաստանում առաջին անգամ երբ են քրեական գործերի քննության ընթացքում կիրառվել հատուկ գիտելիքներ: Տարբեր աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանցում հատուկ գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ և դրանց վրա հիմնված հետազոտություններ կան պատմաբանների, մատենագիրների աշխատություններում, իրավունքի տարբեր հուշարձաններում, դատաստանագրքերում, ինչպես նաև տարբեր հետազոտողների աշխատություններում: Մասնավորապես՝ հին հայկական ձեռագրերի, ինչպես նաև տարբեր աշխատությունների ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ գիտելիքների կիրառումը Հայաստանում սկիզբ է առել դեռևս IV դարից, մասնավորապես խոսվում է պատմական այն փաստի մասին, որը վերաբերում է 368թ.-ին, Տիրան թագա-

վորի սպանությանը, որը կատարվել էր իր որդի Արշակի հրամանով⁶:

Հայոց պատմությունից հայտնի է նաև, որ Պապ թագավորի սպանության /374թ./ կապակցությամբ կատարվել է նրա դիակի հատուկ հետազոտություն, որի հիման վրա հանգել են այն հետևության, որ Պապ թագավորը մահացել է սուր-ծակող զենքի բազմաթիվ հարվածներից և թագավորի մահվան պատճառը հանդիսացել է արյունահոսությունը⁷:

Հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում ստեղծվել են իրավական մտքի մի շարք հուշարձաններ, որոնց մեջ ուղղակի կամ անուղղակի կերպով կարևորվել է հանցագործությունների քննության, դատավարությունների ժամանակ «իրազեկ» կամ «փորձառու» մարդկանց դերի, որոշակի հարցերի վերաբերյալ նրանց եզրակացությունների կարևորությունը:

«XII դարից սկսած կանոնագրքերում և դատաստանագրքերում, ինչպես նաև առանձին թագավորների հրամաններում մենք հանդիպում ենք իրավունքի այնպիսի նորմերի, որոնց կիրառումը գործնականորեն անհնար կլինեին առանց հատուկ գիտելիքների կիրառման»⁸:

Որպես ասվածի ապացույց՝ մի քանի օրինակ բերենք Հայաստանի միջնադարյան իրավաբանական այնպիսի հանրահայտ հուշարձաններից, ինչպիսիք են Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի, Դավիթ Ալավկա Որդու աշխատությունները, որոնք ապացուցում են, որ դեռևս միջնադարում իրավախախտման փաստերի հաստատման համար դատավորը դիմել է փորձառու մարդկանց՝ մասնագետների:

«Մխիթար Գոշը և Սմբատ Իշխանը (12-րդ և 13-րդ դդ..) իրենց դատաստանագրքերում հատուկ ուշադրություն են դարձնում բժշկի կողմից տարվող սխալ բուժման, անփութության և այլ հարցերի վրա, դրանք համարելով քրեապես հետապնդելի արարքներ: Այդ դատաստանագրքերի մի շարք հոդվածներում զետեղած են մարմ-

նական վնասվածքների մասին բազմաթիվ հարցեր: Սեռական անձեռնմխելիության հարցը եղել է ժամանակին գործող դատաստանագրքերի ուշադրության կենտրոնում»⁹:

Բացառիկ արժեք է ներկայացնում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը: Այն միջնադարյան իրավունքի գլուխգործոցն է և որպես միջնադարյան իրավունքի նշանավոր գործ առաջնակարգ տեղ է զբաղեցնում աշխարհի օրենսդրական ճանաչված հուշարձանների շարքում:

Մխիթար Գոշը Դատաստանագրքի նախաբանում ամրագրել է, որ՝ «Դատավարության ժամանակ դատավորը պետք է իր հետ ունենա երկու կամ երեք փորձառու մարդ, և հետո միայն վճիռ կայացնի, որպեսզի դատը լինի արդար.... երկուսին կամ երեքին իր մոտ պահի ոչ միայն որպես վկա, այլ նաև նրանց միջոցով կրթվի և հմտանա մշտապես»¹⁰:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդված 235-ը պատասխանատվություն է նախատեսում բժշկի կատարած հանցանքի համար. «Շատ բժիշկներ մեծամեծ վնասներ են պատճառում մարդկանց՝ դեղ տալով կամ դեղ փորձարկելով. կամ չարակամությամբ սպանում են՝ դեղ տալով կամ, տգետ լինելու պատճառով՝ վնասակար դեղեր են տալիս, կամ անվարժ, անուսում լինելով՝ չեն կարողանում հիվանդությունն ախտորոշել և այս իսկ պատճառներով սպանում են հիվանդներին....»:

Հոդվածի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ միայն հատուկ հետազոտությունները հնարավորություն կտային բացահայտելու հանցագործության փաստը, այսինքն՝ որպեսզի բժիշկը պատասխանատվության ենթարկվի իր կատարած հանցանքի համար, դատավորը պետք է նշանակի, այսպես կոչված, դատաբժշկական փորձաքննություն, քանի որ բժշկական սխալը կարող է հաստատել միայն հատուկ գիտելիքներով օժտված անձը, տվյալ դեպքում՝ միայն բժշկության բնագավառում լայն գիտելիք-

ներ ունեցող անձը՝ բժիշկը:

Հատուկ գիտելիքների կիրառման պատմության զարգացման համար բացառիկ արժեք է ներկայացնում նաև Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրենսդրությունը»: Չնայած այն հանգամանքին, որ «Կանոնական օրենսդրությունը» պետականորեն չէր ընդունվել, այն լայնորեն կիրառվում էր միջնադարյան Հայաստանում:

«Հայ իրավունքի հուշարձաններից շատերը, այդ թվում Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրենսդրությունը» պետական իշխանության կողմից վավերացված չլինելով հանդերձ, կիրառվում էին կյանքում, հետևաբար, իրավաբանական ուժ ունեցող ակտեր էին համարվում»¹¹:

Դավիթ Ալավկա Որդու կանոններից մեկում՝ հոդված 40-ում, նշված է. «Եթե մայրը քնի մեջ երեխայի վրա ընկավ, կամ անփութության հետևանքով մանուկը կրակն ընկավ՝ վառվեց՝ թող 5 տարի ապաշխարի, մեկը՝ սրբապահությամբ, երկուսը՝ շաբաթապահությամբ, ապա պետք է երկու անգամ երեք քառասուն օր (սովորական) պահք պահի»:

Հասկանալի է, որ այս դեպքում մոր մեղքը հաստատելու համար անհրաժեշտ է եղել պարզել երեխայի մահվան իրական պատճառը, այսինքն՝ երեխան բնական մահով է մահացել, թե խեղդվել է մոր անփութության պատճառով: Իսկ մահվան իրական պատճառը որոշելն առանց հատուկ գիտելիքներով օժտված անձի՝ բժշկի օգնության հնարավոր չէր լինի:

Մեկ ուրիշ՝ 57-րդ հոդվածում, Դավիթ Ալավկա Որդին պատասխանատվություն է սահմանել ծնողների կողմից երեխաներին տարբեր եղանակներով՝ ծեծելով կամ թունավորելու եղանակով սպանելու համար. «Պոռնիկ կանայք, որոնք սպանում են իրենց մանուկներին, մինչև մահվան օրը ապաշխարեն: Ծնողը՝ իր երեխաներին կամ ամուսինը կնոջը խրատելու համար. եթե ծեծի գթասրտությամբ, սակայն այնուամենայնիվ մահ պատահի՝ թող 5 տարի դրսում և երկու տարի ներսում անհաղորդ մնա

ՔՐԵՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

սրբությանը և հետո հաղորդվի, իսկ եթե անխնա, գազանաբար ծեծելով մահ պատճառի՝ մեղավոր է: Եթե դիտմամբ, քենից կամ նախանձից դրդված, հետո սպանի թույլով, ապա այդպիսիները թող մինչև մահ ապաշխարեն՝ հագած խարազնագետտ և գլխներին մոխիր ածելով, բայց հետին թռչակից չզրկվեն»:

Քննարկվող ժամանակներում, բնականաբար, հնարավոր է եղել նաև պարզելու մահվան պատճառը՝ բնական մահով, թունավորումից թե ծեծից է մահացել: Իսկ մահվան պատճառը կարող էր որոշել միայն հատուկ գիտելիքներ ունեցող անձը: Այն, որ նման գիտելիքներով օժտված անձիք եղել են, վկայում է Դավիթ Ալավկա Որդու կանոնների ուսումնասիրությունը, քանի որ որոշ հոդվածներում օգտագործվել են «գործին վարպետ անձ», «բժիշկ», «մանկաբարձ» հասկացությունները:

Օրինակ՝ Դավիթ Ալավկա Որդու կանոնների հոդված 77-ը սահմանել է, որ «եթե մանկաբարձն ուշադիր չլինի ծնվող մանկան նկատմամբ և մանուկը մահանա նրա ոչ հմուտ լինելուց՝ արյունապարտ է: Եթե մանուկը ուղրվել է արգանդի մեջ, ապա մանկաբարձը կամ **գործին վարպետ մեկը** թող ձեռքը զգուշությամբ ներս մտցնի և ուղղի մանկանը, որպեսզի մայրը չմեռնի:

....պետք է **գործին վարպետ** մեկը լինի՝ կին թե տղամարդ, որին վստահում են....»:

Հայաստանում հատուկ գիտելիքների պատմության ուսումնասիրությունն անհնար է առանց ականավոր հասարակական-քաղաքական գործիչ, իրավագետ-օրենսդիր, հմուտ դիվանագետ, պատմափիլիսոփայական փայլուն աշխատությունների հեղինակ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի»:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը հարստացրին XII-XIII դարերի միջնադարյան Հայաստանի իրավական միտքը:

Սմբատ Սպարապետն իր դատաստանագրքի հոդվածներում, որոնք պատասխանատվություն են սահմանում տարբեր հանցագործությունների համար, բազմիցս նշում է, որ պետք է «հիմնավոր քննություն կատարել», «քննել և իմանալ մահվան հանգամանքները». նա, բնականաբար, նկատի ուներ նաև «գիտնական մարդկանց, ովքեր հմուտ էին իրենց գործի մեջ», մասնակցությունը գործի քննությանը:

«Լևոն II, տեղեկանալով գիտնական մարդկանց մասին, որ հմուտ էին գործի մեջ, իր մոտ կանչեց և ընծաներ պարզեց»¹²:

Ըստ Դատաստանագրքի հոդված 569-ի՝ «Եթե մեկը բացի հորը և առանց օղափոխելու մարդ մտցնի այնտեղ, և մարդը հեղձուցիչ գազից խեղդվի, ապա հոր մտցնողը պարտավոր է հատուցել մահացածի արյան գինը: Սակայն պետք է շատ զգույշ լինել՝ քննել և իմանալ մտնելու պայմանները, ինչպես մահվան, այնպես էլ դեպքի բոլոր հանգամանքները»:

Հոդվածի բովանդակությունից երևում է, որ գիտնական մարդիկ, որ հմուտ են իրենց գործում, պետք է պարզեին մարդու մահվան իրական պատճառը:

Շատ հետաքրքիր է, որ Դավիթ Ալավկա Որդին հատուկ գիտելիքի «սուբյեկտ» է համարել նաև եկեղեցուն: Դա է վկայում Դատաստանագրքի 102-րդ հոդվածի բովանդակությունը, համաձայն որի՝ «Եթե որևէ մեկը կին ունենա ու չկարողանա իր ամուսնական պարտքը կատարել, պատշաճ չէ, որ կինը նրանից բաժանվելով հեռանա, հակառակ դեպքում, նա օրենքով չի կարող ուրիշի կին լինել, այլ պարտավոր է եկեղեցու միջոցով ապացուցել, որ ամուսինը առնականություն չունի և ազատության գրություն ստանալ»:

Հայտնի է, որ աշխարհում առաջին Սահմանադրությունը ստեղծվել է 1779 թվականին ԱՄՆ-ում, իսկ մի փոքր ավելի ուշ՝ Ֆրանսիայի Սահմանադրությունը: Եվ ահա աշխարհում առաջին Սահմանադրության ընդունումից 6 տարի առաջ՝ 1773

թվականին, Յնդկաստանի Սադրաս քաղաքում մի հայ մարդ՝ Շահամիր Շահամիրյանը, ստեղծում է Հայաստանի սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ Փառաց»-ը:

Սահմանադրության նախագծը, բացի հայկական անկախ պետության ձևի, կառուցվածքի, հասարակական-քաղաքական և այլ հարցերից, կարգավորում է նաև քրեական դատավարության որոշ հարցեր:

«Սահմանադրության նախագծում արտացոլվել են նաև համապետական և տեղական մարմինների ընտրությունների եղանակները, դրանց ֆունկցիաներն ու լիազորությունները: Սևեռուն ուշադրություն է դարձվում լուսավորության, առողջապահության, երկրի ռազմական ներուժի հարցերին, բավականին մանրամասն է խոսվում դատավարության և տարբեր քրեական ու քաղաքացիական հանցագործությունների համար նախատեսվող պատժազանների, հարկերի, դրանց հավաքման, չափերի և հասարակության ու պետության կազմակերպման ուրիշ շատ հարցերի մասին»¹³:

Հիշարժան է, որ Շահամիր Շահամիրյանը դեռևս 1773 թվականին նախատեսել է գիտակ անձանց՝ մասնագետների ինստիտուտը, առանձին հոդվածով պարտավորեցրել պետությանը մասնագետների նկատմամբ առանձնակի հոգածություն ցուցաբերել, սահմանել, թե ովքեր կարող են հանդես գալ որպես մասնագետներ, և ինչ պարտականություն է դրվում նրանց վրա և այլն:

Ըստ «Որոգայթ Փառաց»-ի՝ «Հայաստանի պետությունն առանձնակի հոգատարություն է ցուցաբերում մասնագետների նկատմամբ, հատկապես փիլիսոփայության, աստղաբաշխության, բժշկության, երաժշտության, ճարտասանության և այլն» (հոդված 127): Կամ՝ «Մասնագետը, քանի դեռ իր վարպետից ստորագրված վկայագիր չի ստացել, որով երաշխավորվում է, որ սա կատարյալ մասնագետ է, իրավունք չունի ինքնուրույն զբաղվել իր

արհեստով» (հոդված 173):

Առանձին հանցագործությունների քննության ժամանակ պարտադիր է համարվել գիտության տարբեր բնագավառներում հմտացած գիտակ անձանց պարտադիր մասնակցությունը: Մասնավորապես անհրաժեշտ է նշել, որ սպանությունների կամ հանկարծամահացության դեպքերում, բացի գործը հետաքննող անձից, գործի քննությանը պարտադիր պետք է մասնակցեր բժիշկը, որպեսզի հնարավոր լիներ պարզելու մահվան պատճառը, ժամանակակից տերմինով ասած՝ դին պարտադիր պետք է ենթարկվեր դատաբժշկական փորձաքննության: Այդ մասին է վկայում «Որոգայթ Փառաց»-ի հոդված 273-ը, համաձայն որի. «Եթե որևէ փողոցում և որևէ տան մեջ հանկարծ մեկը մահանա, ապա հանգուցյալի մահանալու ժամանակ ովքեր որ մոտն են եղել՝ ընտանիքի անդամներ, թե օտար մարդիկ, պարտավոր են մնալ տեղում և դեպքի մասին լուր տալ քաղաքի դատարանի դատավորին, և դատարանը պարտավոր է մի դատավոր և մի բժիշկ ուղարկել, որպեսզի դեպքի վայր գան ու հետաքննեն մահվան պատճառը և ննջեցյալի մահվան ժամանակ կողքին գտնվողներից վկայություններ վերցնեն: Այս վկայությունների ձեռք բերումը կարող է կարևոր բաներ բացահայտել, և այդքանից հետո թույլատրվում է դին թաղել»:

Հատուկ գիտելիքների կիրառման առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ը:

Աստրախանի իրավագիտական լայն պատրաստություն ունեցող երեք բնակիչների՝ Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանպանյանի և Հովհաննեսի որդի Սարգիսի «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ը կայսրուհի Եկատերինա Երկրորդի՝ ռուսական կայսրության հայերին ինքնավարություն տալու մասին հրամանից հետո դարձավ հայ իրավունքի եզակի հուշարձաններից մեկը:

Դատաստանագրքի ստեղծումը (աշխա-

ՔՐԵՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

տանքներն սկսվել են 1747-1748 թթ., բայց այն վերջնականապես ավարտվել է 1765 թվականին) մեծապես կապված էր 1746 թվականին Աստրախանում հայկական դատարանի հիմնման հետ:

Դատաստանագրքի գրաբար բնագիրն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 1967 թվականին, որը հրատարակության էր պատրաստել Ֆ. Գ. Պողոսյանը, ուշագրավ առաջաբանով¹⁴:

Իրավունքի այս հուշարձանն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ հացագործությունների նախնական քննության, ինչպես նաև քրեական և քաղաքացիական դատավարությունների ժամանակ անհրաժեշտություն է առաջացել գործին մասնակից դարձնելու իրազեկ անձանց՝ այս կամ այն փաստը հաստատելու կամ ժխտելու, հետազոտություններ կատարելու, ինչպես նաև առանձին գլուխ էր նախատեսվել (դատաստանագրքի առաջին մասի «ԺՁ» գլուխը) «Վճռահատության իրավունքի» մասին:

Համաձայն դատաստանագրքի առաջին մասի «ԺՁ» գլուխի հոդված 1-ի՝ «Վճռահատ է կոչվում նա, ով իրավաբանների կամ դատավորների ընտրությամբ նշանակվում է իրազեկ լինելու և լուծում տալու տարածայնություններին և այդ պատճառով անունը ցույց է տալիս իր պաշտոնը, որովհետև կոչվում է վճռահատ, այսինքն՝ վճիռ հատող»:

Ինչպես երևում է հոդվածի բովանդակությունից, վճռահատները պետք է անպայման իրազեկ լինեին և կարողանային լուծում տալ դատավարությունների ժամանակ առաջացած ցանկացած տարածայնության, այսինքն՝ ամեն ոք չէր կարող նշանակվել վճռահատ: Այդ իսկ պատճառով դատաստանագրքով սահմանված կարգով (դատաստանագրքի առաջին մասի «ԺՁ» գլխի հոդված 2) վճռահատ չէին կարող նշանակվել:

- մեղքերի համար հրապարակային պատժի ենթարկվածները,
- խելագարները,
- մեղքեր գործելու համար դատավորական աստիճանից հեռացվածները,
- եկեղեցու կողմից նզովվածներն ու բանադրվածները,
- քսանհինգ տարին չլրացածները,
- գրել-կարդալ չիմացողները:

Փաստորեն, վճռահատ ընտրվելու համար անձը պետք է համապատասխաներ որոշակի չափանիշների, ինչպես այժմ՝ գործով մասնագետ կամ փորձագետ հանդես գալու համար լինել իրազեկ, ազնիվ, գործունակ, ունենար որոշակի փորձ (պետք է քսանհինգ տարին լրացած լիներ) ու որոշակի գիտելիքներ (կարողանար գրել և կարդալ):

Դատաստանագրքով կարգավորվել են նաև այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են վճռահատ ընտրվելու ձևերը, վճռահատների կողմից ոչ ճիշտ և ապօրինի որոշումներ կայացնելու, ինչպես նաև կաշառք վերցնելու համար նախատեսված պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու ժամկետները, գործին մի քանի վճռահատի մասնակցության ժամանակ տարբեր կարծիքների դեպքում վերջնական որոշում կայացնելու հարցը (դատաստանագրքի առաջին մասի «ԺՁ» գլխի հոդվածներ 3, 10, 11, 13), ինչը ընդհանուր գծեր ունի ներկայիս փորձագետի եզրակացության, փորձագետ կամ փորձաքննություններ նշանակելու, փորձագետի պատասխանատվության, միանձնյա և հանձնաժողովային փորձաքննությունների նշանակման կարգի հետ:

Վճռահատները, մասնակցելով գործին, իրենց հետևությունները շարադրել են գրավոր, և այդ փաստաթուղթը անվանվել է «Որոշում»:

Վճռահատները ծանր պատվիրանի ներքո պարտավոր էին լիովին վերահասու լինել և քննել դատավորների հարցերը և ճշմարիտ ու անաչառ որոշում կայացնել: Քանի որ, եթե նրանց համաձայնությամբ

արվածն անգամ հակաօրինական լինի, քաղաքական ատյանում միշտ պետք է համարվի օրինական, սակայն իրենց ոչ ճիշտ կամ ապօրինի որոշումների համար Անաչառ դատավորների (խոսքը Աստվածային ատյանի մասին է)¹⁶ ատյանում պատասխան են տալու:

Եթե որևէ մեկը ընտրվել ու տվել է իր համաձայնությունը վճռահատ լինելու համար, դրանից հետո չի կարող հրաժարվել վճռահատությունից առանց օրինական պատճառի (դատաստանագրքի առաջին մասի «ԺԶ» գլխի հոդված 29):

Համաձայն նշված գլխի հոդված 13-ի՝ «Այդպես նաև եթե վճռահատը դատախանդրից կամ պատասխանողից կաշառք վերցնի, և հայտնի դառնալով՝ քննությանը հաստատվի. ոչ միայն վերցրած կաշառքը պետք է վերադարձնի նրան, ումից վերցրել է, այլև տուգանք պետք է մուծի արքունական գանձարան, ինչպես և զրկվի իր պաշտոնից, և նրա փոխարեն ընտրվի մեկ ուրիշը»:

Իսկ հոդված 15-ը սահմանում է. «Երբ վճռահատը մեկն է, նրա կատարածը միշտ ընդունելի է: Եթե լինեն երկու անձ և նրանց կարծիքները միանման չլինեն, և տարբեր կարծիքներ գրեն, այդ դեպքում դատավորները պետք է ընտրեն երկու այլ վճռահատ անձ նրանց տարածայնություններին ծանոթանալու, և ինչպես այդ անձիք վճռեն, այնպես էլ պետք է լինի, և նրանցից ոչ ոք չպետք է ընդդիմանա: Եթե երեք անձ լինեն և դրանցից երկուսը միատեսակ որոշեն, իսկ երրորդն այլ կերպ՝ հաստատուն պետք է համարվի երկուսի կարծիքը, իսկ մեկի կարծիքը մերժվի: Նույն կերպ պետք է վարվել նաև սրանց նման այլ դեպքերում»:

XVIII դարում հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների լայն կիրառման և տարատեսակ կրիմինալիստիկական հետազոտությունների կատարման փաստի մասին են վկայում նաև Աստրախանի Հայոց Դատաստանագրքերի այլ հոդվածների բովանդակությունը: Հոդվածների ուսումնասիրություն-

ներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ հնարավորություն է եղել կատարելու փաստաթղթերի և ձեռագրերի տարբեր հետազոտություններ, մասնավորապես հնարավոր է եղել պարզել փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքը, կատարելվել են ձեռագրերի ու ստորագրությունների նույնացումներ: Այդ են վկայում Աստրախանի Հայոց Դատաստանագրքի Դ գլխի 19-րդ, ԺԴ գլխի 166-րդ հոդվածների վերլուծությունը:

Համաձայն Դատաստանագրքի առաջին մասի Դ գլխի 19-րդ հոդվածի՝ «Եթե որևէ մեկն ուրանա իր ձեռագրով գրած կամ իր ստորագրած սանադը, որը հաստատվի այլուր եղած նրա ձեռագրով և քննությանը հաստատվի, նման ուրացողը պետք է կրկնակի վճարի իր պարտատիրոջը և հանցանքի համար հրապարակավ ծեծվի առանց գթության»:

Իսկ ԺԴ գլխի 166-րդ հոդվածն էլ սահմանում էր. «Եթե մեկը մեկ ուրիշի անունով նրան վնաս պատճառելու համար կեղծ հաշվեգիր սարքի, և այն հայտնի դառնա և քննությանը հաստատվի, պետք է պատժվի առանց ներողամտության և վնաս կրի իբրև կեղծ սանադ գրող»:

Հարկ է նշել նաև, որ հանցագործությունների քննության ընթացքում լայնորեն կիրառվել են նաև բժշկության բնագավառի գիտելիքներ, և բազմաթիվ հարցեր իրենց լուծումն են ստացել միայն բժիշկների, ինչպես նշվում է Դատաստանագրքում, «վկայությանը»:

Դրա վառ ապացույցն են համապատասխանաբար դատաստանագրքի ԻԳ գլխի 105 և ԺԲ գլխի 106 հոդվածները, համաձայն որոնց՝ «Եթե որևէ մեկն իր տանը շուն է պահում և չի կապում, այլ թողնում է ազատ, իսկ շունը տանից դուրս գալով կծում է որևէ մեկին, ...: Իսկ եթե մահանա և բժիշկների վկայությանը մահը վրա հասած լինի շան կծելու և ոչ այլ պատճառով, այդ դեպքում...», և «Եթե որևէ կին թույնով կամ այլ ձևով համարձակվի սպանել իր ամուսնուն. երբ հայտնի դառնա և քննութ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

յամբ հաստատվի՝ պետք է...»:

Դատաստանաքրքի «է» գլուխն էլ նվիրված է եղել թարգմանչի ինստիտուտին:

Համաձայն նշված գլխի հոդված 1-ի՝ «Թարգմանիչ է կոչվում նա, ով այլ լեզվից հայերեն է թարգմանում գրությունները կամ անհրաժեշտության դեպքում հայերե-

նից թարգմանում է ուրիշ լեզվի, որն ինքը սովորել է և կարող է թարգմանել»:

Այսպիսով, Հայաստանի իրավական հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ միջնադարում մեծ տեղ է հատկացվել հատուկ գիտելիքների, և որ հանցագործությունների քննության ժամանակ լայնորեն օգտագործվել են այլ գիտությունների նվաճումները:

- ¹ Տե՛ս Օհանյան Լևոն, Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ. 128, Վահե Ենգիբարյան, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Երևան, 2007, էջ 7:
- ² Տե՛ս Օհանյան Լևոն, Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 144:
- ³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Давтян А. Г. Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 5-10:
- ⁴ Տե՛ս Օհանյան Լևոն, Կրիմինալիստիկա, Երևան, 2004թ., էջ 151:
- ⁵ Վարդանյան Շ. Ա., Նազարեթյան Կ. Լ., Դատական բժշկություն, Երևան, 1995, էջ 10:
- ⁶ Տե՛ս Давтян А. Г., Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 5:
- ⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 6:

- ⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 67:
- ⁹ Տե՛ս Վարդանյան Շ. Ա., Նազարեթյան Կ. Լ., նշվ. աշխ., էջ 10:
- ¹⁰ Տե՛ս Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 1-ին, Երևան, 2001, էջ 370-371:
- ¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 180:
- ¹² Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N1900, Սմբատ Սպարապետ, Պատմություն, էջ 45:
- ¹³ Տե՛ս Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 2-րդ, Երևան 2002, էջ 15-16:
- ¹⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պողոսյան Ֆ. Գ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, 360 էջ:
- ¹⁵ Տե՛ս Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 2-րդ, Երևան, 2002, էջ 398:

Артур Чахоян**Artur Chakhoyan****Применение специальных знаний во время расследования преступлений в средневековой Армении****Use of special knowledge during investigation of crimes in medieval Armenia**

Одним из важнейших условий обеспечения высокого качества расследования преступлений, является широкое применение специальных знаний во время собирания и оценки доказательств. Множество преступлений удастся раскрыть с эффективным применением специальных знаний во время их расследования.

Исследование истории применения специальных знаний во время расследования преступлений даст возможность составить более полное и всестороннее представление об анализе актуальных задач их применения.

В разных периодах истории армянского народа были созданы множество памятников правовой мысли, где прямым или косвенным образом была затронута важность роли “компетентных” и “опытных” людей во время расследования преступлений, судебного процесса, а также их заключения по определенным вопросам.

В статье обсуждается вопрос об использовании специальных знаний в средневековой Армении, учитывая также, что по данному вопросу в нашей республике не были проведены научные исследования.

Исследования правовых памятников средневековой Армении показали, что даже в средневековье большое значение отдавалось специальным знаниям, и что, во время расследования преступлений были широко использованы достижения других наук.

One of the most important conditions of quality assurance of crime investigation is wide application of special knowledge during collection and assessment of evidences.

An effective use of special knowledge during investigation facilitates detection of numerous crimes.

Application of special knowledge history study during investigation of crimes permits to form absolute and comprehensive impression concerning actual issues of its utilization.

There were created a great number monuments of legal thought during various periods of history of the Armenian nation, in which the importance of a role of “competent” and “experienced” people were mentioned directly or indirectly during investigation of crimes and judicial process.

In the article discussed an issue regarding use of special knowledge in medieval Armenia, in consideration of such fact that there hadn't been made any research study in the Republic of Armenia concerning that issue.

Exploration of legal monuments in medieval Armenia shows that special knowledge had a large value and that achievements of other sciences were in extensive use during investigation of crimes even in Middle Ages.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԱՆՁԻՆ ՀԱՅՑՎՈՐ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԵՐՈՇԵՅ ՄԱՐԱԲՅԱՆ

ՀՀ Դատական դեպարտամենտի կազմակերպահրավական վարչության պետ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ **քաղաքացիական հայցի ինստիտուտը կանոնակարգող** նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հայցվոր սուբյեկտի շուրջ են ծավալվում քաղաքացիական հայցով վարույթի բոլոր իրավահարաբերությունները: Նրանից է սկիզբ առնում հայցով վարույթը. քաղաքացիական հայցվորը համարվում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով վարույթի աղբյուրը, ուստի քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով վարույթի արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, որ հանցագործությունից վնաս կրած անձը ժամանակին ճանաչվի քաղաքացիական հայցվոր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայցներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, և այդ հարցը բավարար հիմքեր է տալիս ենթադրելու, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով հայցվորին պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:

Օրենսդրական այս բնորոշումից կարելի է առանձնացնել քաղաքացիական հայցվոր սուբյեկտի անհրաժեշտ հատկանիշները: Դրանք են՝

1. հայցվոր կարող է ճանաչվել ֆիզիկական և իրավաբանական անձը,
 2. պետք է առկա լինեն տվյալներ, որ անձին վնասը պատճառվել է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով /կամ, ինչպես նշեցինք, անմիջապես հանցագործությամբ/,
 3. վնասը պետք է լինի քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա,
 4. պետք է ներկայացված լինի հայցադիմում:
- Հիշյալ հատկանիշների առկայության դեպքում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը որոշում են կայացնում անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին: Դրանցից որևէ մեկի բացակայությունը բացառում է անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշում կայացնելը, ուստի՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցվոր սուբյեկտի գոյությունն ընդհանրապես:

Չնայած օրենքում սահմանված են քրեական դատավարությունում անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու անհրաժեշտ հատկանիշները, այդուհանդերձ այդ ընթացակարգը գործնականում մի շարք խնդիրներ է առաջացնում: Կարելի է հավաստել, որ հանցագործությունից վնաս կրած անձին հայցվոր ճանաչելու դատավարական կարգը գործում է:

Օրենքում խոսվում է արդեն իսկ հայցներկայացրած անձին հայցվոր ճանաչելու մասին, ընդ որում՝ նույնիսկ քրեական գործ հարուցելու փուլում /քր. դատ. օր. 182-րդ հոդված/, ավելին՝ օրենքում սահմանված է, որ եթե անձի դիմումը համապատասխան ժամկետներում ընթացք չի

ստանում, ապա այն ներկայացնող անձը կարող է բողոքարկել ընդհուպ դատական կարգով՝, իսկ այն, թե անձը որտեղից պետք է տեղեկացվի, որ կարող է քրեական դատավարությունում հայց ներկայացնել և ճանաչվել հայցվոր, օրենքում կարգավորված չէ: Այլ կերպ ասած՝ օրենքը կարգավորում է միայն այն իրավահարաբերությունները, որոնք առաջանում են հայց ներկայացնելուց հետո, իսկ մինչ այդ առաջացող իրավահարաբերությունների մասին լռում է: Մինչդեռ, անձի զույքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևորվում են հատկապես մինչև հայցը ներկայացնելն առաջացող իրավահարաբերությունները:

Բանն այն է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցվորն այն եզակի սուբյեկտներից է, որը, ի տարբերություն քրեադատավարական մի շարք այլ սուբյեկտների, տուժողի, մեղադրյալի, քաղաքացիական պատասխանողի, քրեադատավարական իրավահարաբերությունների ոլորտ է ներգրավվում սեփական նախաձեռնությամբ՝ հայց ներկայացնելու միջոցով: Հետևաբար, մինչև հայց ներկայացնելն անձը առնվազն պետք է տեղյակ լինի իր այդ իրավունքի մասին (**հատկապես հաշվի առնելով, որ քրեական դատավարությունում կարող են հարուցվել միայն վնասի հատուցման մասին հայցեր**), հակառակ պարագայում տրամաբանությունը բացակայում է անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու հարցում: Այնինչ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումն ստանալու համար հայց ներկայացնելու իրավունքի մասին նշում, քրեադատավարական որևէ նորմ չի բովանդակում: **Ուստի հարց է ծագում. անձը որտեղի՞ց է տեղեկացվել, որ իրավունք ունի քրեական դատավարությունում հայց ներկայացնելու հանցագործությամբ իրեն պատճառված վնասների հատուցման համար և օգտվել է իր այդ իրավունքից:**

Օրենդիրը հավանաբար «հույսը» դրել է հանցագործությունից վնաս կրած անձանց իրավական գիտելիքների վրա:

Դիսպոզիտիվության սկզբունքին հա-

մապատասխան՝ հանցագործությունից վնաս կրած անձը իրավունք ունի, սակայն պարտավոր չէ ներկայացնելու հայց. որևէ մեկը չի կարող նրան հարկադրել պահանջելու պատճառված վնասի հատուցում: Այդուհանդերձ, քրեական դատավարության հանրայնության սկզբունքը պահանջում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինները հանցագործությունից վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձին բացատրեն վնասի հատուցումն ստանալու իրավունքը՝ և ստեղծեն համապատասխան պայմաններ այդ իրավունքի իրականացման համար⁴: Մինչդեռ օրենքում նման իրավունք և պարտականություն սահմանված չէ:

Դրա համար անհրաժեշտ է օրենքում հստակ սահմանել, որ հանցագործությունից վնաս կրած անձն իրավունք ունի քրեական դատավարությունում ներկայացնելու հայց իրեն պատճառված վնասի հատուցման համար, իսկ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է նրան բացատրել քրեական դատավարությունում հայց ներկայացնելու իրավունքը և քաղաքացիական հայցվոր ճանաչելու դատավարական կարգը: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առանձնահատկություններից մեկն էլ հենց սա է, որն այդ նույն հայցը տարբերում է քաղաքացիական դատավարությունում ներկայացվող հայցից, որում ոչ միայն սահմանված չէ, որ անձին պետք է բացատրել հայց ներկայացնելու իրավունքը, այլև սահմանված չէ, թե ինչ հատկանիշների առկայության դեպքում անձը կարող է հայց ներկայացնել և նույնիսկ պահանջել իրեն ճանաչել հայցվոր, ինչպես նաև՝ հայց ներկայացրած անձին հայցվոր ճանաչելու առանձին դատավարական կարգ: Կարևոր է ընդգծել, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը հայցվոր սուբյեկտի քրեադատավարական իրավահարաբերությունների ոլորտում հայտնվելու հարցում հետընթաց է գրանցել նախկին՝ 1961 թվականի ՀՍՄՀ քրեական դատավարության օրենսգրքի համեմատ, որում առանձին հոդվածներով սահմանված էին ինչպես հանցագործու-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

յունից վնաս կրած անձի հայց ներկայացնելու իրավունքը, այնպես էլ հանցագործությունից վնաս կրած անձին այդ իրավունքը պարզաբանելու և հայցվոր ճանաչելու վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը:

Այսպես, ըստ հիշյալ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հանցագործությունից նյութական վնաս կրած անձն իրավունք ունի քրեական գործի վարույթի ընթացքում մեղադրյալի կամ մեղադրյալի գործողությունների համար նյութական պատասխանատվություն կրող անձանց նկատմամբ քաղաքացիական հայց հարուցելու, որը դատարանը քննության է առնում քրեական գործի հետ միասին: Իսկ ըստ 130-րդ հոդվածի՝ *գործի տվյալներից տեսնելով, որ կատարված հանցագործությանը նյութական վնաս է պատճառվել քաղաքացուն, հիմնարկին, ձեռնարկությանը կամ կազմակերպությանը, քննիչը նրանց ներկայացուցիչներին բացատրում է քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքը, որի մասին կազմում է արձանագրություն կամ տեղեկացում է գրավոր:*

Քաղաքացիական հայց ներկայացվելու դեպքում քննիչը պարտավոր է պատճառաբանված որոշում կայացնել որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելու կամ այն մերժելու մասին:

Որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելու որոշումը հաղորդվում է քաղաքացիական հայցվորին կամ նրա ներկայացուցչին: Քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի ներկայանալու դեպքում նրանց բացատրվում են սույն օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, որի մասին նշվում է որոշման մեջ: Քաղաքացիական հայցվորին կամ նրա ներկայացուցչին նրանց իրավունքները բացատրելը հաստատվում է քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից քննիչի որոշումն ստորագրելով: Քաղաքացիական հայցվոր ճա-

նաչելը մերժելու վերաբերյալ որոշումը ստորագրությամբ հայտարարվում է դիմողին:

Թեև հիշյալ իրավակարգավորումները նույնպես լիարժեք չէին, սակայն քննարկվող հարցերի առնչությամբ որոշկիություն և հստակություն էին պարունակում՝ այն հաշվով, որ հստակ սահմանում էին ինչպես հանցագործությունից վնաս կրած անձի հայց ներկայացնելու իրավունքը, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը և դատավարական հստակ կարգը, թե ինչպես պետք է անձը ճանաչվի քաղաքացիական հայցվոր և այլն:

Վերջին ժամանակներս, տեսության մեջ անդրադառնալով քաղաքացիական հայցվոր ճանաչելու հիմնահարցին, հանդիպում են պնդումներ այն մասին, որ քաղաքացիական հայցվոր սուբյեկտը քրեական դատավարությունում ավելորդ է: Այն նույն տուժողն է, որը հայց է ներկայացրել, ուստի առաջարկվում է հրաժարվել հայցվոր սուբյեկտից և տուժողի կողմից հայց ներկայացվելու դեպքում նրան մեխանիկորեն զինել հայցվորի իրավունքներով ու պարտականություններով:

Այսպես, Ի.Վ.ժերեբյատևը նշում է՝ հայրենական քրեական դատավարության չափից շատ ֆորմալիզմը, որը մեզ հասել է խորհրդային ժամանակներից, տանում է քաղաքացիական հայցի լուծման երկար ընթացակարգի՝ տուժողին բացատրել հայց հարուցելու իրավունքը, անձին ճանաչել հայցվոր, հայցը ապահովելու համար միջոցներ ձեռնարկելը, քրեական գործի նյութերի հետ հայցվորին, պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ծանոթացնելը և այլն: Դրա համար տուժողին լրացուցիչ հայցվոր ճանաչելու ընթացակարգի ոչ պետքական լինելը եղել է և նախկինում, և առկա է ներկայումս: Ըստ հեղինակի՝ գույքային վնասը տուժողին պետք է հատուցվի մեխանիկորեն, իսկ տուժողը պետք է հարուցի հայց միայն բարոյական վնասի հատուցման համար, ընդ որում՝ ինչպես քրեական դատավարության շրջանակներում, այնպես էլ քաղաքացիա-

կան դատավարության կարգով⁶:

Յու.Սադովը նույնպես գտնում է, որ քաղաքացիական հայցվոր կարող է ճանաչվել միայն տուժողը, որը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին պահանջ է ներկայացրել, այսինքն՝ քրեական դատավարության օրենսգրքում տրված են տուժողի երկու տարբեր հասկացություններ: Հեղինակը գտնում է, որ քաղաքացիական հայցվոր դատավարական սուբյեկտի առանձնացումը արդարացված է: Քրեական դատավարության օրենսգրքի՝ տուժողի իրավունքներին վերաբերող հոդվածում պետք է ամրագրել նրա իրավունքները, որոնք վերաբերում են քաղաքացիական հայց հարուցելուն և լուծելուն⁶:

Պրոֆեսոր Ա.Գրինենկոն նշում է, որ անհրաժեշտ է նախատեսել ընթացակարգ, որը տուժողին «մեխանիկորեն» կվերապահեր քաղաքացիական հայցվորի իրավունքներով, այնպես, ինչպես մեղադրյալը օգտվում է քաղաքացիական պատասխանողի իրավունքներից⁷:

Ի.Գերշմանը, չբացառելով քաղաքացիական հայցվոր սուբյեկտի գոյությունը քրեական դատավարությունում, առաջարկում է ղեկավարվել քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով և անձին որպես հայցվոր թույլատրել առանց այդ մասին առանձին որոշում կայացնելու⁸:

Իրականում միննույն անձը նույն վարությամբ հաճախ իրավունք ունի և համապատասխանաբար կարող է և՛ տուժողի, և՛ քաղաքացիական հայցվորի կարգավիճակով հանդես գալ: Այդուհանդերձ, քաղաքացիական հայցվորը և տուժողը տարբեր դատավարական սուբյեկտներ են: Դրանով պայմանավորված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տարբեր հոդվածներ են նվիրված այդ սուբյեկտների դատավարական կարգավիճակին: Եթե օրենսդիրը նույնպես գտներ, որ դրանք միշտ նույն սուբյեկտն են, ապա չէր առանձնացնի առանձին հոդվածներ հիշյալ սուբյեկտների դատավարական կարգավիճակի վերաբերյալ: Եթե դրանք լինեին

նույն սուբյեկտը, ընդ որում, եթե առաջնորդվենք տեսության մեջ արտահայտված այն սխալ մոտեցումից, որ անձը մինչև տուժող չճանաչվի, չի կարող հայցվոր ճանաչվել⁹, ապա օրենքում սահմանված կլիներ, որ հայցվոր է ճանաչվում հայց հարուցած տուժողը, այլ ոչ թե ֆիզիկական և իրավաբանական անձը: Սա նշանակում է, որ օրենքում պարտադիր պայման չկա այն հարցում, որ անձը մինչև տուժող չճանաչվի, չի կարող ճանաչվել հայցվոր:

Ավելին, նման պայման չի էլ կարող սահմանված լինել: Թեև տուժող և քաղաքացիական հայցվոր հասկացությունները մերձավոր հասկացություններ են, սակայն դրանց միջև առկա է նաև էական տարբերություն: Տուժողի դեպքում պետք է պատճառված լինի բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս, իսկ հայցվորի դեպքում՝ միայն գույքային: Ընդ որում, ըստ օրենսդրական իրավակարգավորումների՝ տուժողի դեպքում պարտադիր է, որ վնասը հասցված լինի անմիջապես քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, իսկ հայցվորի դեպքում այդպիսի պարտադիր պայման սահմանված չէ¹⁰:

Եթե անգամ հարցին մոտենանք այն տրամաբանությամբ, որ հայցվորը նույն տուժողն է, որը հայց է հարուցել, այդուհանդերձ դա չի կարող լուծել առաջադրված խնդիրները: Քանի որ տուժողի իրավունքներն ու պարտականությունները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածում սահմանված տուժողի իրավունքների մեջ նույնպես բացակայում է տուժողի հայց հարուցելու իրավունքը, ինչը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմինները, տուժողին բացատրելով նրա իրավունքները, հայց հարուցելու իրավունքը չեն բացատրում:

Հիշյալ հոդվածի 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում սահմանված է, որ տուժողն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստանալ հանցագործությամբ պատճառված վնասի փոխհատուցում: Այսինքն, տուժողն ունի հանցագործությամբ պատճառված վնասի օրենքով սահմանված կարգով փոխհատուցման իրավունք,

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

սակայն չունի այդ վնասի հատուցման համար հայց հարուցելու իրավունք, իսկ թե ինչ պետք է հասկանալ օրենքով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու տակ, ստորև կանդրադառնանք:

Ամերկբա է, որ հայց հարուցելու իրավունքը և փոխհատուցում ստանալու իրավունքը տարբեր բովանդակություն և էություն ունեն:

Հայց ներկայացնելու իրավունք ունենալը դեռևս չի նշանակում, որ այն ներկայացնողը անվերապահորեն կստանա իրեն պատճառված վնասի հատուցում: Իսկ եթե հայց հարուցողը ճանաչվում է հայցվոր, դա չի նշանակում, որ հայցը բավարարվել է: Այս իրավունքը հասկացվում է ընդամենը դատարանի մատչելիության իմաստով. որպեսզի հայց հարուցած անձը ստանա իրեն պատճառված վնասի հատուցում, առնվազն անհրաժեշտ է, որ հայցը ապացուցվի և լուծվի, բավարարվի: Մինչդեռ փոխհատուցում ստանալը նշանակում է, որ տուժողը պետք է անվերապահ ստանա փոխհատուցում: Ընդ որում, եթե հայցով հատուցումը մեղադրյալի կամ քաղաքացիական պատասխանողի պարտականությունն է, հայցվորի՝ հատուցում ստանալու իրավունքը և պատասխանողի՝ վնասը հատուցելու պարտականությունը համարվում են նյութական, բնական-իրավական և ունեն այն նույն ծագման աղբյուրը, ինչ որ հանցավորի քրեական պատասխանատվություն կրելու պարտականությունը՝ ապա փոխհատուցումը՝ որպես դատավարական իրավունք, ենթադրում է վարույթն իրականացնող մարմինների դատավարական պարտականությունը կատարել փոխհատուցումը, այլ ոչ թե դատավարության մասնակիցների պարտականությունը, ընդ որում՝ դատավարական: Այսինքն, հայց հարուցելու իրավունքը անձի՝ իրեն պատճառված վնասի հատուցման համար քրեադատավարական համակարգի մատչելիության իրավունքն է, իսկ փոխհատու-

ցումը ստանալու իրավունքն ուղղակի իրավունք է, որի էությունը այն է, որ վարույթն իրականացնող մարմինները պետք է դրան համապատասխան տրամադրեն այդ փոխհատուցումը:

Տուժողի՝ փոխհատուցում ստանալու դատավարական իրավունքին համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է դատարանի պարտականությունը փոխհատուցման մասին որոշում կայացնելու վերաբերյալ:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ՝ դատական ծախսերը բաղկացած են տուժողին հանցագործությանը պատճառված վնասի փոխհատուցման գումարներից, որոնք, ըստ նույն հոդվածի 2-րդ մասի, վճարվում են պետական բյուջեից, եթե օրենքով այլ բան սահմանված չէ¹²: Բացի պետական բյուջեի միջոցների հաշվին տուժողին պատճառված վնասի փոխհատուցումն ապահովելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է նաև այլ դեպքեր տուժողին պատճառված վնասի հատուցման մասին, որը նույնպես դրված է դատարանի վրա: Խոսքը, մասնավորապես 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում սահմանված այն դրույթի մասին է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են հանցագործությանը պատճառված վնասի հատուցմանը: Հիշյալ նորմերին համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 14-րդ կետերում սահմանված է, որ դատավճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս այլ հարցերի, լուծում է այն հարցերը, թե պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել, ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը:

Այո, մի շարք դեպքերում տուժող և հայցվոր սուբյեկտները նույնանում են, սակայն կան սուբյեկտներ, որոնք քրեական գործում չեն կարող ճանաչվել տուժող, սակայն իրավունք ունեն հարուցելու հայց և

ճանաչվելու հայցվոր: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բոլոր այն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, որոնցում տուժողը մահացել էր, հայց հարուցել և հայցվոր ճանաչվել էին տուժողի իրավահաջորդները կամ նրա հարազատներից որևէ մեկը, որը գործով նույնիսկ իրավահաջորդ չէր ճանաչվել: Այլ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով հայց ներկայացրել և հայցվոր ճանաչվել էին հանցագործությունից անմիջապես տուժողները. բացառություն են կազմում պետությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցերը, որոնց դեռ կանգորդառնանք: Ասվածը նույնպես ցույց է տալիս, որ հայցվորը և տուժողը թեև մեծամասամբ նույնանուն են, սակայն նաև տարբերվում են: Իսկ այդ տարբերությունը պայմանավորված է հիմնականում տուժող և քաղաքացիական հայցվոր սուբյեկտների ի հայտ գալու համար հիմք հանդիսացող «վնաս» հասկացությամբ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 45-րդ կետի՝ քրեական դատավարությունում վնաս ասելով հասկացվում է՝ դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածում խոսվում է ուղղակի **գույքային վնասի** մասին՝ առանց կապելու դրամական չափման միավորի հետ:

Այսինքն, վնաս հասկացությունը պետք է հասկանալ երկու իմաստով՝ իրավաբանական և տնտեսագիտական:

Իրավաբանական իմաստով վնաս ասելով հասկացվում է հանցագործությամբ անմիջապես պատճառված բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը, որը տուժող սուբյեկտի ի հայտ գալու հիմքն է, իսկ տնտեսագիտական իմաստով վնաս ասելով հասկացվում է այդ նույն բարոյական, ֆիզիկական և գույքային վնասի դրամական չափման միավորը, որը քաղաքացիական հայցվոր սուբյեկտի ի հայտ գալու հիմքն է:

Հեղինակները, նույնացնելով տուժողին և հայցվորին, ըստ էության, հիմք են ընդունում վնասի իրավաբանական իմաստը: Մինչդեռ, հայցվոր սուբյեկտի ի հայտ գալու համար պարտադիր է վնաս հասկացության տնտեսագիտական իմաստը: Իսկ երբ հարցին նայում ենք այս տեսանկյունից, ապա ոչ միշտ է, որ տուժող և հայցվոր սուբյեկտները նույնանուն են:

Այս ենթատեքստում պետք է համաձայնվել այն մտեցումների հետ, որ եթե հայցվորը մահացել է, ապա նրա իրավունքները պետք է փոխանցվեն նրա հարազատներից որևէ մեկին, ինչպես տուժողի իրավահաջորդի դեպքում:

Այսպիսով, ոչ թե տուժողն է լայն հասկացություն, այլ հայցվորն է ավելի լայն հասկացություն, ուստի հայցվոր սուբյեկտից հրաժարվելը, կարծում ենք, ոչ միայն նպատակահարմար չէ, այլև այդ դեպքում կսահմանափակվեն այն անձանց իրավունքները, որոնք քրեական գործով տուժող չեն, սակայն ունեն քրեական դատավարությունում հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այսինքն, քաղաքացիական հայցվոր ճանաչելը՝ որպես դատավարական գործողություն, մի կողմից ապահովում է հանցագործությունից իրական տուժածներին քրեական դատավարության մատչելիությունը՝ նրանց զինելով համապատասխան իրավունքներով ու պարտականություններով, մյուս կողմից՝ խոչընդոտում է քրեական դատավարությունում հավանական տուժածների հայտնվելուն:

Ընդհանուր առմամբ քաղաքացիական հայցվոր ճանաչելը համարվում է ոչ միայն տուժածի և մեղադրյալի կամ քաղաքացիական պատասխանողի օրինական շահերի պաշտպանության երաշխիք, այլև արդարադատության երաշխիք:

Բացի ասվածից՝ հայցվորից հրաժարվելը նպատակահարմար չէ նաև այն առումով, որ հայցը հարուցվում է կասկածալի, մեղադրյալի կամ մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ և հասցեագրվում է դատարանին (**թեև օրենքում ուղղա-**

ՔՐԵՎԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կիրոն Եշված չէ, սակայն դա բխում է այն հանգամանքից, որ հայրը լուծում է դատարանը): Սա նշանակում է, որ քննիչը, դատախազը չեն կարող ներկայացված հայրը մերժել. դա դատարանի բացառիկ իրավասությունն է, մինչդեռ եթե գտնում են, որ հայրը ներկայացրած անձը չի կարող քրեական դատավարությունում հարուցել հայր և ճանաչվել հայրվոր, ապա կարող են գոնե մերժել անձին հայրվոր ճանաչելը: Հայրվոր ճանաչելու ինստիտուտը վերացվելու դեպքում կստեղծվի անորոշ իրավիճակ՝ վարույթն իրականացնող մարմիններն առանց վերահսկողության և առանց բացառության կընդունեն բոլոր հայցադիմումները անկախ նրանից, թե դրանք քննվող գործին առնչվում են, թե ոչ: Իսկ կոնկրետ գործով բոլոր հայր ներկայացրած անձանց հայրվորի իրավունքներով և պարտականություններով զինելը ի վերջո հանգեցնում է քրեադատավարական գործունեության կազմալուծմանը¹⁴:

Կարծում ենք՝ անհիմն է նաև այն պնդումը, որ տուժողը պետք է ստանա վնասի հատուցում մեխանիկորեն: Ինչպես իավացիորեն նշում է Տ.Ռ.Գալիմովը, այդ դեպքում տուժողը կզրկվի մեղադրյալի դեմ հայր հարուցելու կամ չհարուցելու ինքնուրույն որոշում կայացնելու իրավունքից, ընդ որում, ե՞րբ և ի՞նչ կարգով՝ քրեական գործի հետ մեկտե՞ղ, թե՞ քաղաքացիական դատավարության կարգով: Այս դեպքում, փաստորեն, տուժողին պարտադրվում է վնասի հատուցումը՝ առանց նրա կարծիքը հաշվի առնելու, ինչը հակասում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի մասով դիսպոզիտիվության և մրցակցության սկզբունքին¹⁵:

Հայրվորից հրաժարվելով տուժողին պատճառված վնասի հատուցումը մեխանիկորեն կատարելու անարդյունավետությունը բխում է նաև դատական պրակտիկայից: Բանն այն է, որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվե-

ցին, որ դատավճիռներում դատարանները նույնիսկ հարուցված հայցերն են թողնում առանց քննության անհիմն պատճառաբանություններով, որոշ դեպքերում էլ դատարանները պատճառված վնասի հատուցման հարցը քննարկման առարկա չեն դարձնում ընդհանրապես¹⁶: Այս պայմաններում, կարծում ենք, ոչ միայն նպատակահարմար չէ հայրվորից հրաժարվելը և տուժողին պատճառված վնասի հատուցման մասին մեխանիկորեն որոշում կայացնելու առաջարկությունը, այլև ձևավորված իրավակիրառ պրակտիկայի պայմաններում դա չի բխի նաև հենց տուժողի շահերից:

Անձին հայր հարուցելու իրավունքը բացատրելու և հայրվոր ճանաչելու հանգամանքը պայմանավորված է նաև ՄԱԿ-ի 1985 թվականի նոյեմբերի 29-ի «Հանցագործության զոհերի և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագրի պահանջներով, որում մասնավորապես սահմանված է, որ հանցագործության զոհերը, ազգային օրենսդրությանը համապատասխան, **պետք է ունենան** արդարադատության մեխանիզմների մատչելիության և նրանց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Դրա համար անհրաժեշտ է նպաստել, որ դատական և վարչական ընթացակարգերը մեծամասամբ համապատասխանեն զոհի պահանջունքներին, մասնավորապես՝ անհրաժեշտ է զոհին տրամադրել դատական քննության ընթացքում նրա կարգավիճակի, դերի և այլ հարցերի մասին տեղեկություն /կետ 6, ենթակետ «ա»/, կանխել զոհերին փոխհատուցում տրամադրելու որոշման կատարման և գործի քննության անհարկի ձգձգումները /կետ 6, ենթակետ «ե»/ և այլն: Համանման դրույթ է պարունակում նաև 1985 թվականի հունիսի 28-ի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» ԵԽՆԿ R(85) 11 հանձարարականը, որի 9-րդ կետում սահմանված է, որ տուժողին պետք է տեղեկացնել քրեական դատավարությունում ռեստիտուցիա և փոխհատուցում ստանալու հնարավոր-

րութեան մասին:

Այսպիսով, հանցագործությունից վնաս կրած անձին հայցվոր ճանաչելը ստեղծում է անհրաժեշտ նախադրյալներ նրա գույքային իրավունքների և օրինական շահերի իրական պաշտպանության համար և միաժամանակ համարվում է նրանց գույքային շահերի ապահովման կարևոր երաշխիք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունք ունի ոչ միայն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձը, այլև դատախազը, եթե խախտվել են պետության գույքային շահերը /քր. դատ. օր. 156-րդ հոդված/: Ի դեպ, հայց հարուցելը ոչ թե դատախազի իրավունքն է, այլ պարտականությունը /քր. դատ. օր. 52-րդ հոդվածի 2-րդ մաս/: Ընդ որում, քրեական դատավարությունում հայց հարուցած դատախազը հանդես է գալիս որպես դատախազ, և ոչ որպես հայցվորի ներկայացուցիչ, և ոչ էլ որպես հայցվոր¹⁷:

Պետության գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազի իրավունքը /պարտականությունը/ սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան: Կարևոր է ուշադրություն դարձնել, որ Սահմանադրական հիշյալ նորմը կոնկրետացնող ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում սահմանված է, որ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայց հարուցելու իրավունքը (ավելի ճիշտ՝ պարտականությունը) դրված է միայն դատախազի վրա. բացի դատախազից՝ որևէ այլ սուբյեկտ պետությանը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար հայց հարուցելու իրավունք և պարտականություն չունի /քր. դատ. օր-ի 156-րդ հոդված, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդված/:

Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկան զարգացել է այլ ուղղությամբ: Առավել տարածված պրակտիկայի համաձայն՝ հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի հատուցման համար քաղաքացիական հայց հարուցում և քաղաքացիական հայցվոր կամ քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ են ճանաչվում տարբեր պետական մարմիններ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հարկային հանցագործությունների¹⁸ վերաբերյալ քրեական գործերով 99 % դեպքերում քաղաքացիական հայց էին հարուցել հարկային մարմինները, որոնք այնուհետև ճանաչվել էին քաղաքացիական հայցվոր կամ քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ¹⁹, իսկ էկոլոգիական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով որպես քաղաքացիական հայցվոր հանդես էին եկել բնապահպանական մարմինները²⁰: Նույնիսկ անտեսվում է օրենքի այն պահանջները, որ հայցվոր կարող է ճանաչվել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձը, իսկ պետությունը և նրա անունից հանդես եկող տարբեր պետական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք չեն համարվում ոչ ֆիզիկական, ոչ էլ իրավաբանական անձ: Իսկ վնասը հասցվում է պետությանը, այլ ոչ թե պետական մարմիններին:

Այսպիսով, պետական մարմինները քրեական դատավարությունում չեն կարող հարուցել հայց և ճանաչվել հայցվոր, ուստի անհրաժեշտ է իրավակիրառ պրակտիկան ենթարկել հիմնարար փոփոխության:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ 1) անհրաժեշտ է օրենսգրքի 59-րդ հոդվածում սահմանել, որ **տուժողն իրավունք ունի հանցագործությամբ իրեն պատճառված վնասի հատուցման համար քրեական դատավարությունում ներկայացնել հայց**. 2) անհրաժեշտ է օրենսգրքի՝ քաղաքացիական հայցվորը վերտառությամբ 60-րդ հոդվածի 2-րդ մաս-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

սը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործի նյութերից պարզելով, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով քրեական դատավարության կարգով հա-

տուցման ենթակա վնաս է պատճառվել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, վարույթն իրականացնող մարմինը նրանց կամ նրանց ներկայացուցիչներին բացատրում է քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքը, որի մասին կազմում է արձանագրություն կամ տեղեկացում է գրավոր»:

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածում սահմանված է, որ եթե որևէ անձ գտնում է, որ առկա են օրենքով սահմանված հիմքերը իրեն քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին, ապա դիմում է ներկայացնում վարույթն իրականացնող մարմնին այդ առնչությամբ: Վարույթն իրականացնող մարմնիների վրա պարտականություն է դրված եռօրյա ժամկետում լուծել այդ հարցը՝ կամ ճանաչել հայցվոր, կամ հրաժարվել հայցվոր ճանաչելուց: Երկու դեպքում էլ որոշումը հիմնօրյա ժամկետում պետք է առաքվի դիմած անձին, որն իրավունք ունի այդ որոշումը բողոքարկելու դատական կարգով:

² Այս առումով ՀՀ քրեական դատավարությունում առկա է հակասություն, քանի որ 100-րդ հոդվածում էլ նշվում է հայցվոր ճանաչելու համար դիմում ներկայացնելու մասին:

³ Տե՛ս Золотая Е.А. Исковой способ защиты имущественных прав лиц, нарушенных преступлением. Автореф. Дисс. на к.ю.н. Нижний Новгород, 2006. С.132-133.

⁴ Վարույթն իրականացնող մարմնիների համար այդպիսի պարտականություններն ուղղակիորեն բխում են միջազգային իրավական ակտերի պահանջներից: ՄԱԿ-ի 1985 թվականի նոյեմբերի 29-ի «Հանցագործության զոհերի և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագրում մասնավորապես սահմանված է, որ հանցագործության զոհերը, ազգային օրենսդրությանը համապատասխան **պետք է ունենան** արդարադատության մեխանիզմների մատչելիության և նրանց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Դրա համար անհրաժեշտ է նպաստել, որ դատական և վարչական ընթացակարգերը մեծամասամբ համապատասխանեն զոհի պահանջներին, մասնավորապես՝ անհրաժեշտ է զոհին տրամադրել դատական քննության ընթացքում իր կարգավիճակի, դե-

րի և այլ հարցերի մասին տեղեկություն /կետ 6, ենթակետ «ա»/, կանխել զոհերին փոխհատուցում տրամադրելու որոշման կատարման և գործի քննության անհարկի ձգձգումները /կետ 6, ենթակետ «ե»/ և այլն: Համանման դրույթ է պարունակում նաև 1985 թվականի հունիսի 28-ի «Տուժողի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» ԵՆԽԿ R(85) 11 հանձարարականը, որի 9-րդ կետում սահմանված է, որ տուժողին պետք է տեղեկացնել քրեական դատավարությունում ռեսուրսիտուցիա և փոխհատուցում ստանալու հնարավորության մասին:

⁵ Տե՛ս Жеребятьев И.В. Гражданский иск-средство защиты прав потерпевшего //Ученые записки: Сборник научных трудов юр.фак. ОГУ. Выпуск 1. Оренбург: РИК ГОУ ОГУ, 2004, с.99-105.

⁶ Տե՛ս Садов Ю.А. Гражданский истец или потерпевший?//Вестник Владимирского юридического института 4/5, Владимир, 2007, с. 243-245.

⁷ Տե՛ս Гриненко А. Потерпевший должен иметь не меньше процессуальных прав, чем обвиняемый //Росс.юстиция. 2002/9.

⁸ Տե՛ս Гершман И. Некоторые процессуальные вопросы гражданского иска в уголовном деле // Советское гос. И право. 1958/1. С.120.

⁹ Տե՛ս Ռ.Մելքոնյան Քաղաքացիական հայցի քրեադատավարական հարցեր //Դատական իշխանություն, 2009/8-9/121-122, էջեր 48-56:

¹⁰ Այս հարցերին արդեն անդրադարձել ենք հայցի հիմքը քննարկելիս //տե՛ս **Ս.Մարաբյան**, Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմքը //Պետություն և իրավունք, 2009/ 3/45/, էջեր 23-36:

¹¹ Տե՛ս Тертышник В., Тертышник А. Проблемы защиты прав потерпевшего в уголовном процессе Украины и России // Право и политика. 2003/11, с. 83-88.

- ¹² Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դատական արակտիկայում կան դեպքեր, երբ դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված դատական ծախսի լուծման հարցին, նշում է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նախատեսված դատական ծախսերը դատարանի նախաձեռնությամբ ենթակա չեն բռնագանձման, քանի որ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար տուժող Լյովա Պողոսյանը հայտնեց, որ որևէ պահանջ չունի...» **(ՏԵՆ ԵՆՂԴ-0064/01/09, 2009 թվականի նոյեմբերի 27-ի Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը)**: Թեև դատարանն այստեղ թույլ է տվել օրենքի խախտում, քանի որ հիշյալ դատական ծախսը չի կարող զանձվել քաղաքացիական հայցի միջոցով. դրա համար սահմանված է այլ ընթացակարգ, ավելին, հայցը գործող օրենսդրության իմաստով հարուցվում է միայն մեղադրյալի կամ քաղաքացիական պատասխանողի դեմ, սակայն իրողությունն այն է, որ օրենքում տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի փոխհատուցումը դիտվում է որպես դատական ծախս, որը պետք է հատուցվի պետական բյուջեից, բացառիկ դեպքերում՝ դատարանի որոշմամբ՝ նաև անբաստանյալից:
- ¹³ Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. Гражданский иск в уголовном деле. М., 2009, с. 95-96:
- ¹⁴ Տե՛ս Галимов Т.Р. Субъекты доказывания гражданского иска в российском уголовном судопроизводстве. Автореф. Дис. К.ю. наук. Ижевск, 2006. С.20:

- ¹⁵ Այս հարցերը առանձին քննարկման նյութ են:
- ¹⁶ Ռ.Ռ. Ռախունովի կարծիքով, եթե դատախազը հայց է հարուցում պետական և հասարակական կազմակերպությունների շահերի համար, ապա որպես հայցվոր հանդես է գալիս ինքը /տե՛ս Р.Д.Рахунов Участники уголовно-процессуальной деятельности. М., 1961, с. 251-253/: Այս տեսակետը արդարացիորեն ենթարկվել է քննադատության: Ինչպես նշում է Մազալովը, ելնելով հիշյալ տեսակետից՝ կարելի է հետևություն անել, որ դատախազի կողմից հայց հարուցվելու դեպքում քննիչը կամ դատարանը պետք է որոշում կայացնեն դատախազին քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին: Հեղինակի կարծիքով, հայց հարուցած դատախազին չպետք է նույնացնել ոչ հայցվորի հետ, ոչ էլ նրա ներկայացուցչի /տե՛ս Мазалов А.Г. նշված աշխատությունը, էջ 86-88/:
- ¹⁷ Այստեղ չենք անդրադառնում այն հարցի քննարկմանը, որ հարկային հանցագործությունների դեպքում հայց չի կարող հարուցվել, քանի որ դրան անդրադարձել ենք մեր նախկին հոդվածներից մեկում //տե՛ս Ս.Սարաբյան, Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմքը //Պետություն և իրավունք, 2009/ 3/45/, էջեր 23-36:
- ¹⁸ ԵՔՐԴ-0532/01/08 գործով հայցվոր է ճանաչվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Շահունյանի հարկային տեսչությունը, ԵՔՐԴ/0382/01/08 գործով ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Քանաքեռ-Զեյթուն հարկային տեսչությունը, ՏԴ-0010/01/09 գործով ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի տարածքային հարկային տեսչությունը և այլն:
- ¹⁹ ՏԴ-0028/01/08 գործով հայց հարուցել և հայցվոր է ճանաչվել ՀՀ ԲՆ ԲՊՏ Տավուշի տարածքային բաժինը և այլն:

Քրեական իրավունք եւ **Դատաւարութիւն**

Сергей Марабян

Соискатель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, начальник организационно-правового управления Судебного департамента РА

Некоторые вопросы процессуального статуса гражданского истца в уголовном процессе

В настоящей статье автор обсуждает актуальный для уголовного процесса РА вопрос, который касается вопросов судебного статуса гражданского истца в уголовном процессе. В действующем уголовно-процессуальном кодексе предусмотрено, что истцом является физическое или юридическое лицо, подавшее иск за компенсацию материального ущерба, причиненного запрещенным уголовным кодексом действием и подлежащим компенсации в уголовно-процессуальном порядке. Из закона не ясно, откуда лицо осведомлено об этом своем праве, пользуясь которым он может предъявить иск, учитывая тот факт, что уголовный процесс имеет ряд особенностей. То есть закон предусматривает

регулирование только тех отношений, которые возникают после предъявления иска, ничего не говоря об отношениях, возникающих до предъявления иска. Тем самым автор обосновывает, что действующий процессуальный порядок признания лица истцом непродуктивен, и поэтому предлагает внести в закон специальную норму, относительно процессуального порядка признания истцом лица, которому был нанесен вред совершением преступления. Автор предлагает возложить на осуществляющих процесс соответствующую обязанность разъяснения лицам преступления, их право предъявить иск в рамках уголовного процесса и признания истцами в случае предъявления такого иска. Кроме того, автор отмечает, что несмотря на то, что такие понятия, как потерпевший и истец, правда, родственные понятия, но тем не менее они не идентичны. Основа возникновения потерпевшего в уголовно-процессуальных отношениях является юридический вред (вред, нанесенный непосредственно преступлением), а для гражданского истца такой основой является экономический вред (единица денежного измерения вреда, нанесенного непосредственно преступлением).

Sergey Marabyan

*Candidate for PhD of YSU Law Faculty,
Head of organizational-legal Division of Judicial
Department of RA*

***Certain questions of procedural
status of the civil claimant in
criminal process***

In the present article the author talks about such an urgent question for Criminal Process of RA, which concerns the question of judicial status of civil claimant in criminal process. The acting Code of Criminal Process provides, that claimant is the physical or artificial person, who filed a suit for the compensation for material damage, caused by the action, prohibited by the Criminal Code and subject to compensation in the procedure of criminal process. The Law does not clear up from where the person knows about that right, using which he can file a suit, taking into account the fact, that the criminal process has a number of features. That means that the law provides only those relationships, which appear after the filing a suit, without regulation of anything relationships, which appear before the filling a suit. Thus, the author substantiates, that the acting procedural order of the acknowledgement a person as a civil claimant is unproductive, and thus suggests to provide in the Law a special norm about procedural order of acknowledgment a person as a civil

claimant, who suffered from the crime. The author suggests to put on the authorities duty of informing a person, who suffered from the crime about his (her) right to file a Cuit within the scope of the criminal process and about acknowledgement him (her) as a sivil claimant in case filing such a suit. Besides, the author substantiates, that such meanings as a victim and a civil claimant are, of course, relational meanings, however they are not the same. The ground for the victim to appear in criminal procedure relations is the legal injury (injury, caused directly by the crime), and for the civil claimant such a ground is the economic injury (pecuniary unit of the injury, caused directly by the crime).

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒՆ ԱՌԵՎԱՆԳԵԼԸ ԱՅԼ ԶԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՏ
ԶԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՐԱԿԵԼՈՒ ԶԱՐՑԸ**

Գուրգեն ՔՈԹԱՆՁՅԱՆ

Իրավաբան

ԶԶ քր. օր-ի հոդվ. 131-ի դիսպոզիցիայում մարդուն առևանգելը բնութագրվում է որպես խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները:

Փաստորեն մարդու առևանգումը կարող է կատարվել ինչպես առանց բռնության, այնպես էլ բռնության գործադրմամբ: Այստեղ բավականաչափ կարևոր է բռնության բնույթի և ծանրության հարցը: Բռնության գործադրման բնույթից է կախված, թե կհամարվի՞ ինքնուրույն հանցագործություն և մարդուն առևանգման հանցակազմի հետ կորակվի՞ համակցությամբ, թե՞ մարդուն առևանգելու հանցակազմը կկլանի այդ արարքը, և այն ինքնուրույն չի որակվի:

Մարդուն առևանգելիս բռնություն գործադրելու դեպքում վնաս է պատճառվում երկու օբյեկտի՝ անձի ազատությանը և մարդու առողջությանը: Այս դեպքում հանցագործությունը դառնում է երկօբյեկտ և բնութագրվում է որպես հանցավորի գործողությունները անմիջական օբյեկտի դեմ ուղղված, բայց միաժամանակ վնաս են պատճառում լրացուցիչ օբյեկտին, ու չնայած օբյեկտների տարբեր լինելուն, դրանք գտնվում են օրգանական միասնության մեջ:

ԶԶ քր.օր-ի հոդվ. 131-ի 2-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում մար-

դուն առևանգելու համար, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Մեր կարծիքով, առողջությանը ոչ մեծ ծանրության և միջին ծանրության վնաս հասցնելու դեպքում արարքները չպետք է որակվեն հանցագործությունների համակցությամբ, քանի որ հոդված 131-ը դրանք կլանում է: Այդ արարքները պետք է որակել քր. օր. հոդվ. 131-ի 2-րդ մասի 2-րդ կետով: Իսկ եթե առողջությանը ծանր վնաս է պատճառվում, այդ դեպքում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ(հոդվ. 112 և 131): Սակայն, բացի մարմնական վնաս պատճառելուց, բռնությունը կարող է արտահայտվել նաև ծեծով և բռնությամբ կատարվող այլ գործողություններով: Բացի այդ, բռնությունը կարող է արտահայտվել նաև դա գործադրելու սպառնալիքով: Պետք է նշել, որ բռնություն գործադրելու սպառնալիքը մտնում է մարդուն առևանգելու հանցակազմի մեջ և առանձին չի որակվում: Սակայն կարող են լինել դեպքեր, երբ բռնություն գործադրելու սպառնալիքը որակվի որպես առանձին հանցագործություն:

Մեր կարծիքով, այն դեպքերում, երբ սպառնալիքը դրսևորվում է որպես մարդուն առևանգելու ժամանակ տուժողին տիրանալու (վերցնելու), նրան տեղափոխելու կամ պահելու միջոց, արարքի որակումը հանցագործությունների համակցությամբ անպատակահարմար է: Իսկ եթե սպառնալիքը չի հանընկել առևանգման հետ, չի հանդիսացել այդ հանցագործության կատարման միջոց, ապա կատարվածը հարկավոր է որակել հանցագործությունների համակցությամբ՝ հոդվ.131 և

հողվ.137: (քր. օր.-ի հողվ. 137-ը պատասխանատվություն է սահմանում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույքը ոչնչացնելու սպառնալիքի համար, եթե այդ սպառնալիքը իրականացնելու իրական վտանգ է եղել):

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հողվ. 104-ի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցակազմին: Հարց է առաջանում, թե ինչպես որակել մարդուն առևանգելով զուգորդված սպանությունը: Նշված խնդիրը իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք է տվել:

Մեր կարծիքով, այս դեպքում անհրաժեշտ է արարքը որակել հանցագործությունների համակցությամբ (հողվ. 131 և հողվ. 104-ի 2-րդ մասի 3-րդ կետով): Սակայն որոշ հեղինակներ առաջարկում են տվյալ արարքը որակել միայն հողվ. 104-ի 2-րդ մասով՝ սպանություն՝ զուգորդված մարդուն առևանգելով կամ պատանդ վերցնելով¹:

Որոշ հեղինակներ գտնում են, որ առևանգման ժամանակ կատարված սպանության որակումը հանցագործությունների համակցությամբ նշանակում է, որ անձը իր կատարած արարքի համար ենթարկվում է կրկնակի պատասխանատվության, ինչը հակասում է արդարության սկզբունքին՝ «արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար» (ՀՀ քր. օր. հողվ. 10-րդ 2-րդ մաս): Այս մոտեցման կողմնակիցները համարում են, որ հողվ. 104-ի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսված հանցակազմը սպանությունից զատ ներառում է նաև մարդուն առևանգելը, ուստի այս դեպքում բավարար է միայն արարքը որակել հողվ. 104-ի 2-րդ մասով: Քրեական իրավունքի գիտության մեջ կարծիք կա, որ սպանությունը՝ զուգորդված մարդուն առևանգելով, օրենքով նախատեսված երկու հանցագործությունների իրական համակցություն է, որը պետք է որակել քրեական օրենսգրքի մեկ հոդվածով:

Գիտնականների այս խումբը ավելի ճիշտ է համարում ընդհանրապես հրաժարվել այնպիսի կառուցվածքով հանցակազմերից, երբ հանցագործությունը զուգորդվում է մեկ այլ հանցագործության կատարմամբ: Եթե սպանությունը զուգորդված լինի մարդուն առևանգելով, ապա հանցագործություններից յուրաքանչյուրը կորակվի ինքնուրույն, և պատիժը կնշանակվի հանցագործությունների համակցությամբ: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, մեր կարծիքով, նման տեսակետը արդարացված չէ: Նախ ՀՀ քր. օր.-ի հողվ. 104-ով և հողվ. 131-ով նախատեսված հանցագործությունները ինքնուրույն հանցակազմեր են: Օրենսդիրը, սահմանելով պատասխանատվություն համապատասխան հանցավոր արարքի համար, հաշվի է առնում ինչպես արարքի հանրային վտանգավորությունը, այնպես էլ այլ հանգամանքներ: Այսպիսով, «սպանություն՝ զուգորդված մարդուն առևանգելով» օրենսդրական նորմը, սահմանելով պատասխանատվության բարձր աստիճան, ապահովում է տուժողի կյանքի պաշտպանությունը: Չպետք է մոռանալ նաև, որ ծանրացնող նշված հանգամանքը առկա է նաև հանցավորի կողմից այլ անձանց սպանության դեպքում, որը կապված է առևանգման հետ:

Մեր կարծիքով, նշված հանցագործությունների որակումը համակցությամբ չի խախտում քր. օր.-ի ընդհանուր մասում սահմանված արդարության սկզբունքը:

Նախատեսելով սպանության այսպիսի որակյալ տեսակ՝ օրենսդիրը միայն ընդգծում է այս հանցագործությունների հանրային վտանգավորության բարձր աստիճանը և ապահովում է մարդկանց կյանքի օրենսդրական պաշտպանությունը²:

Այս հանցագործությունները ճիշտ որակելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ քր. օր.-ի հոդված 104-ի 2-րդ մասով նախատեսված նորմում ծանրացնող հանգամանքի դերում հանդես է գալիս ոչ թե մարդուն առևանգելը, այլ մարդու առևանգման

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

և սպանության զուգորդվածությունը: Այսինքն՝ հողվ. 104-ի 2-րդ մասում հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշը սպանության և մարդուն առևանգելու միջև կապն է (զուգորդվածությունը): Ուստի մարդուն առևանգելը չի կարող մտնել հողվ. 104-ի 2-րդ մասի 3-րդ կետի դիսպոզիցիայի մեջ. այս երկու արարքները ինքնուրույն հանցակազմեր են, և պետք է որակվեն հանցագործությունների համակցությամբ: Ընդ որում, արարքի որակման համար որևէ նշանակություն չունի, թե երբ է տուժողը սպանվել՝ առևանգման ընթացքում, թե անազատության մեջ պահելու ժամանակ՝:

Տուժողը կարող է կյանքից զրկվել նաև իրեն տեղափոխելու ընթացքում: Բացի այդ, այդպիսի սպանության ժամանակ տուժողի դեբրու կարող է հանդես գալ նաև այնպիսի անձ, որին չեն առևանգել: Այդպիսիք կարող են լինել, օրինակ, տուժողի ծնողները, հարազատները, իրավապահ մարմինների աշխատակիցները, որոնք փորձում են խոչընդոտել առևանգմանը: Եթե սպանություն կատարած անձի գործողություններում առկա են ոչ թե առևանգելու, այլ ազատությունից ապօրինի զրկելու հանցակազմի հատկանիշներ, ապա այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ոչ թե քր. օր.-ի 104-ի 2-րդ մասով, այլ հողվ. 104-ի 1-ին մասով:

Նույնը չի կարելի ասել պատանդ վերցնելու մասին: Եթե սպանություն կատարած անձի գործողություններում առկա է պատանդ վերցնելու հանցակազմի հատկանիշներ, արարքը պետք է որակել հողվ. 104-ի 2-րդ մասի և հողվ. 218-ի հանակցությամբ:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, առևանգումը հաճախ կատարվում է շորթման նպատակով: Պետք է նշել, որ եթե շորթումը ուղեկցվում է առևանգմամբ, ապա

այն չի կարող ընդգրկվել վերջինիս հանցակազմի մեջ և պահանջում է ինքնուրույն որակում՝ հանցագործությունների համակցությամբ: Այս կարծիքին է հետազոտողների մեծ մասը:

Որոշ հեղինակներ համարում են, որ առևանգման ու ազատությունից ապօրինի զրկելու դեպքերում հանցավորը կամ ընդհանրապես պահանջներ չի ներկայացնում, կամ դրանք ուղղված են տուժողին, և նյութական բնույթ չեն կրում: Հակառակ դեպքում, ըստ իրենց, առկա է ոչ միայն շորթման հանցակազմը, այլ նաև առևանգման կամ ազատությունից ապօրինի զրկելու հանցակազմը: Նրանց կարծիքով, այս դեպքում առևանգումը կամ ազատությունից ապօրինի զրկելը բռնության գործադրման ձև է, տուժողի վրա ազդելու միջոց՝ տուժողից գույք ստանալու նպատակով՝:

Մեր կարծիքով, այս տեսակետը հիմնավորված չէ: Նախ և առաջ անհիմն է այն պնդումը, որ մարդուն առևանգելու կամ ազատությունից ապօրինի զրկելու դեպքերում պահանջները նյութական բնույթ չեն կրում: Ընդհակառակը, այս կատեգորիայի քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ առևանգման ժամանակ հաճախ ներկայացվում են նյութական պահանջներ:

Որպեսզի պարզություն մտնի այս հարցում, անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել շորթման (հողվ. 182) և շահադիտական դրդումներով մարդուն առևանգելու (հողվ. 131-ի 2-րդ մաս, կետ 7) հանցակազմերը:

Վերը նշված նորմերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ նրանց միջև կան էական տարբերություններ: Ամենից առաջ դրանցից յուրաքանչյուրը ուղղված է առանձին բարիքների պաշտպանությանը:

Այսպես, առևանգման ժամանակ հանցագործության անմիջական օբյեկտը անձի ֆիզիկական ազատությունն է, շորթման դեպքում՝ սեփականության իրավունքը: Առևանգման դեպքում շահադիտական

դրդապատճառի առկայությունը վկայում է, որ հանցավորի գործողությունները, տուժողի ազատությունը սահմանափակելուց զատ, ուղղված են սեփականության հարաբերությունները խախտելուն: Այս դեպքում առևանգման լրացուցիչ օբյեկտը համընկնում է շորթման անմիջական օբյեկտի հետ:

Բացի այդ, շորթման առարկայի և շահադիտական դրդումներով առևանգման նպատակների համեմատությունը թույլ է տալիս խոսելու դրանց նմանության մասին: Այսպես, շահադիտական դրդումներով առևանգման դեպքում հանցավորի նպատակը որևէ նյութական օգուտ ստանալն է, օրինակ՝ դրամական փոխհատուցում ստանալը, հանցավորին որևէ ձեռնարկության կազմում ընդգրկելը և այլն: Այս արժեքներն ու գործողությունները շորթման հանցակազմի առարկան են, իսկ հողվ. 131-ի 2-րդ մասով՝ նախատեսված հանցակազմի նպատակը:

Ի տարբերություն շորթման՝ շահադիտական դրդումներով առևանգման օբյեկտի կողմը արտահայտվում է տուժողին վերցնելով(տիրանալով) և իր կամքին հակառակ նրան այլ վայր տեղափոխելով:

Ընդ որում, անհրաժեշտ է, որ հանցավորի մոտ շահադիտական դրդապատճառը առաջանա մինչև հանցավոր գործողությունների կատարումը: Բացի այդ, պարտադիր է, որ առևանգման նպատակը իրագործվի: Այսպիսով, քննարկվող հանցագործությունների օբյեկտի կողմերը տարբեր են:

Տարբեր են նաև ուսումնասիրվող հանցագործությունների ավարտման պահերը: Առևանգումը սկսվում է տուժողին վերցնելու պահից և ավարտված է համարվում նրան տեղափոխելու փուլում: Իսկ եթե խոսքը առևանգման քննարկվող տեսակի մասին է, ապա անհրաժեշտ է, որ հանցավորը առաջնորդվի շահադիտական մղումներով: Այդ պատճառով էլ հանցավորի հետագա գործողությունները, որոնք կապված են գույք փոխանցելու պահանջի հետ, գտնվում են այս հանցակազմից դուրս, մտնում են հողվ. 182-ով նախատեսված

հանցակազմի մեջ:

Շորթումը, լինելով հատված հանցակազմ, ավարտվում է տուժողին կամ նրա մերձավորներին սպառնալիքով գույք, գույքային իրավունք կամ գույքային բնույթի գործողություններ կատարելու պահանջ ներկայացնելու պահից:

Պետք է նշել նաև, որ եթե բռնությունը գործադրվում է անմիջապես առևանգման ժամանակ (օրինակ՝ տուժողի դիմադրությունը կոտրելու նպատակով), ապա ընդգրկվում է հողվ. 131-ի 2-րդ մասում: Սակայն հանցավորի կողմից տուժողի նկատմամբ կատարվող հետագա բռնությունը՝ որպես պահանջների կատարման եղանակ, ընդգրկվում է հողվ. 182-ում:

Ամփոփելով քննարկվող հանցագործությունների օբյեկտի կողմերի համեմատական վերլուծությունը՝ պետք է նշել, որ շահադիտական դրդումներով մարդուն առևանգելու փաստը դեռ չի վկայում հողվ. 182-ով նախատեսված հանցակազմի առկայության մասին:

Ըստ սուբյեկտի կողմի՝ շորթումը շահադիտական բնույթի հանցագործություն է, որը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ անօրինական պահանջներ է ներկայացնում և ցանկանում է ստանալ նյութական բարիքներ:

Շահադիտական դրդումներով առևանգման ժամանակ հանցավորը գիտակցում է, որ անօրինական կերպով տիրանում է այլ անձի և հակառակ նրա կամքին՝ տեղափոխում է այլ վայր և ցանկանում է դա: Ընդ որում, հանցավորի գիտակցության մեջ մտնում է տուժողի ազատությունը սահմանափակելու մասին պատկերացումը:

Հարկ է նշել, որ արարքը հողվ. 131-ի 2-րդ մասի 7-րդ կետով որակելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք շահադիտական դրդապատճառը առաջացել է մինչև հանցագործության կատարումը և ազդել է հանցագործության կատարման վրա:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված հանցագործությունների սուբյեկտն է 14 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը: Քննարկվող հանցագործությունները ճիշտ որակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները: Այսպես, օրինակ, հանցավորը գալիս է տուժողի բնակարան, դուրս բերում նրան աստիճանավանդակ, որտեղ տուժողին մի քանի ժամ պահելով՝ սպանության և բռնություն գործադրելու սպառնալիքով պահանջում է նրանից գումար:

Մեր կարծիքով, նկարագրված օրինակում հանցավորի գործողությունները պետք է որակել միայն հողով. 182-ով, քանի որ այսպիսի «առևանգումը» մտնում է շորթման օբյեկտիվ կողմի մեջ: Այս օրինակում հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, մինչդեռ մարդու ֆիզիկական ազատությունը հանդես է գալիս ֆակուլտատիվ օբյեկտի դերում:

Մեկ այլ դեպքում, կրկին նույն նպատակով, տուժողին տեղափոխում են այլ վայր, որտեղ նրան մի քանի ամիս պահում են լքված շինությունում: Այստեղ հանցավորը առաջին հերթին ոտնձգություն է կատարում անձի ֆիզիկական ազատության նկատմամբ, և նրա գործողությունները պետք է որակել հողով. 131-ի և հողով. 182-ի համակցությամբ:

Պրակտիկայում բարդություններ են առաջանում այն դեպքերում, երբ առևանգ-

ման ժամանակ հանցավորը տուժողին իրավաչափ պահանջներ է ներկայացնում, այսինքն երբ հանցավորը փորձում է իրականացնել իր իրական կամ ենթադրյալ իրավունքները (ստանալ պարտքը, հասնել այն բանին, որ տուժողը կատարի իր պարտականությունները և այլն):

Այս դեպքում բացակայում է շահադիտական դրդապատճառը, ուստի շորթման մասին խոսելն ավելորդ է, քանի որ շորթումը դասվում է շահադիտական հանցագործությունների թվին: Այդպիսի արարքը պետք է որակել որպես ինքնիրավչություն (հողով. 322):

Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ եթե մարդու առևանգման ժամանակ ներկայացվում են իրավաչափ պահանջներ, արարքը պետք է որակել հողով. 131-ի և հողով. 322-ի համակցությամբ⁶:

Սակայն, մեր կարծիքով, այս հանցագործությունները չի կարելի որակել համակցությամբ: Ինքնիրավչության հանցակազմի էությունը այն է, որ անձը հենց օրենքի կամ այլ իրավական ակտի խախտմամբ է փորձում իրականացնել իր իրավունքները, հակառակ դեպքում այդ արարքը հանցագործություն չէր համարվի: Առևանգումը այն հակաիրավական միջոցն է, որով հանցավորը ցանկանում է իրականացնել իր իրավունքները, այսինքն՝ տվյալ դեպքում առևանգումը հողով. 322-ում նշված օրենքի խախտումն է, որով հանցավորը փորձում է իրականացնել իր իրավունքները: Եթե նման դեպքում տուժողի նկատմամբ բռնություն կամ բռնություն գործադրելու սպառնալիք գործադրվի, ապա արարքը կորակվի հողով. 322-ի 2-րդ մասով:

¹ St'u Зубкова В.Н., Тяжкова Н.М. ответственность за похищение человека.//Вестник МГУ. Серия 11. Право, 1996, N2, էջ 54-60:

² St'u Улицкий С. Практика применения нового закона при совершение убийства.//Уголовное право, 2005, N3, էջ 60:

³ St'u Б. Воложекин. Принцип справедливости и проблемы множественности преступлений. По УК. РФ. "Законность", N12, 1998:

⁴ St'u Адельханян Р. А. Умышленное причи-

нение смерти приотягающих обстоятельствах. М., 2002, էջ 27:

⁵ St'u Беляева Н., Орешкина Т., Квалификация преступлений посягающих на свободу человека.//Законность, 1994, N11, էջ 15:

⁶ St'u Парфиенко. Н.Г. Уголовно-правовая и криминологическая характеристика похищения человека. Дисс. канд. юрид. наук. Иркутск, 2007, էջ 111:

Гурген Котанджян

Юрист

Квалификация похищения человека по совокупности с иными деяниями

Похищение человека может совершаться как без насилия, так и с применением к потерпевшему насилия. Здесь весьма важным является вопрос о характере и объеме насилия, охватываемого основным и квалифицированным составами этого деяния, от его решения зависит и ответ на вопрос: совершение каких насильственных действий может образовать совокупность похищения человека с другими преступлениями против личности? С учетом этого можем сказать, что часть 1 ст. 131 УК РА охватывает собой побой и иные насильственные действия, не повлекшие кратковременного расстройства здоровья или утрату трудоспособности. Причинение легкого вреда здоровью а также средней тяжести охватывается ч. 2 ст. 131 УК РА. Совокупности с соответствующими деяниями, таким образом, не требуется. Она может быть лишь в случае причинение тяжкого вреда здоровью или в случае убийства потерпевшего.

Необходимо обратить особое внимание на состав преступления закрепленный в п. «п. 3» ч 2 ст. 104 УК РА в связи вопроса о том, каким образом квалифицировать убийство, сопряженное с похищением человека. Мы считаем, что похищение человека (ст. 131 УК РА) и убийство, сопряженное с похищением человека («3» ч. 2 ст. 104 УК РА) необходимо квалифицировать по совокупности преступлений. Похищение человека зачастую совершается в целях последующего вымогательства. Эта цель, будучи корыстной по своему содержанию, выступает в качестве квалифицирующего признака рассматриваемого состава. Должны отметить, что вымогательство, сопутствующее похищению человека, не охватывается составом последнего и требует квалификации по совокупности.

Gurgen Kotanjyan

Lawyer

Qualifications of kidnapping by combination with other acts. SUMMARY

Kidnapping can be accomplished without violence as well as with violence. A very important *matter* is the question of the nature and the amount of violence covered by the basic and qualified members of that act, his decision depends on the answer of the question: *can* the commission of violent acts form the set of kidnapping and other crimes against the person? *Having* this in mind we can say that part 1 of article. 131 of RA Criminal Code covers flogging and other violent actions, which do not involve short-term impairment or disability. Causing body harm *is* moderately covered in Part 2 of Art. 131 of RA Criminal Code *as well as*. Coupled with the act in question thus, *is* not required. It may be only in the case of grievous body harm or in the case of the murder victim. *Particular attention should be paid* to the crimes set forth in paragraph “3” h 2 tbsp. 104 of RA Criminal Code in relation to the question of how to qualify the killing coupled with kidnapping. We believe that kidnapping (Article 131 of RA Criminal Code) and murder, combined with the kidnapping of a person (“in” Part 2 of Art. 104 of RA Criminal Code) should *be qualified as* multiple offenses.

Abduction is often performed for further extortion. This aim, as a mercenary in its content, acts as a qualifying criterion under review ended. *It* should be noted that extortion, kidnapping accompanying person is not covered by the composition of the latter and requires skill on the aggregate.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Վարդան ԲեժԱՆՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

20-րդ դարի 80-ական թվականներից միջազգային շրջակա միջավայրի իրավունքում և արևմտյան մի շարք երկրների ազգային օրենսդրությամբ ամրագրվեց կանխարգելման սկզբունքը, որը նոր մոտեցումներ առաջադրեց շրջակա միջավայրի իրավական պահպանության և կառավարման ոլորտում: Սկզբունքի բովանդակությունը հանգում է նրան, որ շրջակա միջավայրի վրա ազդող որոշումներ կայացնելիս, երբ առկա է շրջակա միջավայրին և մարդու կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգ, լիարժեք գիտական հիմնավորումների բացակայությունը չպետք է մեկնաբանվի որպես այդ վտանգը չեզոքացնելուց հրաժարում: Ստորև կներկայացվեն սկզբունքի ձևավորման նախադրյալներն ու դրա միջազգային-իրավական վիճակը, կուսումնասիրվեն սկզբունքի հիմնական պահանջները և դրա վերաբերյալ գրականության մեջ արտահայտված հիմնական մոտեցումները:

Կանխարգելման սկզբունքի (Precautionary Principle) առաջացումը պայմանավորված է շրջակա միջավայրի վրա ազդող գործոնների բարդ բնույթով և դրանց ազդեցության ոչ միանշանակ հետևանքներով: Շրջակա միջավայրի վրա ազդող բոլոր որոշումների հիմքում ընկած են որոշակի գիտական եզրակացություններ, որոնք թույլ են տալիս հետևություններ անելու նախատեսվող որոշման պրտենցիալ ազդեցության վերաբերյալ: Այդուհանդերձ, գիտականորեն մշակված հիմնավորումները ոչ միշտ են միանշանակ և բացարձակապես ճշգրիտ: Այդ պատճառով նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստի-

ճանը հաճախ հնարավոր չի լինում հստակ կանխորոշել, և գործունեության հետևանքով առաջացող վնասները շարունակում են մնալ չբացառված, թեև նվազ հավանական: Շրջակա միջավայրի վրա ազդող որոշումների կայացման ընթացակարգի վերջնական նպատակը գործունեության հետևանքների հանկողմանի ուսումնասիրությունն ու բացասական հետևանքներին պատրաստ լինելն է: Հաշվի անմեղով շրջակա միջավայրի վրա ազդող գործոնների բարդ բնույթը և դրանց փոխկապակցվածությունը՝ հաճախ հնարավոր չի լինում նախապես որոշակիացնել հնարավոր վնասի տեսակը, դրա առտաջացման հավանականությունն ու կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակը: Արդյունքում ստացվում է այնպես, որ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշման արդյունքը հաճախ շեղվում է իր վերջնական նպատակից: Ձևավորվելով գիտական անորոշության հետևանքով՝ կանխարգելման սկզբունքը նման դեպքերում ենթադրում է միջոցներ ձեռնարկել հավանական վնասը բացառելու կամ մեղմելու ուղղությամբ՝ չսպասելով մինչև դրա անմիջական սպառնալիքի առաջացումը:

Կանխարգելման սկզբունքի ծագումը կապվում է 20-րդ դարի 70-ական թվականների վերջերին Արևմտյան Գերմանիայի Էկոլոգիական իրավունքում առաջադրված Vorsorgeprinzip սկզբունքի հետ: Այն դեռևս 20-րդ դարի 30-ական թվականներին գերմանական սոցիալ-իրավական մշակույթում ձևավորված տնային տնտեսության արդյունավետ կառավարման սկզբունքի դրսևորումներից էր, ըստ որի՝ անհատը, հասարակությունն ու պետությունը համագործակցում են այնպես, որ նախատեսվող փոփոխությունները նպաստավոր լինեն ինչպես հասարակության, այնպես էլ բնության համար, քանի որ վերջինից է

կախված հասարակության բարեկեցությունը: Այս մոտեցումը կանխարգելման սկզբունքին հաղորդեց նախատեսվող գործունեությունն ի սկզբանե ծրագրելու ուրակ՝ հետագա քաղաքական և սոցիալական նախաձեռնությունները հատուկ նպատակի ուղղորդելու համար¹:

1972թ. Ստոկհոլմի կոնֆերանսի 6-րդ սկզբունքը դեռևս վերարտադրում էր բնության հարմարվողականության սկզբունքի պահանջները. «Թունավոր նյութերի և ջերմության արտանետումներն այն ծավալով կամ խտությամբ, որը կգերազանցի շրջակա միջավայրի՝ այդ նյութերը վնասագերծելու կարողությունը, պետք է դադարեցվի, այն առումով, որ էկոհամակարգին ծանր կամ չվերականգնվող վնաս չպատճառվի»:

Արդեն 20-րդ դարի 80-ական թվականներից սկզբունքն ընդգրկվեց միջազգային պայմանագրերում և նկատելի դեր սկսեց խաղալ միջազգային էկոլոգիական իրավունքում: Այս ենթատեքստում կանխարգելման սկզբունքն ընկալվում էր որպես ինքնիշխան պետությունների՝ սեփական անգործությունն արդարացնելը բացառելու միջոց, այն դեպքերում, երբ չկան հնարավոր վնասի առաջացման լիարժեք ապացույցներ: Սկզբունքն այս բովանդակությամբ ընդգրկվեց 1987թ. ՅուՆԵՍԿ-ի ծովի պաշտպանության երկրորդ միջազգային վեհաժողովի նախարարական հռչակագրում, ինչպես նաև Օզոնային շերտը քայքայող նյութերի վերաբերյալ Մոնրեալի արձանագրությունում²: Ավելի վաղ սկզբունքն ամրագրվել էր նաև 1982թ. ՄԱԿ-ի Գերագույն Ասամբլեայի ընդունած Բնության համաշխարհային խարտիայի 11-րդ սկզբունքում, որի համաձայն.

«Այն գործողությունները, որոնք կարող են ազդել շրջակա միջավայրի վրա, ենթակա են կարգավորման՝ կիրառելով էկոլոգիական ռիսկը կամ այլ բացասական հետևանքները նվազեցնող հասանելի լավագույն տեխնոլոգիաները, մասնավորապես.

ա) պետք է խուսափել այն գործողություններից, որոնք կարող են չվերականգն-

վող վնաս պատճառել բնությանը,

բ) շրջակա միջավայրին նշանակալից վտանգ սպառնացող գործողություններին պետք է նախորդի մանրամասն ուսումնասիրություն. նման գործողություններ նախաձեռնողները պարտավոր են հիմնավորել, որ նախատեսվող գործունեությունից ստացվող եկամուտներն արդարացնում են շրջակա միջավայրին պատճառվող վնասը, իսկ այն դեպքերում, երբ պոտենցիալ վնասակար հետևանքներն ամբողջությամբ պարզված չեն, գործունեությունը ենթակա է դադարեցման,

գ) շրջակա միջավայրի վրա ազդող որոշումներին պետք է նախորդի որոշման հետևանքների ուսումնասիրությունը, և զարգացման ծրագրերի էկոլոգիական փորձաքննությունը պետք է կազմակերպվի որոշման կայացումից բավարար ժամանակ առաջ: Այն դեպքերում, երբ նախատեսվող որոշումը կարող է բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա, նախատեսվող որոշումը պետք է բովանդակի դրա բացասական հետևանքները մեղմելու լուծումներ»:

Ռիոյի հռչակագրի 15-րդ կետը հստակ նախատեսեց կանխարգելման սկզբունքը. «Շրջակա միջավայրը պահպանելիս պետությունները իրենց հնարավորություններին համապատասխան լայնորեն կկիրառեն կանխարգելիչ մոտեցումը: Այն դեպքերում, երբ առկա է լուրջ կամ չվերականգնվող վնաս պատճառելու սպառնալիք, լիարժեք գիտական որոշակիության բացակայությունը չպետք է դիտվի որպես շրջակա միջավայրի վիճակի բարելավմանն ուղղված ծախսային առումով արդյունավետ միջոցների կիրառումը հետաձգելու պատճառ»:

Սկզբունքն ամրագրվել է նաև միջազգային էկոլոգիական իրավունքի այնպիսի հիմնարար աղբյուրներում, ինչպիսիք են Կենսաբանական բազմազանության մասին և Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիաները: Այսպիսով, կանխարգելման սկզբունքն աստիճանաբար ձևավորվեց որպես միջազգային իրավունքի «մեղմ» սկզբունք, որը առավելապես դիտարկվում

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

եր Ռիոյի հռչակագրի ընդունման հետ միաժամանակ հաստատված «21-րդ դարի օրակարգի» (Agenda 21) «Think globally-act locally» մոտեցման ենթատեքստում: Այսպես աստիճանաբար սկզբունքը սկսեց ընկալվել որպես շրջակա միջավայրի պահպանության հարցերում առավել նախագուշակական վարքագիծ դրսևորելու պահանջ և ամրագրվեց Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագրի 174(2) հոդվածում՝ միաժամանակ նախատեսվելով նաև մի շարք երկրների ներպետական օրենսդրությամբ³:

Կանխարգելման սկզբունքը ենթադրում է միանգամայն նոր և թերևս տրամագծորեն հակառակ մոտեցում՝ մինչ այդ էկոլոգիական իրավունքում գերիշխող բնության հարմարվողականության պոստենցիալի մոտեցմանը: Այն կիրառվում էր հիմնականում ջրերի և մթնոլորտում օդի իրավական պահպանության հարաբերություններում և հիմնված էր հետևյալ պնդումների վրա.

ա) որոշակի ծավալով վնասակար նյութերի տեղադրումը չի կարող վնասակար ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա,

բ) յուրաքանչյուր միջավայր ունի վնասակար ազդեցությունները կլանելու որոշակի պոտենցիալ,

գ) այդ ենթակա է չափման և կարող է կիրառվել շրջակա միջավայրի վրա ազդող գործունեության նկատմամբ⁴:

Այս մոտեցման համաձայն՝ հնարավոր է գիտականորեն մշակել շրջակա միջավայրի վատթարացման սահմանային թույլատրելի վիճակը ապահովող տեսական մոդելներ, որոնք այնուհետև կարող են ամրագրվել իրավունքի նորմերով: Մինևույն ժամանակ, համապատասխան տեխնիկական փորձաքննություն անցկացնելով հնարավոր է դառնում բացահայտել էկոլոգիական վնասի իրական հնարավորությունը և միջոցներ ձեռնարկել այն կանխելու համար: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ նման կերպ հնարավոր է լինում

զգալի միջոցներ տնտեսել և դրանք կիրառել միայն այն դեպքերում, երբ առկա է վնասի ապացույց, և չզոհել դրանք հանուն անորոշ ապագայի ծրագրերի⁵:

Կանխարգելման սկզբունքը միջազգային իրավունքում ձևավորվեց բնության հարմարվողականության պոստենցիալի մոտեցման հիման վրա ձևավորված էկոլոգիական քաղաքականության ոչ բավարարար դրոնավետության պատճառով: Կանխարգելման սկզբունքը ստիպում է զգուշավորություն ցուցաբերել որոշումներ կայացնելիս, այն դեպքերում, երբ նախատեսվող գործունեության հետևանքները լիովին պարզաբանված չեն: Առանց նման մոտեցման հնարավոր է, որ շրջակա միջավայրին պատճառվի չվերականգնվող վնաս, նախքան գիտականորեն հնարավոր կլինի պարզել նախատեսվող գործունեության ճշգրիտ հետևանքները: Բնական էկոլոգիական տատանումների շնորհիվ բնության հարմարվողականության պոստենցիալը չի կարող հաստատուն մնալ: Բնության փոփոխականությունը և անկանխատեսելիությունը խիստ դժվարացնում են նախատեսվող գործունեության արդյունքների ճշգրիտ կանխատեսումը՝ հատկապես հաշվի առնելով կուտակային և սիներգետիկ ազդեցությունները: Այսպիսով, կանխարգելման սկզբունքը ենթադրում է, որ շրջակա միջավայրին պետք է թողնել մանևրելու տարածք, և որ շրջակա միջավայրի հարմարվողականության պոստենցիալը ոչ թե պետք է խախտել, այլև նույնիսկ հեռու մնալ դրա սահմանագծից⁶:

Կանխարգելման սկզբունքի ճշգրիտ և համապարփակ բնորոշում տալը բավականին դժվար է: Այն դեռևս ամբողջությամբ չի մարմնավորվել անզամ գարգացած էկոլոգիական օրենսդրություն ունեցող երկրներում, ուստի դրա էությունը առավել հաճախ արտահայտվում է սկզբունքի պահանջներից բխող հետևյալ չափանիշներով.

1. Պետք է միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրին սպառնացող չվերականգնվող վնասը կանխելու կամ այլ բացասական հետևանքները մեղմելու հա-

մար, եթե գիտականորեն հնարավոր չէ կանխորոշել հնարավոր բացասական հետևանքների և նախատեսվող գործունեության միջև անմիջական պատճառական կապը:

Չափանիշը նեղ իմաստով, ենթադրում է արգելել շրջակա միջավայրի վրա բացասաբար ազդող ցանկացած գործողություն: Սակայն հաշվի առնելով այն, որ գործնականում դա անհրազորօճելի է, սկզբունքի պահանջները հանգում են խելամտորեն հնարավոր բացասական հետևանքները հավանական համարելուն և դրանց վերացման/մեղմման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելուն:

2. *Նախաձեռնողներն իրենք են պարտավոր ապացուցել, որ նախատեսվող գործունեությունը շրջակա միջավայրին չվերականգնվող վնաս չի պատճառելու կամ չի առաջացնելու էական այլ բացասական հետևանքներ:*

Էկոլոգիական վնասը բացառելու ապացուցման պարտականությունը դրվում է գործունեությունը նախաձեռնողների վրա, ինչը կարևոր իրավաբանական նշանակություն ունի շրջակա միջավայրին պատճառված վնասի հետ կապված դատավարություններում:

3. *Նախատեսվող գործունեության արդյունքները վերլուծելու ընթացքում չվերականգնվող վնասի կամ բացասական հետևանքների առաջացման հավանականությունն ուսումնասիրելիս հնարավոր սխալները պետք է մեկնաբանվեն ի շահ շրջակա միջավայրի պահպանության:*

Էկոլոգիական ռիսկն ի շահ շրջակա միջավայրի մեկնաբանելը ենթադրում է գործնական միջոցառումների ձեռնարկում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության պոտենցիալ բացասական հետևանքները մեղմելու ուղղությամբ: Այսպես, էկոլոգիական ռիսկն ի շահ շրջակա միջավայրի կշռելու արդյունքը կարող է արտահայտվել էկոլոգիական բուֆերային գոտիներ ստեղծելով կամ տվյալ տարածքի համար հատուկ՝ ավելի խիստ բնապահպանական նորմատիվներ սահմանելով:

4. *Շրջակա միջավայրին վտանգ սպառ-*

նացող որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է պահանջել վնասների հատուցումն ապահովող երաշխիքների, ապահովագրության և այլ ֆինանսական գործիքների կիրառություն:

Շրջակա միջավայրին պատճառված ապահովագրությունը ունի նախականիչ բնույթ, քանի որ ապահովում է բավարար ֆինանսական միջոցների առկայություն, այն դեպքերում, երբ վնասի պատճառման հավանականությունը դժվար է գնահատել: Այդուհանդերձ, ապահովագրությունը կանխարգելիչ բնույթ ձեռք է բերում միայն այն ժամանակ, երբ շահառուն պատասխանատու է համարվում էկոլոգիական վնասի համար: Գրականության մեջ առաջարկվում են տեսակետներ, որ առավել նպատակահարմար է ֆինանսական գործիքներ կիրառել ապագայում պատճառվելիք վնասի համար⁷: Այսպես, առաջարկվում է շրջակա միջավայրի վրա ազդող գործունեություն նախաձեռնողին ստիպել դեպոզիտ գումարներ վճարել կամ բանկային երաշխիքներ ներկայացնել ապագայում հավանական վնասի համար, այնքան ժամանակ, քանի դեռ վերջիններս չեն ապացուցել, որ վնասի պատճառումը բացառված է⁸:

5. *Շրջակա միջավայրին վնաս պատճառելու դեպքում անհրաժեշտ է սահմանել առավել խիստ և համապարտ պատասխանատվության սկզբունք:*

Պատասխանատվության խստացված չափը նպաստում է էկոլոգիական իրավախախտումների կանխարգելմանը՝ հասարակության անդամների մեջ ձևավորելով կանխարգելիչ վարքագիծ: Միևնույն ժամանակ, էկոլոգիական վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց նկատմամբ համապարտ պատասխանատվության սահմանումը վնաս պատճառելու պատասխանատվությունը դնում է դրա համար պատասխանատու բոլոր անձանց վրա՝ ոչ մի պատասխանատու անձի թույլ չտալով խուսափելու պատասխանատվությունից՝ հիմնվելով վնասի և տվյալ անձի գործողությունների միջև ոչ միանշանակ պատճառական կապի վրա:

Այդուհանդերձ, սկզբունքի բնույթը մի

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

շարք տարակարծությունների և սկզբունքային անհամաձայնությունների տեղիք է տվել: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ կանխարգելման սկզբունքի գործնական կիրառմամբ հանրային իշխանությունների վրա անհամաչափ բարձր ծախսեր կդրվեն⁹: Մյուսների կարծիքով, կանխարգելման սկզբունքը ոչ թե սխալ է, այլ արգելում է բոլոր տեսակի գործողությունները, ներառյալ՝ անգործությունը: Սկզբունքն իրականում հիմնված է մարդկանց վարքագծում իշխող այն մոտեցման վրա, համաձայն որի՝ մարդկանց համար ընդունելի չէ թեկուզև չնչին ռիսկի ենթարկել ապագայում սպասվելիք մեծ եկամուտը: Այսպես, 20 դոլար միանշանակ կորցնելու և 2000 դոլար կորցնելու մեկ տոկոսանոց հավանականության միջև ընտրություն կատարելիս միջին քաղաքացիներն առավել հակված կլինեն ընտրելու 20 դո-

լարի կորուստը: Այնինչ նման կենցաղային մոտեցումը չի կարող դրվել շրջակա միջավայրի պահպանության պետական քաղաքականության հիմքում, քանի որ նման կարգի կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելը հաճախ կարող է առհասարակ անհիմաստ դարձնել ցանկացած գործունեություն, որն ազդում է շրջակա միջավայրի վրա¹⁰:

Ամփոփելով կարելի է նշել, որ սկզբունքը հիմնականում հանդես է գալիս որպես շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումներ կայացնելու ուղեմիջ, և էկոլոգիական հարաբերությունների ամբողջ համակարգի նկատմամբ դրա միատեսակ կիրառումը թերևս անհնար է: Այն պետք է հաշվի առնել առանձին էկոլոգիական որոշումներ կայացնելիս՝ աչքի առաջ ունենալով հնարավոր բացասական հետևանքները վերացնելու տարբերակներ, այլ ոչ թե բացարձակեցնել դրա նշանակությունը և արգելել ցանկացած գործունեություն, որի հետևանքները գիտականորեն լիովին ապացուցված չեն:

¹ Տե՛ս Interpreting the Precautionary Principle. Edited by T.O’Riordan & J.Kameron, London, 1994, p.16.

² Տե՛ս Implementing the Precautionary Principle.Perspectives and Prospect. Edited by Elizabeth Fisher, Judith Jones, Rene von Schomberg. Edvard Elgar Publishing Inc., p. 3.

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Տե՛ս IMO/FAO/Unesco/WMO/IAEA/UN/UNEP Joint group of experts on the scientific aspects of marine pollution.

⁵ Տե՛ս Ellen Hey, The Precautionary Principle Concept in Environmental Policy and Law: Institutionalising Caution, 4 GEO. INT’L ENVTL. L. REV. 303, 308 (1992).

⁶ Տե՛ս C.Barton, The Status of the Precautionary Principle in Australia: Its Emergence in Legislation and as Common Law Doctrine. 22

Harvard Environmental Law Review, 509.

⁷ Տե՛ս Interpreting the Precautionary Principle. Edited by T.O’Riordan & J.Kameron, London, 1994.

⁸ Երրորդ անձանց պատճառով վնասի համար պատասխանատվության ռիսկն ապահովագրելն ունի բավականին արդյունավետ կանխարգելիչ նշանակություն և ամրագրված է նաև ՀՀ օրեսդրության այլ ճյուղերում (տե՛ս, օրինակ՝ “Սնանկության մասին” ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը):

⁹ Տե՛ս Ellen Hey, The Precautionary Principle Concept in Environmental Policy and Law: Institutionalising Caution, 4 GEO. INT’L ENVTL. L. REV. 303, 308 (1992).

¹⁰ Տե՛ս Cass R.Sunstein, Beyond the Precautionary Principle. University of Pennsylvania Law Review. Vol. 151, p. 1003.

Вардан Бежанян

Кандидат юридических наук

Принцип предосторожности в экологическом праве

Среди последних событий в международном экологическом праве значимое место занимает принцип предосторожности. Принимая во внимание зачастую непрогнозируемое влияние определенной деятельности на окружающую среду, принцип предусматривает предосторожность в тех случаях, когда отсутствуют четкие научные доказательства о сущности последствий этой деятельности.

В статье рассматривается развитие принципа предосторожности в международном праве, изучаются высказанные в юридической науке мнения о принципе. Далее рассматриваются сущность и содержание принципа ассимилятивных возможностей природы. Последний сравнивается с принципом предосторожности в целях выявления основных различий между ними.

На основании анализа формирования принципа предосторожности в международном праве, его критицизма, а также сопоставления с принципом ассимилятивных возможностей, автор делает попытку дать оценку главным положениям принципа в свете эффективности правовой защиты окружающей среды.

Vardan Bejanyan

Candidate of Legal science

The principle of prevention in the ecological law

Within the latest developments of International Environmental Law remarkable place belongs to precautionary principle. Taking into consideration often unpredictable impact of proposed activities to the environment, precautionary principle requires erring on the side of caution, when there is no definite scientific evidence about the consequences of proposed activities.

The article first goes into the development of precautionary principle in international law, examines its conceptions in legal science. Then the nature and content of assimilative capacity approach are examined and precautionary principle is compared with the latter in order to highlight substantial differences of these approaches.

On the basis of analysis of formation of precautionary principle in international law, its comparison with assimilative capacity approach as well as criticism, the author tries to evaluate main implications of the principle in the light of environment protection efficiency.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Չրաչիկ ԶԻԼԱՎՅԱՆ

Իրավաբան

Ինչպես հայտնի է, քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին պատճառված վնասի համար հատուցման կարևորագույն պայման է մեղքի առկայությունը, և այն դեպքերում, երբ վնաս պատճառողը կապացուցի, որ վնասի պատճառման մեջ իր մեղքը բացակայում է, ապա նա կազատվի քաղաքացիաիրավական պատասխանատվությունից:

Սա այն է, ինչ վերաբերում ընդհանուր կանոնին: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը¹ նշված սկզբունքից արել է հետևյալ բացառությունները. հնարավոր են դեպքեր, երբ սուբյեկտը կարող է պատասխանատվություն կրել նաև իրավաչափ գործողությունների² և շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ հասցված վնասի համար³:

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն նախատեսված էր նաև Հայաստանի 1923թ. և 1964 թ. քաղաքացիական օրենսգրքերով: Սակայն ՀՀ 1998 թ. Քաղ. օր.-ում այդ հարցը կարգավորվում է առավել մանրամասն: Ըստ որում, եթե նախկինում այն անվանվում էր «պատասխանատվություն առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար», ապա Քաղ. օր.-ի 1072 հոդվածում այն անվանվում է «պատասխանատվությունը շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի համար»⁴: Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման հետ կապված հարա-

բերությունները կարգավորելու համար, կարծում ենք, պետք է բացահայտել առավել վտանգի աղբյուր հասկացությունը, որը սահմանված չէ քաղաքացիական օրենսդրության մեջ: Գրականության մեջ տարբեր հեղինակներ հանդես են եկել առավել վտանգի աղբյուրի տարբեր ձևակերպումներով, որոնք ընդհանուր առմամբ հանգում էին այն եզրակացության, որ առավել վտանգի աղբյուրը իրենից ներկայացնում է որոշակի տեսակի գործունեություն, որը շրջապատի համար առավել վտանգ է ստեղծում:

Իրավաբանական գրականությունը առավել վտանգի աղբյուրի միասնական սահմանման հարցի վերաբերյալ առաջ է քաշել երեք տեսակետ.

1. առավել վտանգի աղբյուրը որակվում է որպես գործունեություն⁵,
2. առավել վտանգի աղբյուր համարվում են այն իրերի հատկանիշները կամ բնության ուժերը, որոնք, գիտության և տեխնիկայի զարգացման աստիճանի հասնելով, չեն ենթարկվում մարդու լիակատար հսկողության, ստեղծում են մարդու կյանքին և առողջությանը կամ նյութական բարիքներին վնաս պատճառելու բարձր աստիճանի հնարավորություն⁶,
3. առավել վտանգի աղբյուրի տակ հասկացվում են առարկաներ, իրեր, սարքավորումներ, որոնք շահագործման ընթացքի մեջ են և դրա հետ մեկտեղ ստեղծում են վտանգ շրջապատի համար⁷:

Տրված սահմանումները հանգամանորեն ներկայացնում է Օ.Ա. Կրասավչիկովը: Վերջինս, առավել վտանգի աղբյուր ասելով, հասկանում է նյութական աշխարհի իրերը (առավելապես գործիքները, արտաղ-

րության միջոցները և այլն, որոնք ունեն սպեցիֆիկ՝ քիմիական, ֆիզիկական, բիոլոգիական և այլ որակներ), որոնք օժտված են հատուկ որակական և քանակական հատկանիշներով, որոնց ուժով նրանց տիրապետումը (օգտագործումը, պահելը, փոխադրելը և այլն) ժամանակի և տարածության որոշակի պայմաններում կապված է առավել վտանգավորությամբ շրջապատի համար⁹: Համանման կարծիք արտահայտել է Ա.Ա. Սոբչակը, որը գտնում է, որ առավել վտանգի աղբյուրը բարդ նյութական օբյեկտներն են, որոնց առավել վնասակարությունը արտահայտվում է մարդու կանքից անկախ, որը առաջացնում է անվերահսկելիություն գործունեության ամբողջ ընթացքում, իսկ դա նախ ստեղծում է անզուգուշությամբ վնաս պատճառելու վտանգ և երկրորդ՝ ազդում է պատճառման ծավալի և բնույթի վրա¹⁰: Է. Աբաշինը նշում է, որ առավել վտանգի աղբյուրի տիրապետողի հասկացության տակ պետք է հասկանալ այն քաղաքացուն կամ իրավաբանական անձին, որը իրականացնում է առավել վտանգի աղբյուրի օգտագործումը իրեն պատկանող սեփականության իրավունքի, տնտեսական շահագործման, օպերատիվ կառավարման, վարձակալության պայմանագրի, լիազորագրի, իրավասու մարմնի հրամանի կամ կարգադրության հիման վրա¹¹:

Հիմք ընդունելով վերը նշված իրավաբանների տեսակետները՝ կարող ենք հանգել եզրակացության, որ իրավաբանական գրականության մեջ դեռևս տրված չէ առավել վտանգի աղբյուրի միասնական բնորոշումը:

Այնուամենայնիվ, ի մի բերելով քաղաքացիաիրավական գրականության մեջ առավել վտանգի աղբյուրի վերաբերյալ արտահայտված այս տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ առավել վտանգի աղբյուր կամ այդպիսի աղբյուրի իրեր են հանդիսանում նյութական աշխարհի այն իրերը, որոնք, ունենալով մեխանիկական, քիմիական, բիոլոգիական և այլ առանձնա-

հատկություններ, որոշ դեպքերում չեն ենթարկվում մարդու լիարժեք կառավարմանը, և իրենց շահագործման ընթացքում բարձրանում է շրջապատողներին հասցվելիք վնասի հնարավորությունը: Ուստի և օրենսդիրը սահմանում է, որ այս իրերը, շրջապատի համար մեծ վտանգավորություն ներկայացնելով, պարտադրում են, որ դրանց տիրապետողը պատասխանատվություն կրի իր մեղքից անկախ, քանի որ առավել վտանգի աղբյուրը տիրապետողը պետք է գիտակցի, որ այդ իրերը ամեն բոլոր կարող են դուրս գալ իր հսկողությունից, ուստի և ինքը պատասխանատու է այդ դեպքում հասցված վնասի համար¹²:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ վիճակում պետք է գտնվեն իրերը, սարքավորումները, որպեսզի դրանք հանդես գան որպես առավել վտանգի աղբյուրներ: Որպես առավել վտանգի աղբյուր պետք է ընդունել այն իրերը, սարքավորումները, որոնք գտնվում են շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում առաջացնում են առավել վտանգավորություն շրջապատի համար: Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր իրերն են իրենց առավել վտանգը դրսևորում շահագործման ընթացքում. օրինակ՝ քիմիական պայթուցիկ նյութերը վտանգավոր են նաև այն ժամանակ, երբ նրանք գտնվում են իրենց տարաներում և այդ պահին ակտիվորեն չեն օգտագործվում: Իսկ ահա կան նաև այնպիսի իրեր, որոնք դառնում են առավել վտանգի աղբյուր միայն ակտիվ օգտագործման դեպքում, օրինակ՝ ավտոմեքենա: Ավտոմեքենան չի կարող համարվել առավել վտանգի աղբյուր, եթե այն կանգնած վիճակում է, ուստի չենք կարող պատասխանատվության ենթարկել ավտոմեքենայի վարորդին, եթե անչափահասը պատահաբար դիպել է կայանած մեքենային և վնասվել: Չնայած այն հանգամանքին, որ շրջապատին կարելի է վնաս հասցնել ցանկացած մեխանիկական առարկայով, առավել վտանգի աղբյուրի դեպքում օրենսդիրը կարևորում է այն հանգաման-

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

քը, որ այդ աղբյուրը կարող է վնասել շրջապատին նաև այն դեպքում, երբ խստորեն պահպանվում են դրա շահագործման անվտանգության կանոնները:

Որպեսզի առարկան դիտվի որպես առավել վտանգի աղբյուր, նախ և առաջ կարևոր է վերջինիս մեջ վնասաբեր հատկությունների առկայությունը:

Վնասակարությունը և մարդու կողմից անվերահսկելիությունը, որի հետևանքով առարկաները շրջապատի համար առավել վտանգ են ստեղծում, մշակվել են կյանքի պրակտիկայի հիման վրա: Թ.Բ. Մալցմանը դրանք թվին է դասում այն առարկաները, որոնք, վերահսկողությունից դուրս գալով, դժվար են կրկին ենթարկվում վերահսկողության կամ ընդհանրապես չեն ենթարկվում: Լինելով այդպիսին՝ դրանք անխուսափելիորեն պատճառում են վնաս ինչ-որ մեկի կամ ինչ-որ առարկայի հետ բախվելիս¹²: Վնասակարությունը և անվերահսկելիությունը պետք է դիտարկել միասնության մեջ: Եվ գործունեության տեսության թերի կողմն այն է, որ գործունեությունը չի կարող լինել անվերահսկելի¹³: Այն ձևավորվում է մարդու կամային գործողություններից: Վնասակարության հատկանիշի բացակայությունը ընդհանրապես բացառում է առավել վտանգի մասին խնդիրը:

Խոսելով առավել վտանգի աղբյուրների դասակարգման մասին՝ անհրաժեշտ է նախ պարզաբանել, թե գործունեության որ տեսակներն են մտնում առավել վտանգի աղբյուրների դասակարգման մեջ:

ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածում ամրագրված է, որ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում,

չինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Օրենքից երևում է, որ առավել վտանգի աղբյուրների սպառիչ ցանկը սահմանված չէ, որը դատարաններին հնարավորություն է տվել անհրաժեշտության դեպքում ընդլայնել այդ ցանկը:

Ի հավաստումն վերը նշվածի՝ անհրաժեշտ ենք համարում վերլուծել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2009 թ. հունիսի 4-ի թիվ ՀՔԴ2/0044/02/08 գործի նյութերը: Դատարանը գործի ուսումնասիրության ժամանակ հաստատված է համարել այն փաստը, որ վարորդ Հասսան Ահմադ Ասխար Ջադե Ալմադարիի կողմից ճեկ-ի պահանջներին հակասող երթևեկություն իրականացնելու արդյունքում տեղի է ունեցել ավտոպթար, որից հետո ավտոցիստեռնի ծածկոցները բացվելու հետևանքով «կաուստիկ» տեսակի սոդան թափվել է Դարբ գետակի և Արփա գետի ջրերի մեջ՝ դառնալով կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացման պատճառ: Ավտոցիստեռը տեղափոխել է 23.600 կգ լվացող հեղուկ /սոդա/, որն ամբողջությամբ լցվել է գետը, որի հիման վրա դատարանը որոշել է, որ պատասխանողի կողմից բնությանը հասցվել է վնաս, և նման հետևության հանգել է այն պատճառաբանությամբ, որ սույն գործով առկա ապացույցների բազմակողմանի վերլուծության արդյունքում հաստատվել են արարքի առկայությունը (.....), վնասը(...), պատճառական կապը արարքի և վնասի միջև (...): Ինչ վերաբերում է Պատասխանողի մեղքին, ապա վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում առկա է առավել վտանգի աղբյուրով (տրանսպորտային միջոցով) պատճառված վնաս, հետևաբար պատասխանատվությունը վրա է հասնում անկախ մեղքից¹⁴:

Ելնելով վերը շարադրվածից՝ հանգում ենք այն եզրակացության, որ դատարանը տվյալ գործով առավել վտանգի աղբյուր է դիտել տրանսպորտային միջոցը, սակայն գտնում ենք, որ տվյալ պարագայում կենդանական աշխարհին պատճառված վնասը ուղղակի և անհրաժեշտ պատճառական կապի մեջ է գտնվում «կառուտիկ» տեսակի սողայի հետ, իսկ վերջինս էլ պատճառական կապի մեջ է գտնվում տրանսպորտային միջոցի հետ: Տվյալ դեպքում կարծում ենք, որ դատարանը տրանսպորտային միջոցը որպես առավել վտանգի աղբյուր դիտելուց բացի՝ պետք է նաև առավել վտանգի աղբյուր դիտեր «կառուտիկ» տեսակի սողան, և վերջինս կարող է համարվել առավել վտանգի աղբյուր: Սա կարող է հիմնավորվել հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտը ՓԲԸ-ն «կառուտիկ» տեսակի սողան համարում է ոչ միայն վնասակար նյութ¹⁶, այլև սահմանում է վերջինիս օգտակարության և վնասակարության չափաբաժինները (թուլլատրելի կոնցենտրացիան կազմում է 1 մետր խորանարդում 0.5 մլգ)¹⁶: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն օգտագործում են արհեստական թելի արտադրության, թղթի և տեքստիլ արդյունաբերության, ապակու և օճառի ստացման համար: Գործարաններում օգտագործում են յուղոտված և կեղտոտված դետալները մաքրելու, ներկման ժամանակ ջուրը փափկեցնելու համար և այլն¹⁷: Ոստի կարծում ենք, որ դատարանը ուներ հնարավորություն քաղ. օր.-ի 1072 հոդվածով սահմանված ցանկը ընդլայնելու և որպես առավել վտանգի աղբյուր դիտելու «կառուտիկ» տեսակի սողան:

Պետք է նշել, որ կապված տեխնիկայի և գիտության զարգացման հետ՝ անհնար է միանշանակ տալ առավել վտանգի աղբյուրների դասակարգումը. յուրքանչյուր ժամանակաշրջան դրանց մեջ կարող է ավելացնել նորերը: Միևնույն առարկան կամ իրը տարբեր իրավիճակներում կարող է դիտվել և՛ որպես առավել վտանգի աղբ-

յուր, և՛ ոչ (օրինակ՝ ավտոմեքենան)¹⁸:

Երկար ժամանակ վեճեր էին առաջանում իրավաբան գիտնականների միջև, կապված նրա հետ, թե արդյոք կա առավել վտանգի աղբյուրի սպառիչ ցանկ, թե ոչ, իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Սպառիչ ցանկի սահմանման կողմնակից էր Մ. Մ. Ազարկովը¹⁹: Բ.Ս. Անտիմոնովը գրում էր. «Առավել վտանգի աղբյուրի թվարկումը պետք է լինի սպառիչ, քանի որ առկա է հատուկ նորմ, որը առանձնացնում է հատուկ պատասխանատվության ռեժիմ պատասխանատվության ընդհանուր կանոններից»²⁰:

Պետք է համաձայնել Ե. Ա. Ֆլեյշիցի տեսակետին, որը ոչ սպառիչ ցանկի սահմանման կողմնակից էր՝ պայմանավորելով այն գիտության և տեխնիկայի մեջ նորանոր սարքավորումների ի հայտ գալով, որոնք էլ հենց առավել վտանգի աղբյուր են²¹:

Այս մոտեցումը թերևս ունի իր տրամաբանական հիմնավորումը, քանի որ օրենքով առավել վտանգի աղբյուրների տեսակների սահմանումը առաջ կբերի որոշակի դժվարություններ. մասնավորապես, ժամանակակից գիտության զարգացման պայմաններում առավել վտանգի աղբյուրների թիվը ենթակա է անընդհատ փոփոխման, և ուստի օրենսդիր մարմինները պարտադրված կլինեն ամեն անգամ փոփոխել օրենսգիրքը:

Այնուամենայնիվ, առավել վտանգի աղբյուրների ոչ սպառիչ ցանկի նախատեսումը նույնպես ընդունելի կարելի է համարել, քանի որ այն ընդհանուր պատկերացում կարող է տալ առավել վտանգի աղբյուրների մասին: Հետաքրքիր դասակարգում է իրականացնում Օ.Ա. Կրասավչիկովը: Նախ և առաջ նա գործունեության առավել վտանգի աղբյուրները բաժանում է հետևյալ խմբերի.

- ա) ֆիզիկական,
- բ) ֆիզիկաքիմիական,
- գ) քիմիական,
- դ) կենսաբանական:

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Այնուհետև վերը նշված խմբերը բաժանում է ենթախմբերի: Այսպես՝ ֆիզիկական խմբի մեջ պետք է մտնեն մեխանիկական, էլեկտրական և ջերմային ենթախմբեր, ֆիզիկաքիմիականի մեջ՝ ռադիոակտիվ ենթախումբը, քիմիականի մեջ՝ թունավոր, պայթուցիկ ու դյուրավառ նյութերի ենթախմբեր, և կենսաբանականի մեջ՝ կենսաբանական ու միկրոկենսաբանական ենթախմբերը²²:

Ս.Կ. Շիշկինը վերը նշված չորս խմբերին ավելացնում է նաև հինգերորդը՝ կենսաքիմիականը, որի մեջ են ընդգրկված առաջին և երկրորդ կարգի վտանգավորության պեստիցիդները²³:

Պեստիցիդները կազմում են քիմիական և կենսաբանական միացությունների խումբ, որը կիրառվում է բույսերի և կենդանիների հիվանդությունների, մոլախոտային բուսականության, գյուղատնտեսական մթերքների վնասատուների դեմ պայքարելու համար: Պեստիցիդների առանձնահատկությունները, պոտենցիալ վտանգով կանխորոշված, մարդու կյանքի և շրջապատի համար հանդիսանում են՝ կենսաբանական բարձր ակտիվությունը ազդեցության ցածր մակարդակի պարագայում, շրջակա միջավայրում շրջապտույտի ընդունակությունը և դրանց հետ բնակչության շփման հնարավորությունը:

ԽՍՀՄ Քաղ. օր.-ում առավել վտանգի աղբյուրների թվին էին դասված նաև վայրի կենդանիները, որին դեմ էր Ն. Ի. Կոնյակը: Նա գտնում է, որ ինչպես ընտանի, այնպես էլ վայրի կենդանիները պետք է պահվեն հատուկ պայմաններում, որը կբացառի նրանց կողմից վնաս պատճառելը, իսկ վնաս եթե դա պատահի, ապա այն արդեն սեփականատիրոջ կողմից համապատասխան վերահսկողության բացակայության արդյունք է: Նաև, հեղինակի կարծիքով, վայրի կենդանիների վտանգավորությունը չի կարելի գնահատել նրանց չափսերով և

կատաղության առկայությամբ, քանի որ այդ հատկանիշները բնորոշ են նաև որոշ ընտանի կենդանիների²⁴: Չհամաձայնելով Կոնյակի հետ՝ մենք գտնում ենք, որ վայրի և ընտանի կենդանիների վտանգավորությունը համեմատման ենթակա չէ:

Գործող ՀՀ Քաղ. օր.-ը առավել վտանգի աղբյուրների դասակարգման թվում չի նշում, որ պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդիսանալ վայրի կենդանիներ պահողները: Սակայն սրանից չի հետևում, որ վայրի կենդանիները դադարել են առավել վտանգի աղբյուր հանդիսանալ, իսկ նրանց տիրապետողները՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության սուբյեկտներ:

Քաղ. օր.-ի 1071² հոդվածը սահմանում է, որ կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը, բացառությամբ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանու կողմից պատճառված վնասի, որի դեպքում վնասի հատուցման պարտականությունը կրում է կենդանուն տիրապետողը կամ օգտագործողը կամ խնամողը, եթե այլ բան նախատեսված չէ կենդանու սեփականատիրոջ և կենդանու օգտագործման, տիրապետման իրավունք ունեցող կամ խնամք իրականացնող անձի միջև կնքված պայմանագրով:

Վերը նշված հոդվածի բովանդակությունից պարզ երևում է, որ կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը, եթե անգամ ապացուցի, որ վնասը առաջացել է ոչ իր մեղքով:

Ինչպես նշվեց, հոդվածը սահմանում է նաև պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր ստանձնել են կենդանու տիրապետումը, օգտագործումը կամ խնամքը: Իսկ կենդանիներ տիրապետող, օգտագործող կարող են լինել այն անձինք, ովքեր կենդանիների սեփականատիրոջ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով իրավունք ունեն օգտվե-

լու կենդանիներից կամ ստանալու օգուտ՝ կապված կենդանիների օգտագործման հետ: Որպես խնամող կարող են հանդես գալ նրանք, ովքեր իրենց վրա են վերցրել կենդանուն հսկելու պարտականությունը (օրինակ՝ հյուրանոցի սեփականատեր, հարևան և այլն)²⁶:

Ինչպես նշված է իրավաբանական գրականության մեջ, կենդանու հասցրած վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք կարող են համարվել միայն այն դեպքերը, երբ ապացուցվում է, որ կենդանին վնաս է հասցրել պատահաբար, անհաղթահարելի ուժի հետևանքով, վնասը պատճառվել է տուժողի մեղավոր գործողությունների հետևանքով կամ էլ վնասի առաջացման պատճառ են հանդիսացել հանգամանքներ, որոնք կապ չունեն կենդանու հետ²⁶:

Այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ կենդանիները նույնպես կարող են համարվել առավել վտանգի աղբյուր:

ՀՀ Քաղ. օր.-ը առանձին հոդվածով անրադարձել է նաև անշարժ գույքով պատճառված վնասի հատուցման խնդրին, որը սահմանում է, որ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Շարունակելով հոդվածում նշվում է, որ

1071¹ հոդվածի 1-ին մասով նախատեսված վնասը հատուցելու պարտականությունը կրում է անշարժ գույքը տիրա-

պետման, կառուցապատման կամ օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման եւ այլն) իրավունք ունեցող անձը, եթե վնասը պատճառվել է այդ իրավունքով հատկացված անշարժ գույքի տիրապետման կամ օգտագործման ընթացքում, եւ եթե այլ բան նախատեսված չէ անշարժ գույքի սեփականատիրոջ եւ անշարժ գույքը տիրապետող կամ օգտագործող անձի միջեւ կնքված պայմանագրով:

1071¹ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում անշարժ գույքի սեփականատերը անշարժ գույքը տիրապետողի կամ օգտագործողի հետ կրում է համապարտ պատասխանատվություն պատճառված վնասի համար, եթե անշարժ գույքը այն տիրապետողի կամ օգտագործողի կողմից չի օգտագործվել ձեռնարկատիրական նպատակով, եւ եթե վնասը չի առաջացել անշարժ գույքը ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու հետևանքով, բացառությամբ կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի, որի դեպքում անշարժ գույքի օգտագործման, տիրապետման եւ շահագործման ընթացքում պատճառված վնասի հատուցման պարտականությունը կրում է կառուցապատողը:

1071¹ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձին պատճառված վնասը հատուցած անշարժ գույքի սեփականատերը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այն անձի նկատմամբ, որի մեղքով պատճառվել է վնասը իր կողմից տրված հատուցման չափով:

¹ Այսուհետ՝ Քաղ. օր.:

² Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1061:

³ Տե՛ս Красавчиков О.А., Возмещения вреда, причиненного источником повышенной опасности, М., 1966, էջ 5:

⁴ Տե՛ս ՀՀ Քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, Եր. 2001թ., էջ 623:

⁵ Տե՛ս Антимонов Б.С. Гражданское ответственность за вред, причиненной источником повышенной опасности, М., 1952, էջ 46:

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ⁶ Տե՛ս Ֆլեյշից Է.Ա. Обязательство из причинения вреда и из неосновательного обогащения, 1951, էջ 131
- ⁷ Տե՛ս Майданик Л. А., Сергеева Н. Ю., Материальная ответственность за повреждение здоровья, М., 1968, էջ 48:
- ⁸ Տե՛ս Красавчиков О.А., նշված աշխատությունը, էջ 29, 30:
- ⁹ Տե՛ս Собчак А.А. Гражданско-правовая ответственность за причинение вреда действием источника повышенной опасности. М., 1964, էջ 8:
- ¹⁰ Տե՛ս Абашин Эмиль, նշված աշխատությունը, М., 2000г. էջ 32:
- ¹¹ Տե՛ս Բեքմեգյան Գ. Հ., նշված աշխատությունը, Եր. 2004թ., էջ 102-103, տե՛ս նաև Բեքմեգյան Գ. Հ, Արտապայմանագրային պարտավորություններ, Երևան, 2009թ., էջեր 136-138:
- ¹² Տե՛ս Мальцман Т.Б., Ответственность за вред, причиненной источником повышенной опасности.-Канд. Дис. М., 1948, էջ 42:
- ¹³ Տե՛ս Красавчиков О.А., նշված աշխատությունը, էջ 12,13:
- ¹⁴ Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, 2009 թ. հունիսի 4, թիվ ՀՔԴԶ/0044/02/08 գործ:
- ¹⁵ Տե՛ս ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ: Сода кальцинированная, технические условия, ГОСТ 5100_85.Москва:
- ¹⁶ Տե՛ս Вредные вещества в промышленности, справочник для химиков, инженеров и врачей.Под общей редакцией засл. деят. науки проф. Н.В. Лазарева и докт. биол. наук. проф. И.Д. Гадаскиной. Ленинградское отделение, 1977г., էջեր 323-324:
- ¹⁷ Տե՛ս Պոպովա Լ.Ֆ., Լիթիումից միջև ցեզիում, Երևան, 1977թ., էջ 118:
- ¹⁸ Տե՛ս Абашин Эмиль, նշված աշխատությունը, М., 2000г. էջ 33:
- ¹⁹ Տե՛ս Агарков М.М., Обязательства из причинения вреда.–Проблемы социалистического права, 1939г., էջ 68:
- ²⁰ Տե՛ս Антимонов Б.С. Гражданское ответственность за вред, причиненной источником повышенной опасности, М., 1952, էջ 101:
- ²¹ Տե՛ս Ֆլեյշиц Է.Ա., նշված աշխատությունը, էջ 133:
- ²² Տե՛ս Красавчиков О.А., նշված աշխատությունը, էջ 44:
- ²³ Տե՛ս Шишкин С. К., Ответсвенность за вред, причиненный деятельностью создающей повышенную опасност для окружающих, М. 2003. էջ 41, 52:
- ²⁴ Տե՛ս Коняев Н. И., Обязательства, возникающие вследствие причинения вреда источником повышенной опасности.Автореф. канд. дис., М., 1966, էջ 5:
- ²⁵ Տե՛ս Բեքմեգյան Գ. Հ., նշված աշխատությունը, էջ 110-112:
- ²⁶ Տե՛ս նույն տեղը:

Грачик Джилавыан

Юрист

**Понятие и классификация
источника повышенной опас-
ности деятельности для окру-
жающих**

Работа посвящается понятию и классификации источника повышенной опасности деятельности для окружающих. Обсуждается понятие источника повышенной опасности, а также наибольшее значение придается классификации источника повышенной опасности. Работа подготовлена на основе изучения практических и теоретических материалов.

Подвергая изучению нашедшие в юридической литературе место точки зрения юристов, в работе был приведен целостный и наиболее приемлемый для нас вариант понятия источника повышенной опасности. Также была осуществлена классификация источников повышенной опасности.

Hrachik Jilavyan

Lawyer

**Concept and Classification of the
Source of Increased Hazard of
Activities for the Surroundings**

The paper is dedicated to the notion and classification of the source of Increased Hazard of activities for the surroundings. The notion of the source of Increased Hazard is discussed in the following paper, and special attention is paid to the classification of the source of Increased Hazard. It is written on a basis of the studies of practical and theoretical materials.

Studying the lawyers' viewpoints, based on the legal resources, the entire and more acceptable variant of the source of Increased Hazard has been considered in the paper. The classification of the sources of Increased Hazard has also been performed.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿՃԱՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Գոռ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Ներածություն. Ցանկացած երկրում բնապահպանական խնդիրներն առաջանում են ոչ միայն բնական, այլև իրավական, սոցիալական, մշակութային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հետևանքով:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերը հաճախ չափազանցվում են և ներկայացվում որպես համաշխարհային հանրության առջև ծառայած գրեթե անլուծելի և մարդկային հասարակությանը կործանման տանող խնդիրներ: Մեր կարծիքով նման մոտեցումներն ընդամենը շահարկումներ են, որոնց միջոցով ոչ պրոֆեսիոնալ «բնապահպանական» հանրությունը փորձում է ներգործել անիրազեկ հասարակության գիտակցության վրա՝ առօրյա կենցաղային խնդիրների լուծման նպատակով: Նման ապատեղեկատվական հոսքի պատճառահետևանքային կապից զուրկ ընդհանրացումներում կորչում է շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման իրական ուղին:

Առկա խնդիրները հնարավոր է լուծել հասարակության կառավարման համակարգի այնպիսի ձևափոխմամբ, որը հասարակական զարգացման բաղադրիչների շարքում կապահովի նաև բնապահպանականի ինտեգրված առկայությունը: Այդ ամենով հանդերձ, «բնապահպանական շարժման» 30-40-ամյա փորձը ցույց տվեց, որ համաշխարհային հանրությունը չի կարող զարգացման ներկայիս մակարդակից վերադառնալ նախկին վիճակին:

Հայաստանը ևս ԽՍՀՄ կազմում և անկախանալուց հետո մասնակցել է շրջակա միջավայրի պահպանության միջազգային գործընթացներին և քայլեր է ձեռնարկել ներպետական օրենսդրությունում շրջակա միջավայրի կառավարման համակարգի որոշ տարրերի ներդրման ուղղությամբ:

Ստորև ներկայացվող հիմնախնդիրը մեզ թույլ է տալիս որակական առումով գնահատելու ՀՀ էկոլոգիական օրենսդրության մի փոքր հատվածի ներկայիս վիճակը, դրանում ամրագրված նորմերի ընկալման խորության աստիճանը և իրավաիրացման մակարդակը:

Իրավիճակի ընդհանուր նկարագրությունը. ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի հուլիսի 18-ին որոշում է կայացրել «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի² (այսուհետ՝ Օրենք) 7-րդ և 19-րդ հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի³ 22-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ: Այս հոդվածների սահմանադրականության հարցը քննարկելիս առաջադրված խնդիրների շարքում մենք կառանձնացնենք բնօգտագործման վճարների՝ պարտադիր լինելու կամ չլինելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի վերլուծություններն ու հիմնավորումները, ուստի կշրջանցենք որոշման մեջ վեր հանված մի քանի այլ խնդիրներ:

Ըստ դիմող «Բջմի հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության՝ Օրենքի 7-րդ հոդածը հակասում է ՀՀ սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետին: Օրենքի 7 –րդ հոդվածի համաձայն՝ բնօգտագործման վճարների դրույքաչափերը սահմանում է ՀՀ Կառավարությունը: Մինչ-

դեռ, ՀՀ սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, «Բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ... ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը և վճարման կարգը»: Ըստ դիմողի՝ բնօգտագործման վճարների դրույքաչափերը, որպես պարտադիր վճարների դրույքաչափեր, պետք է սահմանվեն ոչ թե ՀՀ Կառավարության որոշմամբ, այլ օրենքով:

Պատասխանող կողմի (ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ) առարկությամբ՝ բնօգտագործման վճարը, լինելով պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման դիմաց գանձվող վճար, քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր է: Վերջինիս հիմնավորմամբ՝ պետությունը՝ որպես սեփականության իրավունքի սուբյեկտ, կարող է իրեն պատկանող գույքը (տվյալ դեպքում՝ ընդերքը) հանձնել օգտագործման: Ըստ պատասխանողի՝ նման հարաբերություններն ունեն ոչ թե հանրային-իրավական, այլ մասնավոր-իրավական բնույթ:

Բնօգտագործման վճարների պարտադիր կամ պայմանագրային լինելու վերաբերյալ վեճն առաջացել է Օրենքի 2-րդ հոդվածում «բնօգտագործման վճարներ» բնորոշման մեջ առկա *բացթողման հետևանքով*: Բնապահպանական վճարները բնորոշելիս Օրենքը սահմանում է, որ դրանք *պարտադիր վճարներ են*, մինչդեռ բնօգտագործման վճարների պարագայում այստեղ նշվում է, որ դրանք պետական բյուջե մուծվող *վճարներ են*:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման՝ Օրենքի 2-րդ հոդվածում արդեն իսկ կանխորոշված է բնօգտագործման վճարների առանձնահատուկ իրավական բնույթը: ՀՀ սահմանադրական դատարանի հիմնավորմամբ՝ բնօգտագործման վճարը, որպես գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր է, և այդ

վճարի գանձման իրավական հիմքը լիազորված մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված *քաղաքացիաիրավական պայմանագիրն է*: ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումը հիմնավորում է նաև 2008թ. մայիսի 13-ին կայացրած 753 որոշմամբ, որում, անդրադառնալով ՀՀ սահմանադրության 45-րդ հոդվածում ձևակերպված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, առանձնացրել է դրան բնորոշ հետևյալ հատկանիշները.

1. հանրային բնույթը,
2. մուտքագրումը պետական կամ համայնքային բյուջե:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը ընդհանրացված կարելի է շարադրել հետևյալ կերպ. բնօգտագործման վճարները չունեն հանրային բնույթ, դրանք ձևավորվում են քաղաքացիաիրավական պարտավորությունների շրջանակում, հետևաբար Օրենքի 7-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջներին:

Հարաբերությունները կարգավորող օրենսդրության շրջանակը

Ընդերքօգտագործման ոլորտում բնօգտագործման վճարների գանձման իրավական հիմքը ձևավորվում է հետևյալ իրավական ակտերից. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք⁴, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ Կոնցեսիայի մասին օրենք)⁵, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք⁶, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք⁷, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշում⁸, «Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության որոշում⁹, «Շրջակա միջա-

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վայրի պահպանության դրամազլխի օգտագործման և հատկացումների չափերի որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում¹⁰, «Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմիններ սահմանելու, դրանց իրավասությունները սահմանազատելու և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ու «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշում¹¹, «Կոնցեսիոն պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում¹² և այլն:

Կարծում ենք՝ Օրենքի 2-րդ հոդվածում «պարտադիր» բառի բացակայությունը դեռևս չի նշանակում, թե բնօգտագործման վճարները պարտադիր վճարներ չեն: Հակառակ պարագայում ինչպե՞ս մեկնաբանել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետը, համաձայն որի՝ «Ստուգումները կարող են լինել թեմատիկ կամ համալիր: Թեմատիկ են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների վճարման և հաշվարկման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները...», կամ՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, համաձայն որի՝ պետական բյուջեի հարկային եկամուտներ են համարվում բնապահպանական և բնօգտագործման վճարները, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից ստացվող ռոյալթիները, կոնցեսիոն վճարները և այլն: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը բնօգտագործման վճարը չի սահմանում

որպես ինքնուրույն հարկատեսակ, և որ Օրենքը նշված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտն է:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ տարբեր օրենքներում հակասական դրույթների առկայությունը հետևանք է օրենսդրի անհետևողականության: Այս հարցում մենք համակարծիք ենք: Սակայն վստահ չենք, որ այդ անհետևողականությունը չի դրսևորվել նաև Օրենքի 2-րդ հոդվածում բնօգտագործման վճարի հասկացությունը սահմանելիս: Գուցե վճարի այդ տեսակի պարտադիր լինելը կանխորոշված է այն օրենսդրական ակտերով, որոնցում դա դիտարկվում է որպես այդպիսին:

Էկոլոգիական բարեկեցության շահը որպես հանրային շահ

Քանի որ սահմանադրական արդարադատության ոլորտում միայն նորմատիվային սկզբունքներով առաջնորդվել չենք կարող, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ պարտադիր վճարների հիմքում ընկած հարաբերությունների հանրային բնույթին, որը ՀՀ սահմանադրական դատարանի քննարկվող որոշման հաջորդ կարևոր հիմնավորումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի N 753 որոշման համաձայն՝ ՀՀ սահմանադրության 45-րդ հոդվածում ձևակերպված պարտադիր վճարներն ունեն հանրային իրավական բնույթ, եթե դրանք ձևավորվում և վճարվում են հանրային իրավական հարաբերությունների շրջանակում:

Հայտնի է, որ հանրային և մասնավոր իրավահարաբերությունները միմյանցից տարանջատելու գլխավոր չափանիշը հանրային շահն է:

Հանրային շահի ընդհանուր սեռային հասկացությունը զուգորդվում է այնպիսի տեսակային նորմատիվ հասկացությունների հետ, ինչպիսիք են ազգային անվտանգությունը, հասարակության և պետության, ժողովրդի, ազգի և բնակչության շահը: Գիտնականները տեսակային շահերի թվին են դասում նաև էկոլոգիական բարեկեցության շահը¹³:

Ցիվիլիստների կարծիքով, *մասնավոր շահը*, որպես կանոն, ծագում, սկիզբ է առնում սեփականության հարաբերություններից: Մասնավոր իրավունքը մասնավոր սեփականության իրավաբանական արտահայտությունն է, իսկ նմանատիպ հարաբերություններ կարգավորող նորմերի համակարգը ստացել է բավական պայմանական անվանում՝ մասնավոր իրավունք: Որոշ գիտնականների հարցադրումները վերաբերում են այն խնդրին, թե ինչ մասով և ինչ չափով է սեփականության իրավունքը մարմնավորում մասնավոր իրավունքը: Որքանով է նման դատողությունը հիմնավոր բնական ռեսուրսների՝ որպես սեփականության իրավունքի օբյեկտի, այդ թվում նաև մասնավոր սեփականության իրավունքի օբյեկտի մասով, քանի որ անհնար է չնկատել այն տարբերությունը, որ գոյություն ունի ազգային հարստություն համարվող բնական ռեսուրսների և դրանք վերամշակող գործարանի միջև¹⁴:

Պետության մասնակցությամբ ցանկացած հարաբերություն ունի առանձնահատկություններ, որոնք բխում են պետության՝ որպես հանրային շահի ներկայացուցչի իրավական կարգավիճակից:

ՀՀ-ում ներկայումս գնահատված չէ ազգային հարստության կազմում բնառեսուրսային կապիտալը, և միայն իրականացվում է առանձին ռեսուրսների տնտեսական արժեքի գնահատում. օրինակ՝ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում նախկինում գործող օգտակար հանածոների պաշարների գնահատման գործակալության տվյալներով ՀՀ ընդերքի օգտակար հանածոների պաշարները 2006 թվականի դրությամբ գնահատվել են 170 միլիարդ դոլար:

Հայաստանի վիճակագրական տարեգրքի (2008 թվական) կետ 150 «բնապահպանական և բնօգտագործման վճարներ» մասի համաձայն՝ այդ վճարները, ըստ 2007 թվականի տվյալների, կազմել են 4105.9 մլրդ, որից 3533.2 մլրդ՝ բնօգտագործման վճարների, իսկ 572.7 մլն՝

բնապահպանական վճարների մասով¹⁵:

Հիշատակված վիճակագրական և այլ տվյալները ևս վկայում են, որ ընդերքը որպես ազգային հարստություն օգտագործման տրամադրելիս պետությունը չի կարող հետապնդել մասնավոր շահ:

Ընդերքօգտագործման իրավունքի ծագման հիմքը

Վիճարկելի է նաև ընդերքն օգտագործման տրամադրելու ընթացքում հանքային սուբյեկտիվ իրավունքի կրողի և պետության միջև առաջացող հարաբերությունների զուտ քաղաքացիաիրավական լինելու հանգամանքը:

ՀՀ տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների որոշ տեսակների կատարումը, օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը, ստորերկրյա կառույցների շինարարությունը և շահագործումը *ենթակա են լիցենզավորման*:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործողներ կարող են լինել իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք ձեռք են բերել օգտակար հանածոների, այդ թվում նաև՝ նավթի, գազի, ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործման, ինչպես նաև հանքային հումքի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած թափոնների մշակման իրավունք, *այսինքն՝ թույլտվություն*:

Ընդերքօգտագործման ընթացքում կիրառվում են թույլտվությունների հետևյալ տեսակները. ա) հանքարդյունահանման լիցենզիա, բ) հանքարդյունահանման հատուկ լիցենզիա, գ) ուսումնասիրության լիցենզիա, դ) ուսումնասիրության հատուկ լիցենզիա (Կոնցեսիայի մասին ՀՀ օրենք, 3-րդ հոդված):

Եթե ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, իսկ այնուհետև ընդերքօգտագործման յուրաքանչյուր ձևի կարգը սահմանող 17-րդից 43-րդ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հողվածների բովանդակությանը ծանոթանալուց հետո առավել հակված ենք որպես ընդերքօգտագործման իրավունքի ծագման հիմք համարել և՛ լիցենզիան, և՛ պայմանագիրը (իրավունքի ծագման փաստակազմ), ապա Կոնցեսիայի մասին օրենքի «Հիմնական հասկացություններ» վերտառությամբ 3-րդ հոդվածում լիցենզիաների և պայմանագրերի տարբեր տեսակների բնորոշումներից կարելի է անել մեկ եզրակացություն. ընդերքօգտագործման նպատակով տրվող *լիցենզիան գրավոր թույլտվություն է, որն իրավունք է վերապահում որոշակի սուբյեկտին սկսելու հանքային իրավունքի ձևավորման գործընթաց*, իսկ ընդերքօգտագործման նպատակով կնքվող *պայմանագիրը գրավոր համաձայնություն է, որով կամ սահմանվում են իրավունքի տրամադրման պայմանները և կողմերի իրավունքներն ու պարտականությունները, կամ կարգավորվում են կողմերի՝ Կոնցեսիայի մասին օրենքով և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:*

Կոնցեսիայի մասին օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ լիցենզիան տրվում է անմիջապես՝ օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո: Հանքային իրավունք կրողի եւ լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային պայմանագիր: Լիցենզային պայմանագիրը, ինչպես նաև սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված նախագիծը տվյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասն են կազմում:

Օրենսդրության վերլուծության հիման վրա ձևավորված մեր ընդհանուր տեսակետն այն է, որ ընդերքօգտագործման իրավունքի ծագման հիմքը տրամադրվող լիցենզիան է, իսկ պայմանագիրը կարգավորում է այդ իրավունքի իրականացման

կապակցությամբ կողմերի միջև ձևավորվող հասարակական հարաբերությունները: Կարելի է եզրակացնել նաև, որ ընդերքն օգտագործման տրամադրելու գործընթացում հանրային-իրավական միջոցը՝ լիցենզիան, մասնավոր-իրավական միջոցը՝ պայմանագիրը, հավասարազոր են, եթե չլիներ մի այնպիսի գիտական հասկացություն, ինչպիսիք վարչական պայմանագիրն է:

Վարչական պայմանագիրը կառավարչական գործառույթների իրականացման վարչաիրավական ձև է: Դա հանրային պայմանագրի ինքնուրույն տեսակ է և ունի առանձնահատկություններ: Վարչական պայմանագրի էական հատկանիշներից կարելի է նշել հետևյալները. ա) պարունակում է հատուկ պայմաններ, որոնք դուրս են քաղաքացիաիրավական պայմանագրերի կարգավորման շրջանակներից, բ) ընդգրկում է վարչական մարմինների հսկողական և վերահսկողական, ինչպես նաև ձեռնարկությունների նկատմամբ տնտեսական սանկցիաներ կիրառելու լիազորությունների վերաբերյալ դրույթներ: Ռուս հեղինակները նշում են վարչական պայմանագրին բնորոշ մի քանի այլ հատկանիշներ ևս՝ առաջարկելով դրանց վերաբերյալ ապագայում ընդունվելիք օրենքում ներառել բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիոն պայմանագրի վերաբերյալ դրույթներ¹⁶: Վարչական պայմանագրերի այս և մնացած այլ առանձնահատկությունները գրեթե անբողջությամբ արտացոլված են «Կոնցեսիոն պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ:

Քննադատական վճարները՝ որպես պետության ոչ հարկային եկամուտները

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 44-րդ հոդվածում սահմանվում են ընդերքօգտագործման հետևյալ վճարները. 1) մրցույթի մասնակցության, 2) ընդերքի մասին տրամադրված երկրաբանական տեղեկատվության, 3) ընդերքի օգտագործման (բնավճար, ռոյալթի), 4) պետական բյուջեի

միջոցներով կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերի փոխհատուցման վճարներ: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 44-րդ հոդվածը հիմք ընդունելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհարկի նեղացրել է ընդերքաօգտագործման վճարների շրջանակը՝ այդպիսին համարելով միայն ընդերքի օգտագործման վճարները (բնավճար և ռոյալթի): Մինչդեռ ընդերքաօգտագործման վճարներ են հոդված 44-ում նախատեսված բոլոր վճարները: Ինչ վերաբերում է բնավճարներին և ռոյալթիներին, ապա դրանք օգտակար հանածոների (մետաղական և ոչ մետաղական) արդյունահանման դիմաց գանձվող վճարներ են: ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ ընդհանրապես չի հիշատակվում ջրային ռեսուրսների, կենսառեսուրսների օգտագործման դիմաց գանձվող վճարների մասին, որոնք ևս բնօգտագործման վճարների մաս են կազմում:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ընթացքում գանձվող վճարների իրավական կարգավորման սկզբունքները սահմանված են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, իսկ մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների և գունագեղ քարերի արդյունահանման դիմաց գանձվող ռոյալթիների, կոնցեսիոն վճարների, բոնուսի և ռեկուլտիվացիոն երաշխիքային վճարների գանձման պայմանները՝ Կոնցեսիայի մասին օրենքով: Նշված իրավական ակտերի համապատասխան հոդվածների ընդհանուր վերլուծությունից անգամ ակնհայտ է, որ ընդերքի՝ որպես առանձնահատուկ օբյեկտի օգտագործման դիմաց գանձվող վճարների հաշվարկման, վճարման կարգը սահմանված է օրենսդրությամբ, իսկ պայմանագրով յուրաքանչյուր դեպքի համար որոշակիացվում են միայն վճարման ենթակա գումարի չափերը: Միաժամանակ, Կոնցեսիայի մասին օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, «Կոնցեսիայի պայմանագ-

րով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի նկատմամբ հարկման այլընտրանքային եղանակի ընտրության սահմանումը, ընդ որում, անկախ հարկման ընտրված եղանակից՝ ռոյալթիները և ընդերքի տվյալ տեղամասի համար սույն օրենքով սահմանված այլ վճարները ենթակա են *պարտադիր վճարման*»:

«Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված են, օրինակ՝ կենսապաշարներից ծառերի յուրաքանչյուր տեսակի խորանարդ մետրի օգտագործման դիմաց գանձվող վճարները: Նույնը վերաբերում է նաև ջրային ռեսուրսներին, ընդերքի օգտակար հանածոներին, կենսառեսուրսների մյուս տեսակներին: Եթե քաղաքացիաիրավական հատուցելի հարաբերությունների պայմաններում, որպես կանոն, կողմերի՝ իրենց պարտականությունների կատարման դիմաց ստացվող վճարի կամ այլ հանդիպական կատարման չափերը կարող են միմյանցից որոշակիորեն տարբերվել (քանի դեռ այդ տարբերությունը չի հատել գործարքի անվավերության ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նշագրված սահմանը), ապա բնօգտագործման վճարների դրույքաչափերը ուղղակիորեն նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ և միայն յուրաքանչյուր դեպքում դրանք որոշակիացվում են՝ ելնելով տվյալ գործունեության առանձնահատկություններից:

Վերը շարադրվածը թույլ է տալիս արձանագրելու, որ բնօգտագործման վճարները ոչ հարկային եկամուտներ են, որոնց բնորոշ են եկամուտների այդպիսի տեսակի առանձնահատկությունները. իրավահարաբերության սուբյեկտների փոխհարձ իրավունքներով և պարտականություններով օժտված լինելը, վճարների գանձման հիմքերի տարբերությունը, դրանց՝ մեծ մասամբ նպատակային ուղղվածությունը: Ոչ հարկային եկամուտները

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կարող են լինել պարտադիր և կամավոր: Պետության ոչ հարկային եկամուտների մեջ կամավոր վճարումները հիմնված են համապատասխան սուբյեկտների ազատ կամահայտնության վրա: Լրացուցիչ դրամական միջոցների ներգրավման մեթոդների թվին են դասվում պետական արժեթղթերի թողարկումը, պետական վիճակախաղերի անցկացումը և այլն: Ոչ հարկային եկամուտների կազմի մեջ մտնող վճարների մյուս զգալի մասը դասվում է պարտադիր վճարների թվին¹⁷: Իհարկե, նշված գիտական նոտեցումն ամրագրված է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում, որում տրվում է պետական եկամուտների աղբյուրների այլ դասակարգում¹⁸:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ «...ի տարբերություն բնօգտագործման վճարի՝ պետության կողմից բնապահպանական վճարի հավաքագրումը նպատակաուղղված է բնապահպանական միջոցառումների իրականացմանը, որում էլ արտահայտվում է վճարի այդ ձևի հանրային, այսինքն՝ պարտադիր բնույթը»: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել միայն, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտները հետագայում կարող են օգտագործվել միմիայն հանրային նպատակներով: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բյուջետային ծախսերը պետության և տեղական ինքնակառավարման խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղվող դրամական միջոցներ են: Նույն օրենքի «Պետական բյուջեի ծախսերի ուղղությունները» վերտառությամբ 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերը և ծախսերը: Այս պարագայում խնդիրը միայն բնօգտագործման վճարների հասցեական օգտագործման մեջ է, ինչը ՀՀ օրենսդրությամբ

ամրագրում չի ստացել:

Եզրակացություններ և առաջարկներ

Այս հոդվածը շարադրման հիմնական դրդապատճառը ՀՀ Կառավարության՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակումն էր, որի 1-ին հոդվածով առաջարկվում էր Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «վճարվող» բառից հետո ավելացնել «պարտադիր» բառը: Օրենսդրական նախաձեռնությունը ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերով հանձնաժողովի նիստում նախնական քննարկման ժամանակ մերժվեց ՀՀ Ազգային ժողովի իրավասու պաշտոնյայի այն պատճառաբանությամբ, որ այդ օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկվող փոփոխությունը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի այն պահանջին, որ օրենքները պետք է համապատասխանեն ՀՀ սահմանադրությանը և չպետք է հակասեն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

Թեպետ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ արձանագրում է, որ ՀՀ օրենսդրության համակարգում նման վիճակը պետք է բացառվի, և հստակ կանոնակարգման խնդիրը պետք է լուծվի ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության շրջանակներում, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն արդեն իսկ խոչընդոտում է ՀՀ Կառավարության կողմից ոլորտի բարեփոխման ուղղությամբ տարվող քաղաքականությանը: Իհարկե, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը չպետք է գնահատել միայն այս տեսանկյունից. այն կարևոր նշանակություն ունի օրենսդրական կարգավորման առկա խնդիրների վերհանման առումով:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել, որ բնօգտագործման վճարները պարտադիր վճար-

ներ են հետևյալ հիմքերից ելնելով.

- ընդերքն օգտագործման տրամադրելու ընթացքում առաջացող հարաբերությունները ունեն ոչ թե մասնավոր-իրավական, այլ հանրային-իրավական բնույթ, քանի որ այդ գործընթացում կիրառվում են հանրային-իրավական միջոցներ՝ լիցենզավորում և վարչական պայմանագիր,
- ընդերքն օգտագործման տրամադրելիս պետությունը հետապնդում է ոչ թե մասնավոր, այլ հանրային շահ,
- բնօգտագործման վճարները պետության ոչ հարկային եկամուտներն են, ուստի դրանց նկատմամբ պետք է սահմանվի և կիրառվի համապատասխան իրավական ռեժիմ:

Հիմք ընդունելով այս չափանիշները՝ անհրաժեշտ է բարեփոխել ՀՀ համապատասխան օրենսդրությունը: Իհարկե, այս ուղղությամբ ընթանալը բավական բարդ է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջի առկայության պարագայում: Սակայն ստեղծված իրավիճակի միակ ելքը տեսնում ենք ոլորտի համակարգային օրենսդրական փոփոխությունների իրականացման մեջ, ինչը նույնպես բխում է ՀՀ սահմանադրական դատարանի այն դիրքորոշումից, որ օրենսդրության առկա հակասությունները պետք է վերացնել հետևողական օրենսդրական փոփոխությունների միջոցով:

¹ St'u Kees Van Kersbergen, Frans Van Waarden "Governance' as a bridge between disciplines: Cross-disciplinary inspiration regarding shifts in governance and problems of governability, accountability and legitimacy" *European Journal of Political Research* N 43, 143–171. 2004, էջ 143:

² ՀՀՊՏ 1998.12.31/33(66):

³ ՀՀՊՏ 1997.05.20/11:

⁴ ՀՀՊՏ 11.12.02./54(229):

⁵ ՀՀՊՏ 2002.11.29/52(227):

⁶ ՀՀՊՏ 1997.08.11/18:

⁷ ՀՀՊՏ 2000.06.23/14(112):

⁸ ՀՀՊՏ 2001.10.31/33(165):

⁹ ՀՀՊՏ 1998.12.31/33(66):

¹⁰ ՀՀՊՏ 2003.10.01/49(284):

¹¹ ՀՀՊՏ 2003.04.30/23(258):

¹² ՀՀՊՏ 2003.09.03/45(280):

¹³ St'u Нешатаева Т.Н. О соотношении публичного и частного в праве // Публичное и

частное право: проблемы развития и взаимодействия, законодательного выражения и юридической практики. Материалы Всероссийской научно-практической конференции (23-24 апреля 1998г.). Екатеринбург, 1999, էջ 38:

¹⁴ St'u նույն տեղը, էջ 38:

¹⁵ St'u «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», - 2008, էջ 196:

¹⁶ St'u Бахрах Д. Н., Россинский Б. В., Стариков Ю. Н. Административное право: учебник для вузов., 3-е изд., пересмотр. и доп. – М., 2007, էջ. 423-432:

¹⁷ St'u Շափիրյան Է. Է., Մուրադյան Ա.Վ, Ֆինանսական իրավունք: Ուս. ձեռնարկ: Եր. 2009, էջ 214-215:

¹⁸ Ղասակարգման մասին ավելի մանրամասն տե՛ս Пашкевич Д.А. Бюджетное право. Учебник. М., 2008, էջ 12:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**Гор Мовсисян***Аспирант кафедры гражданского
процесса ЕГУ***Gor Movsisyan**
**Aspirant of the Chair of Civil
Procedure****Платежи за природопользова-
ния как предмет
конституционного правосудия**

В статье автором сделан анализ проблемы обязательного или необязательного характера платежей за природопользование, что имеет решающее значение для повышения эффективности функционирования системы платежей, а также для решения вопроса, касающегося регулирования общественных отношений в этой сфере законом или решением Правительства РА.

Для выявления сути поставленной проблемы были подвергнуты анализу содержательные особенности отношений, возникающих по поводу платежей за природопользование, и некоторые научные источники, законодательные акты РА в этой сфере, решение Конституционного суда РА N 816.

В результате исследования системы вышеуказанных источников и анализа отношений, возникающих по поводу предоставления недр для пользования, автор приходит к выводу, что государство преследует только публичный интерес во всех общественных отношениях, а общественные отношения в этой сфере имеют публичный характер. Как результат исследования, констатируется тот факт, что платежи за природопользование являются разновидностью обязательных платежей, поэтому системное изменение законодательства РА о платежах за природопользования должны исходить из вышеперечисленных принципов.

**Nature utilization payments as a
subject to the constitutional justice**

In the presented article the author is analyzing the legal issues of nature utilization payment as a sort of obligatory or non-obligatory payments, which is essential for the improvement of the system of the payments and for regulation of the relevant public relations by the law or Governmental decision of RA.

To uncover the essence of the problem some theoretical sources, appropriate legislation of RA, decision N 816 of the Constitutional court of RA and the substantial peculiarities of the public relations in this filed have been a subject for analyze.

The following findings were made as a result of the research; the government pursues public interests in each matter of its activity, and the relations in this filed has public nature. As a consequence nature utilization payments are non-tax incomes, therefore the systemized amendments to the current legislation should take due consideration the above mentioned principles.

Հարգելի հեղինակներ,

Ամսագիր նյութեր ուղարկելիս խնդրում ենք պահպանել հետևյալ պահանջները.

Ամսագրի խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկի միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային կրիչի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն, առավելագույնը 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ բոլոր տողատակերը և բացթողումները:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները. ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն), ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ, 2003 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը: Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել նյութերի ընդհանուր ուղղագրությունը, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն ամսագրում՝ հեղինակի անուն և ազգանունը անբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր ստորագրում է նյութը, նշում կոնտակտային տվյալները:

Հոդվածներն անհրաժեշտ է ուղարկել melk_d@yahoo.com էլեկտրոնային փոստով: